



WWF

REPORT

2016

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂՅՐԱՀԱՄ ՋՐԵՐԻ ԷԿՈԶԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ
ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



2016



Bundesministerium
für Umwelt, Naturschutz,
Bau und Reaktorsicherheit

Umwelt
Bundesamt

Այս հրապարակումը «Հարավային Կովկասում քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի պահպանման ռազմավարություններ մշակելու աջակցություն կառավարություններին» տարածաշրջանային ծրագրի արդյունքներից մեկն է: Ծրագիրը ֆինանսավորվել է Գերմանիայի շրջակա միջավայրի, բնության պահպանության և ատոմային անվտանգության Դաշնային նախարարության (BMU) կողմից և ղեկավարվել Դաշնային բնապահպանության գործակալության կողմից (UBA): Հրապարակման մեջ հեղինակների կողմից արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն դոնոր կազմակերպության տեսակետների հետ:

Հեղինակներ՝

Ինեսսա Գաբայանը Հայաստանի ազգային խորհրդատուն է, տեխնիկական գիտությունների թեկնածու, բնապահպանական խնդիրների վերաբերյալ ավելի քան 20 տարվա խորհրդատվության փորձով՝ հատկապես ուղղված ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության հարցերին:

Քրիստոֆեր Հեդլին միջազգային խորհրդատու է, բարձր որակավորման իրավաբան, IUCN բնապահպանական իրավունքի հանձնաժողովի անդամ, ավելի քան 40 երկրներում շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների կառավարման, ԵՄ և միջազգային բնապահպանական իրավունքի մոտ 20 տարվա աշխատանքային փորձով:

© 2015 Բնության համաշխարհային հիմնադրամ (WWF Հայաստան, WWF Կովկասյան ծրագրերի գրասենյակ, WWF Գերմանիա)

Բոլոր իրավունքները պաշտպանված են

© 2015 Առաջին էջի լուսանկարը՝ Ինեսսա Գաբայանի. Արարատյան հարթավայր, Հայաստան

Ձևավորող՝ Դավիթ Գաբունիա

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	iv
ՆԱԽԱԲԱՆ	v
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	vi
ԱՄՓՈՓԱԳԻՐ	1
ՄԱՍ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
1.1 Հայաստանի ջրային ոլորտը	5
1.2 Հիմնական վտանգները, մարտահրավերները և հնարավորությունները	7
1.3 Քաղաքական և օրենսդրական համատեքստ	7
ՄԱՍ 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ	9
2.1 Միջազգային համաձայնագրեր ջրի մասին	10
2.2 Պահպանության միջազգային համաձայնագրեր	10
2.3 Շրջակա միջավայրի մասին համաձայնագրեր	11
2.4 ԵՄ օրենսդրություն	11
2.5 Այլ օրենսդրություններ	13
ՄԱՍ 3. ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	14
3.1 Համադրումը Ջրի շրջանակային դիրեկտիվին (ՋԾԴ)	14
3.2 Համադրումը Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվին	25
3.3 Համադրումը Շրջակա միջավայրի որակի ստանդարտների դիրեկտիվին	28
3.4 Համադրումը Նիտրատների դիրեկտիվին	30
3.5 Համադրումը Ջրհեղեղների դիրեկտիվին	31
3.6 Համադրումը թռչունների և բնական միջավայրի դիրեկտիվներին	32
3.7 Համադրումը Թռչունների օրենսդրության հետ	34
ՄԱՍ 4. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԻՐԵԿՏԻՎԻՆ	38
4.1 Մեկնաբանություններ և եզրակացություններ	38
4.2 Առաջարկություններ	40

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

AEWA	ԱԵԶԹՀ	Աֆրիկյան-Եվրասիական չվող ջրային թռչունների պահպանման համաձայնագիր
BD	ԹԴ	Թռչունների մասին դիրեկտիվ
Bern Convention	Բեռնի կոնվենցիա	Եվրոպայի խորհրդի կոնվենցիան եվրոպական վայրի կենդանական և բուսական աշխարհի ու բնական միջավայրերի պահպանության մասին
CBD	ԿԲԿ	Կենսաբազմազանության մասին կոնվենցիա
CMS	ՄՏԿ	Միգրացվող տեսակների մասին կոնվենցիա
DRM	ԱՌԿ	Աղետների ռիսկի կառավարում
EIA	ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
EQSD	ՇՄՈՄԴ	Շրջակա միջավայրի որակի ստանդարտների դիրեկտիվ
EU	ԵՄ	Եվրամիություն
IWRM	ԶՌՀԿ	Զրային ռեսուրսների համապարփակ կառավարում
IUCN	ԲՊՄՄ	Բնության պահպանության միջազգային միություն
FD	ՎԴ	Վարարումների մասին դիրեկտիվ
HD	ԲՄԿ	Բնական միջավայրի մասին դիրեկտիվ
MEA	ՇՄԲՀ	Շրջակա միջավայրի մասին բազմակողմանի համաձայնագիր
ND	ՆԴ	Նիտրատների մասին դիրեկտիվ
NVZ	ՆԽԳ	Նիտրատներից խոցելի գոտի
PPP	ՄՀՀ	Մասնավոր-հանրային համագործակցություն
Ramsar Convention	Ռամսարի կոնվենցիա	Միջազգային նշանակություն ունեցող խոնավ տարածքների կոնվենցիա, հատկապես որպես ջրով թռչունների բնական միջավայր
RBMP	ԳԿՊ	Գետավազանային կառավարման պլան
SEA	ՇՄՌԳ	Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատում
SBSTTA	SBSTTA	Գիտական, տեխնիկական և տեխնոլոգիական խորհրդատվության օժանդակ մարմին
UBA	ՇՄԴԳ	Շրջակա միջավայրի դաշնային գործակալություն (Գերմանիա)
UN	ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
UN Watercourses Convention	ՄԱԿ-ի ջրահոսքերի մասին կոնվենցիա	ՄԱԿ-ի «Միջազգային ջրահոսքերի ոչ նավագնացային օգտագործման իրավունքի մասին կոնվենցիա
CITES	Բոննի կոնվենցիա	Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին Անհետացման
UNECE	ՄԱԿԵՏՀ	Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողով
UNECE Water Convention	ՄԱԿ ԵՏՀ կոնվենցիա	ՄԱԿ ԵՏՀ Անդրսահմանային ջրահոսքերի և միջազգային լճերի պահպանության ու օգտագործման կոնվենցիան
UWWTD	ՔԿՄԴ	Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվ
UWW	ՔԿԶ	Քաղաքային կոյուղաջրեր
WFD	ԶՇԴ	Զրի շրջանակային դիրեկտիվ
WSSD	ԿԶՄԳ	Կայուն զարգացման համաշխարհային զագաթաժողով
WRMA	ԶՌԿՄ	Զրային ռեսուրսների կառավարման մարմին
WSC	ԶԿԸ	Զրմուղկոյուղի ընկերություն
WUA	ԶՕԸ	Զրօգտագործողների ընկերություն

ՆԱԽԱԲԱՆ

Այս հաշվետվությունը «Հարավային Կովկասի երկրներում քաղցրահամ ջրերի էկոհամակարգի պահպանությունը և ջրային ռեսուրսների օգտագործումը կառավարող իրավական հիմքերի համադրությունը ԵՄ բնապահպանական օրենսդրությանը» տարածաշրջանային ուսումնասիրության ազգային բաղադրիչն է: Ուսումնասիրությունն իրականացվել է «Հարավային Կովկասում քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի պահպանման ռազմավարություններ մշակելու աջակցություն կառավարություններին» տարածաշրջանային ծրագրի շրջանակում: Ծրագիրը ֆինանսական աջակցություն է ստացել Գերմանիայի շրջակա միջավայրի, բնության պահպանության, շինարարության և ատոմային անվտանգության Դաշնային նախարարության (BMUB) կողմից իր «Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների, Կովկասի ու Միջին Ասիայի և ԵՄ հարևան մյուս երկրների շրջակա միջավայրի պահպանության խորհրդատվական աջակցության ծրագրի» միջոցով և ղեկավարվել Դաշնային բնապահպանության գործակալության (UBA) կողմից: Ծրագիրն իրականացվել է WWF Կովկասյան ծրագրերի գրասենյակի, WWF Հայաստանի և WWF Ադրբեջանի գրասենյակների կողմից՝ WWF Գերմանիայի հետ սերտ համագործակցությամբ:

Տարածաշրջանային ծրագիր ուղղված է (i) ուսումնասիրելու Հարավային Կովկասում (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան) քաղցրահամ ջրերի օգտագործումն ու պահպանությունը կարգավորող գոյություն ունեցող ազգային օրենսդրական հիմքերը, (ii) վերլուծելու դրանց համադրությունը Եվրամիության բնապահպանական օրենսդրության հետ, (iii) մշակելու առաջարկություններ տեղական իրավական հիմքերը Եվրամիության համապատասխան բնապահպանական օրենսդրության հետ ներդաշնակեցնելու ուղղությամբ: Ծրագիրը նաև ուղղված է ուժեղացնելու ռեգիոնալ համագործակցությունը Հարավային Կովկասի անդրսահմանային քաղցրահամ ջրերի էկոհամակարգերը պահպանելու համար:

Ուսումնասիրությունը բաղկացած է երեք ազգային (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան) և մեկ տարածաշրջանային հաշվետվությունից

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը գնահատում է Հայաստանի և Եվրամիության քաղաքական ջրերի կենսաբազմազանության պահպանման իրավական և կառավարման մեխանիզմների միջև համապատասխանության աստիճանը: ԵՄ շրջանակային ակտերը ոչ միայն սահմանում են քաղաքական ջրերի էկոհամակարգերի կառավարման ամբողջական ու մանրամասն նկարագրված համակարգ, այլև ինքնին հիմնված են անդրսահմանային ջրերի և/կամ բնապահպանական համագործակցության վերաբերյալ միջազգային համաձայնագրերում սահմանված միջազգայնորեն համաձայնեցված ստանդարտների և սկզբունքների վրա, որոնք կիրառելի են նաև Հայաստանում՝ այն չափով, որքանով որ այն հանդիսանում է կամ մտադիր է դառնալ այդ համաձայնագրերի Կողմ:

Սույն ուսումնասիրությունը դիտարկում է ազգային օրենսդրության, քաղաքականության և ինստիտուցիոնալ դրվածքների համադրությունը ԵՄ օրենսդրության երկու խմբերի հետ՝ հատուկ ուշադրություն բերելով քաղաքական ջրերի էկոհամակարգերի արդյունավետ պահպանության ապահովման համար անհրաժեշտ պահանջներին:

1) Ջրի շրջանակային դիրեկտիվը (ՋԾԴ), ներառյալ ՋԾԴ-ով նախատեսված վարչական կարգավորումների և գետավազանային պլանավորման ու կառավարման մոտեցումներից ելնելով ձեռնարկվելիք հիմնական քայլերի համապատասխանության գնահատումը: Լրացուցիչ դիտարկվել են որոշ առանձնահատուկ ջրային Դիրեկտիվներ, այդ թվում՝ քաղաքային կոյուղաջրերի, շրջակա միջավայրի որակի ստանդարտների, նիտրատների և ջրհեղեղների վերաբերյալ:

2) Հիմնական բնապահպանական օրենսդրությունը՝ Բնական միջավայրերի և Թռչունների վերաբերյալ դիրեկտիվները և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ), Ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) բնապահպանական տեղեկատվության մատչելիության վերաբերյալ դիրեկտիվները:

Հաշվի առնելով սույն հաշվետվության մասշտաբները, ԵՄ օրենսդրության ընդհանուր բարդությունը և մակարդակը, Հայաստանում այդ ոլորտներում օրենսդրության մշակման ներկայիս վիճակը և Հայաստանում ու Վրաստանում նման այլ հաշվետվությունների համար ստանդարտ մեթոդաբանության ապահովման անհրաժեշտությունը՝ ԵՄ օրենսդրության վերլուծությունը անհրաժեշտաբար բարձր մակարդակի վրա է, և ուշադրությունը սևեռում է հիմնական և չափորոշիչային միջոցառումների վրա, որոնք կարող են ձևավորել Հարավային Կովկասում օրենսդրության մշակման ապագա հիմքերը: Հիմնական և չափորոշիչային միջոցառումները վերաբերում են ՋԾԴ-ով նախատեսված գետավազանային կառավարման գլխավոր ինստիտուցիոնալ կառույցների հիմնադրմանը, ջրերի էկոլոգիական "լավ վիճակի" ձեռքբերմանը, ներառյալ պահպանման միջոցառումների ձեռնարկումը և/կամ բնապահպանական վտանգների և ազդեցությունների սահմանափակումը բնապահպանական օրենսդրությամբ:

Վերլուծության նպատակով ընտրված յուրաքանչյուր հիմնական տարրի համար կիրառվել է համադրության գործընթացը՝ համապատասխանության ընդհանուր մակարդակն արտացոլելու նպատակով: Այդ համադրությունն իրականացվել է երեք հիմնական քայլերի միջոցով՝

Քայլ 1. Առկա՞ է արդյոք համարժեք ազգային օրենսդրություն:

Քայլ 2. Արդյո՞ք ազգային օրենսդրությունը մասնակի կամ զգալիորեն ապահովում է ԵՄ պարտավորությունը :

Քայլ 3. Արդյո՞ք ազգային մակարդակով իրականացումը մասնակի կամ զգալիորեն ապահովում է (կամ կարող է ապահովել) ԵՄ պարտավորությունը:

Այս հիմնական չափանիշներից ելնելով համադրության գնահատումը կատարվել է հետևյալ կերպ՝

Ցածր համարժեքություն	Չկա օրենսդրություն, որը կընդգրկի համադրվող ԵՄ չափորոշիչը, կամ օրենսդրությունն առկա է ընդգրկելով նույն տեսակի չափորոշիչը, սակայն դրան վերաբերող դրույթները չեն համապատասխանում ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Մոտ համարժեքության նվաճումը կպահանջի ամբողջապես նոր օրենսդրության ներդրում:
Մասնակի համարժեքություն	Օրենսդրությունն առկա է, ընդգրկելով նույն տեսակի չափորոշիչը, ինչ ԵՄ օրենսդրության մեջ համադրվում է, և ԵՄ չափորոշիչին վերաբերող որոշ տարրեր կարող են սահմանված լինել ազգային չափորոշիչի համար: Իրականացումը կարող է սահմանափակ լինել: Մոտ համարժեքության նվաճումը պահանջում է փոփոխություններ կատարել առկա օրենսդրության և/կամ ինստիտուցիոնալ, վարչական կառուցվածքի մեջ կամ հզորացնել կարողությունները՝ իրականացումը բարելավելու նպատակով:
Մոտ համարժեքություն	Օրենսդրությունն առկա է, ընդգրկելով նույն տեսակի չափորոշիչը, ինչ համադրելի է ԵՄ օրենսդրության մեջ, և ազգային չափորոշիչին վերաբերող տարրերը ապահովում են գրեթե նույն կամ մեծամասամբ նույն արդյունքը, ինչ ԵՄ չափորոշիչի դեպքում է: Կարող են, այդուհանդերձ, դիտարկվել մոտ համարժեքության նվաճմանն ուղղված փոփոխություններ, որոնք սակայն զգալիորեն չեն ազդի ազգային չափորոշիչի գործողության վրա:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Համադրումը Ջրի շրջանակային դիրեկտիվին

Իրավասու մարմնի նշանակում	Բարձր համարժեքություն
Վարչական մեխանիզմների ստեղծում միջազգային գետերի, լճերի և առափնյա ջրերի համար	Բարձր համարժեքություն
Գետավազանային տարածքների բացահայտում	Բարձր համարժեքություն
Գետավազանային տարածքների բնութագրերի բացահայտում	Մասնակի համարժեքություն
Ջրի որակի մոնիթորինգի ծրագրերի ստեղծում	Մասնակի համարժեքություն
Գետավազանային կառավարման պլանների պատրաստում	Մասնակի համարժեքություն
Միջոցառումների ծրագրի պատրաստում	Ցածր համարժեքություն

Սկզբունքորեն, ազգային օրենսդրությունն արտացոլում է ՁԾԴ-ի ընդհանուր ինստիտուցիոնալ շրջանակը: Մասնավորապես, կա նշանակված իրավասու մարմին, որն աջակցվում է համապարփակ ինստիտուցիոնալ շրջանակով: Կարելի է վիճել, որ ինստիտուցիոնալ շրջանակը չափից ավել բարդ է, քանի որ կան բազմաթիվ մարմիններ, որոնք երբեմն միմյանց կրկնում են: Կարելի է վիճել նաև, որ շրջանակի «հիմնական ծանրությունը» վերին մակարդակում է, ինչը նշանակում է, որ հիմնարկները կենտրոնացված են, և հիմնական գործունեությունը չի իրականացվում գետավազանային մակարդակով:

Ինչ վերաբերում է գետավազանային պլանավորմանը, չնայած Հայաստանը շարժվում է այդ ուղղությամբ, առ այսօր առաջընթացը մեծապես ծրագրի վրա է հիմնված: Անհրաժեշտ է պաշտոնապես ամրագրել գետավազանային կառավարումը և պլանավորումը:

Համադրումը Քաղաքային կեղտաջրերի (ՔԿՋ) մաքրման դիրեկտիվին

Քաղաքային կոյուղաջրերի հավաքման և մաքրման գնահատում	Ցածր համարժեքություն
Զգայուն տարածքների և ազլումերացիաների բացահայտում	Ցածր համարժեքություն
Սկզբնական կարգավորման կամ լիազորման համակարգի ստեղծում	Ցածր համարժեքություն
Մոնիթորինգի ծրագրեր	Մասնակի համարժեքություն

Ներկայիս իրավական շրջանակի պայմաններում համադրությունը ԵՄ օրենսդրության հետ ցածր է: Մասնավորապես, չկա ՔԿՋ-երի հավաքման և մաքրման համակարգերի մանրամասն գնահատում, իսկ օրենսդրությունը ներկայումս չի նախատեսում զգայուն տարածքների և ազլումերացիաների բացահայտում:

Իրավական և վարչական շրջանակը համապատասխանեցնելու համար հիմնական սկզբնական գործողությունները հետևյալն են՝ մշակել քաղաքային կոյուղաջրերի հավաքման և մաքրման վիճակի ամբողջական գնահատում, պաշտոնապես ձևակերպել համակարգեր, որոնք կստեղծեն, կվերլուծեն և կփոխանակեն գնահատումից ստացված տվյալները, մասնավորապես, որպեսզի դրանք հնարավոր լինի օգտագործել գետավազանային պլանավորման մեջ, որոշել զգայուն տարածքները և սահմանել ընթացակարգեր դրանց կառավարման ու մոնիթորինգի համար: Բացի այդ, քաղաքային կոյուղաջրերի բացթողումների ներկայիս լիցենզավորման վերահսկման ակնկալվող ընդլայնումը կարևոր քայլ կհանդիսանա աղտոտման վերահսկման գործում:

Համադրումը Շրջակա միջավայրի որակի ստանդարտների դիրեկտիվին

Շրջակա միջավայրի որակի ստանդարտների կիրառում ջրային ռեսուրսների նկատմամբ	Մասնակի համարժեքություն
«Առաջնահերթ» (աղտոտող) նյութերի և սահմանային կոնցենտրացիաների որոշում	Մասնակի համարժեքություն
Գույքագրում և դիտարկում	Մասնակի համարժեքություն

Օրենսդրությունը նախատեսում է ջրի որակի ստանդարտների անհրաժեշտությունը և պահանջում ցանկացած չափանիշներին համադրության պարտադիր լինելը: Ավելին, ջրի որակի նորմերը սահմանված են բոլոր գետերի ավազանների համար: Այն ներառում է որակի տարրերը, ինչպիսիք են՝ ջերմաստիճանային պայմանները,

թթվածնային, կենսաբանական, հիդրոմորֆոլոգիական, քիմիական և ֆիզիկա-քիմիական, հատուկ սինթետիկ և ոչ սինթետիկ աղտոտիչները և այլն: ԵՄ ՁԵԴ-ով սահմանված առաջնային նյութերը նույնպես ընդգրկված են որակի չափանիշների ցանկում: Չնայած նրան, որ Հայաստանում իրականացվում են տարբեր մոնիթորինգային գործողություններ, որոնք կարող են տալ անհրաժեշտ տվյալներ, չկա տվյալների հաշվառման և վերանայման լիարժեք և գործուն համակարգ: Անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել յուրաքանչյուր գետավազանում բոլոր նյութերի և աղտոտիչների գույքագրման անընդհատ գործընթաց՝ տվյալները հավաքելու, ապա վերանայելու, թարմացնելու և հաշվառելու համար, այդ թվում՝ առկայության դեպքում արտանետումների, արտահոսքերի և կորուստների քարտեզներ, նստվածքներում պարունակվող կոնցենտրացիաներով և բիոտան:

Համադրումը Նիտրատների մասին դիրեկտիվին

Աղտոտված ջրերի բացահայտում և նիտրատների հանդեպ խոցելի գոտիների առանձնացում	Ցածր համարժեքություն
Գործողությունների պլանի և նիտրատների հանդեպ խոցելի գոտիներում առաջավոր գյուղատնտեսական փորձի կանոնների ստեղծում	Մասնակի համարժեքություն
Մոնիթորինգի ծրագիր	Մասնակի համարժեքություն

Չկա աղտոտված ջրերի կամ նիտրատային աղտոտվածության ռիսկային ջրերի բացահայտման համակարգ, ուստի չկա նաև նիտրատների հանդեպ խոցելի գոտիների համակարգ (նիտրատների հանդեպ խոցելի գոտիների առանձնացում չի իրականացվում): Չնայած Հայաստանում չկան գյուղատնտեսությամբ պայմանավորված նիտրատային խոցելի գոտիներ, կառավարությունը պլանավորում է իրականացնել ծրագրեր, որոնք ուղղված կլինեն ոռոգման լավագույն փորձի ներդրմանը, ինչպես նաև կիրառել գյուղատնտեսության մեջ նիտրատների օգտագործման որոշակի նվազագույն ստանդարտներ: Բացի այդ, ընդհանուր մոնիթորինգի ծրագրի շրջանակներում իրականացվում է նաև նիտրատների մոնիթորինգ:

Համադրումը Վարարումների մասին դիրեկտիվին

Վարարումների նախնական գնահատում	Ցածր համարժեքություն
Վարարումների վտանգների քարտեզների, վարարումների ռիսկի քարտեզների կամ վարարումների ռիսկի կառավարման պլանների պատրաստում	Ցածր համարժեքություն

Չնայած վարարումների գնահատման անհրաժեշտությունն ընդունվում է, և նախարարությունն ունի այն ձեռնարկելու պատասխանատվություն, վարարումների գնահատումը ձևակերպելու համար քիչ բան է արվել: Չկան վարարումների վտանգների քարտեզներ, վարարումների ռիսկի քարտեզներ կամ վարարումների ռիսկի կառավարման պլաններ պատրաստելու կոնկրետ իրավական պահանջներ: Ավելին, գործնականում չկա նման քարտեզների կամ պլանների կանոնավոր կամ համակարգված գործընթաց, չնայած իրականացվել են տարբեր ուսումնասիրություններ և գնահատումներ, հիմնականում, տարբեր ծրագրերի միջոցառումների շրջանակներում:

Համադրումը Թոշունների և բնական միջավայրի մասին դիրեկտիվին

Պահպանվող տարածքների առանձնացում տեսակների և բնական միջավայրերի համար	Մասնակի համարժեքություն
Ցամաքային ջրերի պահպանվող տարածքների կադաստրի ստեղծում	Ցածր համարժեքություն
Բնական միջավայրերի և տեսակների հսկողություն	Մասնակի համարժեքություն

Առկա է պահպանվող տարածքների համակարգ, որը սահմանված է մի շարք օրենսդրություններով, սակայն պահպանության ընդհանուր համակարգն ամբողջությամբ չի արտացոլում ԵՄ օրենսդրությունը: Մասնավորապես, չկան մանրամասն ընթացակարգեր պահպանվող տարածքների, բնական միջավայրերի և տեսակների գնահատման և առանձնացման համար: Չնայած օրենսդրությունում կա դրույթ բուսական և կենդանական աշխարհի պահպանվող տեսակների պետական գրանցման համար, առ այսօր նման կադաստր պահվում և, ամեն դեպքում, չկա քաղցրահամ ջրերի պահպանվող տարածքների կադաստր: Գոյություն ունեն համակարգեր պահպանվող բնական միջավայրերին և տեսակներին հետևելու, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, կիրարկել միջոցներ ձեռնարկելու համար, սակայն այս դրույթները ենթակա չեն կատարման մանրամասն պահանջներին և գործնականում չեն իրականացվում կանոնավոր կերպով:

Համադրումը այլ օրենսդրություններին

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում	Բարձր համարժեքություն
Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատում	Մասնակի համարժեքություն
Հանրային մասնակցություն և տեղեկատվության մատչելիություն	Մասնակի համարժեքություն

ՇՄԱԳ և փորձաքննության մասին օրենքն ապահովում է (հիմնականում) այն շրջանակը, որի միջոցով Հայաստանում հնարավոր կլինի զարգացնել արդյունավետ (ԵՄ և ՇՄԱԳ կոնվենցիաների հետ համատեղելի ձևով) ՇՄԱԳ համակարգեր: Սակայն պետք է մշակել ավելի մանրամասն ընթացակարգեր, մասնավորապես, տեղեկատվությունը մատչելի դարձնելու, բնապահպանական հաշվետվությունները հրապարակելու, ՇՄԱԳ գործընթացում հանրության մասնակցությունը հնարավոր դարձնելու, ինչպես նաև որոշումների դիտարկման և հրապարակման հարցերում կառավարության դերն ու պարտականությունները սահմանելու համար:

Առաջարկություններ

Առաջարկություն 1. Գետավազանային կառավարման պլանավորում (ԳԿՊ)

Հիմնական առաջարկությունը դա ԳԿՊ պլանավորման իրավական հիմքի պաշտոնական ամրագրումն է: Ներկայումս պլանները հիմնականում մշակվում են ոչ պաշտոնական՝ ծրագրերի շրջանակներում իրականացվող գործողությունների միջոցով, սակայն ԳԿՊ-ներ մշակելու պահանջը, դրանք մշակելու և ընդունելու միջոցները, դրանց ձևը և բովանդակությունը, իրավական ազդեցությունը պետք է սահմանվեն օրենսդրությամբ: Անհրաժեշտ է ունենալ այդ պլանների կառավարական հավանությունը, որպեսզի ապահովվի կառավարության բոլոր մակարդակներում հետևողական պլանավորման տեսլականը և հետագա ներդրումների հստակ առաջնահերթությունը:

Առաջարկություն 2. Ջրի քանակների և որակի մոնիթորինգի ուժեղացում

Ընդհանուր առմամբ, մակերևութային և ստորերկրյա ջրերի քանակի և որակի մոնիթորինգի գործողությունների համակարգումը և ներդաշնակեցումը կունենա վճռորոշ նշանակություն: Ջրի ծավալների և որակի մասին հուսալի, բարձր որակի և հանրորեն մատչելի տվյալների ժամանակին ստացումը ջրի ամբողջական կառավարման և պլանավորման համակարգի աշխատանքի նախադրյալներն են: Հիմնական առաջարկությունն առնչվում է մակերևութային ջրերի որակի նորմերի որոշմանը, մոնիթորինգի ենթակառուցվածքներում ներդրումների թարմացմանը, մոնիթորինգի համար պատասխանատու տարբեր բաժինների համակարգման ուժեղացմանը և ներդաշնակեցմանը, որոնք հանդիսանում են ավելի սերտ միավորման, մոնիթորինգի ռազմավարության և ազգային ծրագրի մշակման նախապայման:

Առաջարկություն 3. Քաղաքային և գյուղական կեղտաջրերի կառավարման բարելավում

Չնայած քաղցրահամ էկոհամակարգերի մեջ կեղտաջրերի բացթողման ազդեցությունը ճշգրտորեն որոշված չէ, պարզ է, որ անհրաժեշտ է բարելավել կեղտաջրերի հավաքումը և մաքրումը: Հիմնական առաջարկություններն են՝ ընդունել, որ անհրաժեշտ են խոշոր ներդրումներ կոյուղաջրերի մաքրման կայանների վերականգնման և արդիականացման համար՝ ընդգրկելով գյուղական շրջանները, կառուցել կոյուղու կոլեկտորներ, կառուցել հեշտ շահագործվող կոյուղաջրերի մաքրման կայաններ:

Առաջարկություն 4. Շրջակա միջավայրի որակի տվյալների գույքագրման կանոնավոր գործընթացի մշակում

Անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել յուրաքանչյուր գետավազանում բոլոր նյութերի և աղտոտիչների գույքագրման անընդհատ գործընթաց՝ տվյալները հավաքելու, ապա վերանայելու, թարմացնելու և հաշվառելու համար, այդ թվում՝ առկայության դեպքում արտանետումների, արտահոսքերի և կորուստների քարտեզներ, նստվածքներում պարունակվող կոնցենտրացիաներով և բիոտան:

Առաջարկություն 5. Վարարումների և աղետների ռիսկի գնահատման և կառավարման (ԱՌԳԿ) խթանում

Աղետների ռիսկի գնահատման և կառավարման հետ ավելի մեծ առաջնահերթություն պետք է տրվի վարարումների ռիսկերին և մեղմացման պլաններին: Աղետների ռիսկերի կառավարման արդյունավետ մեխանիզմները պետք է իրականացվեն հետևյալ ուղղություններով՝ օրենսդրության բարելավում, անհրաժեշտ տվյալների բազաների ստեղծում և հետագա զարգացում, աղետների հետևանքների որոշման մեթոդների ընտրություն, ԱՌԳ-ի մոդելավորում:

Առաջարկություն 6. Լիցենզավորման և վերահսկման կատարելագործում

Քանի որ ՋՌՀԿ-ի հիմնական կարգավորող գործիքը թույլտվությունների գործընթացն է, կարևոր է զարգացնել ջրօգտագործման թույլտվությունների համակարգը: Թույլտվությունների թողարկման համար պատասխանատու Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունն է (ՋՌԿԳ): Ակնկալվում է, որ այդ գործառնությունը փոխանցվելու է ջրավազանային կառավարման կազմակերպություններին (ՋԿԿ)՝ դրանց կարողությունների զարգացմանը զուգընթաց: Ներկայումս ջրի թույլտվությունների համապատասխանության ապահովումը բավարար չէ ռեսուրսների բացակայության և գործակալության կարողությունների պատճառով:

Համադրությունը ներառում է մոնիթորինգի գործառնություններ և կիրարկման գործողությունների գործառնություններ: Ներկայիս իրավական շրջանակով այդ դերերը և պատասխանատվությունները տարանջատված են: Անհրաժեշտ է ավելի սերտ համագործակցություն ՋՌԿԳ-ի և Բնապահպանական պետական տեսչության (ԲՊՏ) միջև (գերադասելի է օրենսդրորեն սահմանված)՝ գործառնությունների կրկնօրինակումը և մասնակի համընկնումը կրճատելու և մոնիթորինգի արդյունավետությունն ավելացնելու համար:

Համապատասխանության պատմությունը պետք է դարձվի թույլտվության գործընթացի ավելի հստակ մաս: Համապատասխանության խթանումը (և ավելի մեծ վստահությունն ինքնամոնիթորինգի նկատմամբ) թույլ է: Ջրօգտագործման դասակարգումն ըստ քանակի և հոսքերի աղտոտման, այդ թվում այնպիսի սահմանի որոշումը, որի դեպքում ջրօգտագործման թույլտվություն պետք չէ, կնպաստեն գործակալության աշխատանքի արդյունավետությանը:

Առաջարկություն 7. Արդյունաբերության հետ ուժեղ աշխատանքային գործընկերային հարաբերությունների մշակում

Կարևոր է, որ պետական մարմինները բարելավեն իրենց հարաբերությունները արդյունաբերության հետ և որ արդյունաբերությունը ավելի լավ հասկանա շրջակա միջավայրի պահպանության անհրաժեշտությունը և բնապահպանական միջոցառումների տրամաբանությունը՝ ներառյալ սեփական նպաստները: Հիմնականում սրան կարելի է հասնել ընդլայնելով համագործակցությունը և բարելավելով պատասխանատու նախարարությունների կադրային ապահովությունը: Սակայն կան նաև մի շարք կոնկրետ քայլեր, որոնք կարող են ձեռնարկվել, օրինակ՝ մոնիթորինգի բարելավում, կիրարկում և տվյալների հավաքագրում, վերլուծություն և բացահայտում: Աշխատելով միասին արդյունաբերության հետ մշակել կոնկրետ ուղեցույցներ, ներդնել բնապահպանական կառավարման համակարգեր (EMS) և լավագույն փորձը: Նման գործընկերային կարող է կենտրոնանալ հիմնական աղտոտող գործունեության վրա և/կամ ոլորտներում:

ՄԱՍ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Հայաստանի ջրային ոլորտը

1.1.1 Հայաստանի ջրային ռեսուրսները

Հայաստանի Հանրապետությունը 29,800 քառակուսի ընդհանուր տարածքով փոքր, դեպի ծով ելք չունեցող, լեռնային ռելիեֆով և կիսաանապային կլիմայով երկիր է: Ընդհանուր տարածքի մոտ 75% գտնվում է ծովի մակարդակից 1500 մ-ից բարձր: Բնական ջրային ռեսուրսները հասնում են տարեկան 4 միլիարդ մ³-ի, որից տարեկան մոտ 1.6 միլիարդ մ³՝ աղբյուրներից է, 1.4 միլիարդ մ³՝ դենամենների արտահոսքից և համարյա 1 միլիարդ մ³՝ ստորերկրյա ջրերից: Կան հանքային ջրերի ավելի քան 700 բնական և արհեստական աղբյուրներ: Հայաստանի բոլոր գետերը Արաքս և Քուռ գետերի վտակներն են: Գետերի մեծ մասը փոքր են, արագահոս և սնվում են ձնհալքից, աղբյուրներից ու ստորերկրյա ջրերից: Գետային հոսքի ընդհանուր մեծությունը գնահատվում է 6.8 միլիարդ մ³: Մասամբ այն ստացվում է 16.7 միլիարդ մ³ գնահատված տեղումներից, որից 10.8 միլիարդ մ³ գոլորշիանում է: 1.19 միլիարդ մ³ մատչելի ծավալ սկիզբ է առնում երկրից դուրս՝ անդրսահմանային Արաքս և Ախուրյան գետերից¹: Ստորերկրյա ջրերը տալիս են մոտ 4 միլիարդ խոր.մ:


Այս ջրային ռեսուրսներն անհավասարաչափ են բաշխված տարածքային և ժամանակային կտրվածքով: Գետային հոսքի ժամանակային տատանումների խնդիրը լուծելու համար երկրում կառուցվել է 87 ջրամբար՝ 1.4 միլիարդ մ³ ընդհանուր ծավալով: Այս ջրամբարների մեծ մասը նախատեսված է հիմնականում ոռոգան համար:

Հայաստանի տարածքում կա 100-ից ավել լիճ, որոնց մի մասում ջուր չի լինում չոր եղանակի ժամանակ: Իրենց չափով և տնտեսական նշանակությամբ ամենից նշանակալի Սևանա և Արփի լճերն են: Այդ երկու լճերից համապատասխանաբար սկիզբ են առնում Հրազդան և Ախուրյան գետերը: Երկի տարածքում կա 14 մեծ գետավազան:

Հայաստանն ունի նաև ստորերկրյա ջրերի զգալի պաշարներ, որոնք կարևոր դեր են խաղում ջրի ընդհանուր հաշվեկշռում: Խմելու նպատակով օգտագործվող ջրի մոտ 96% և ընդհանուր ջրառի մոտ 40% կատարվում է ստորերկրյա ջրերից: Վճռորոշ նշանակություն ունեցող Արարատյան հարթավայրում խորքային ստորերկրյա ջրերի պաշարները գնահատվում են տարեկան մոտ 1.8 միլիարդ մ³: Այդ ջուրն օգտագործվում է ջրամատակարարման, ոռոգման, ձկնաբուծության և տարածաշրջանում այլ տնտեսական գործունեության նպատակով: Սակայն մոնիթորինգի բացակայության պատճառով ներկայումս տվյալները երկրի ստորերկրյա ջրերի որակի և քանակի մասին սահմանափակ են:

Հայաստանն ունի մի շարք անդրսահմանային ջրեր: Այն Քուռի ավազանում ամենաբարձրադիր երկիրն է, որը սահմանակից է Վրաստանին, Թուրքիային, Ադրբեջանին ու Իրանին՝ հանդիսանալով ջրի խոշոր «արտահանող»: Անդրսահմանային խոշոր ջրային ռեսուրսներն են Դեբեդ գետը (Հայաստան-Վրաստան), Ախուրյանը (Հայաստան-Թուրքիա), Արաքսը (Հայաստան-Թուրքիա-Ադրբեջան) և Ողջին (Հայաստան-Ադրբեջան): Բացի այդ, Սևանա լիճը, չնայած ամբողջությամբ գտնվում է Հայաստանի տարածքի ներսում, իրենից ներկայացնում է տարածաշրջանի քաղցրահամ ջրերի ռազմավարական պաշար՝ հանդիսանալով քաղցրահամ ջրի ամենամեծ ռեսուրսը Հարավային Կովկասում և կապված է մի քանի անդրսահմանային քաղցրահամ ջրային հորիզոնների հետ, որոնք օգտագործվում են խմելու և ոռոգան նպատակներով:

Քարտեզ 1: Ջրային ռեսուրսները:



1. ՀՀ օրենքը ջրի ազգային ծրագրի մասին; ՀՀ բնապահպանության նախարարության 2007-2011 թթ միջառնադարձական զեկույց

1.1.2 Ջրի օգտագործումը տնտեսության մեջ

Գյուղատնտեսությունը Հայաստանում խիստ կախված է ոռոգումից: Բերքի համախառն արդյունքի ավելի քան 80% ստացվում է ոռոգվող հողերից: Ոռոգվող հողերի վրա եկամուտներն ավելի բարձր են: Ոռոգման ջրի կառավարման հարցում կարևոր դեր են խաղում ջրօգտագործողների ընկերությունները (ԶՕԸ-ներ)²: ԶՕԸ-ների ստեղծումից հետո ջրամատակարարումը բարելավվեց, ոռոգման ջրի սպասարկման դիմաց վարձերի հավաքման մակարդակը բարձրացավ, տեղի է ունենում արագացված անցում ցածրարժեք մշակաբույսերից (օրինակ, հացահատիկից) բարձրարժեք մշակաբույսերի (օրինակ, մրգերի և բանջարեղենների): Սակայն ԶՕԸ-ները դեռ ֆինանսապես կայուն չեն և շարունակում են կախված ժառանգական սուբսիդիաներից: Ավելին, ոռոգման ջրի կառավարումը դեռ անարդյունավետ է տարբեր պատճառներով: Դրանց թվին է դասվում բարձր ճնշումային մեխանիկական ոռոգման համակարգերի շահագործումը, որոնք կառուցվել են սովետական ժամանակաշրջանում, բայց ներկայումս շահավետ չեն էներգիայի թանկ լինելու պատճառով:

Կոմունալ-կենցաղային նպատակով ջրօգտագործումը, որը սովորաբար ոռոգումից հետո ջրի երկրորդ ամենամեծ սպառողն է, կտրուկ նվազեց 1990-ականներին: Այս էական կրճատումը վերագրվում է ջրաչափերի և ծավալի հիման վրա հաշիվների դուրսգրման համակարգի ներդրմանը: Սակայն, մինչ ջրամատակարարումը մեծ առաջընթաց ապրեց, կոյուղային համակարգը հետ ժառանգեց նրանից: Կեղտաջրերի հավաքման և մաքրման կայանների տեխնիկական պայմանները կամ բավարար չեն, կամ էլ բոլորովին չեն աշխատում:

Ջրային ռեսուրսները կարևոր դեր են խաղում նաև **էներգետիկայի ոլորտում**: Հայաստանն ունի հիդրոէներգետիկայի մեծ ներուժ իր լեռնային արագահոս գետերի շնորհիվ: Կան ՀԷԿ-երի երկու խոշոր կասկադներ և մի շարք ավելի փոքր հիդրոէլեկտրակայաններ: Վերջին տասնամյակը մասնավոր փոքր հիդրոէլեկտրակայանների թվի կտրուկ աճի ժամանակաշրջան էր: Ոմանք մտահոգություն են հայտնում գոյություն ունեցող և ապագա ՓՀԷԿ-երի կողմից ջրային ռեսուրսների ու շրջակա միջավայրի կայունության վրա թողած ազդեցության վերաբերյալ³:

Հանքարդյունաբերության աճի արդյունքում ստեղծվել է ջրային մարմինների աղտոտման մեկ այլ պոտենցիալ աղբյուր (օրինակ՝ ծանր մետաղներով): Հայաստանի ընդերքը հարուստ է որոշակի օգտակար հանածոներով: Այստեղ հայտնաբերվել են մի շարք օգտակար հանածոների ավելի քան 480 հանքավայրեր: Վերջին տարիներին հանքարդյունաբերությունը հանդիսանում է Հայաստանի տնտեսությունում առանցքային ավանդ ունեցող ճյուղ և ամենից արագ աճող արտահանման ոլորտներից մեկը, ուր հանքաքարերին և մետաղներին բաժին է ընկնում երկրի արտահանման կեսից ավելին: Հայաստանն ունի երկաթի, պղնձի, մոլիբդենի, կապարի, ցինկի, ոսկու, արծաթի, ալյումինի և նեֆելինային սիենիտների հարուստ հանքեր: Ներկայումս Հայաստանում կա յոթ պղնձե-մոլիբդենային, երեք պղնձի, 13 ոսկու և ոսկի-բազմամետաղային, երկու բազմամետաղային և երկու երկաթի հանքաքարի շահագործվող հանք: Ոլորտի հիմնական մարտահրավերներից է շրջակա միջավայրի անվտանգությունը, հետևաբար հանքարդյունաբերության զարգացման ծրագրերը հաստատելիս պետությունը առավելություն կտա առավել արդիական և անվտանգ տեխնոլոգիաներին: ⁴

1.1.3 Ջրային կենսաբազմազանություն

Հայաստանի ջրային կենսաբազմազանությունը բավարար չափով ուսումնասիրված չէ: Ամենաշատ ուսումնասիրված տարածքներից են Սևանա լիճը, Արփի լիճը, ինչպես նաև Գավառագետ, Մակենիս, Մասրիկ, Ջկնագետ, Արգիչի, Լիճք և Հրազդան գետերը: Գոշի լիճը և Պարզ լիճը, ինչպես նաև անդրսահմանային Դեբեդ, Ախուրյան, Արփա և Ողջի գետերը, միայն մասամբ են ուսումնասիրված:

Հայաստանի ջրային էկոհամակարգերում հայտնաբերվել են ջրային անողնաշարավորների 124 տեսակներ, այդ թվում անվակիրների (Rotatoria) 46 տեսակներ և խեցգետնաձկանների (Crustacea) 78 տեսակներ: Լայն տարածված են նաև բենթոսային կենդանիները (316 տեսակ): Հայաստանի ջրային էկոհամակարգում կա ձկների 39 տեսակ (43 տաքսոնիմիական խումբ), որոնք պատկանում են լոսոյազգիների (Salmonidae), սիգազգիների (Coregonidae), ծածանների (Ciprinidae), լեքլամորթիկների (Cobitidae), Balitoridae, լոքոյազգիների (Siluridae), Ictaluridae, գամբիուզազգիների (Poeciliidae) և Gobiidae ընտանիքներին: Արաքս գետն Արարատյան հարթավայրում հայտնի է ձկների բազմազանությամբ (32 տեսակներ): Մեծամոր գետում կա ձկների 31 տեսակ, Ախուրյան գետում՝ 25 տեսակ, Հրազդան գետում՝ 25 տեսակ, Արփա գետում՝ 14 տեսակ և Աղստև գետում՝ 9 տեսակ:

Հայաստանի ջրային էկոհամակարգերում ձկների 62% պատկանում են ծածանների ընտանիքին, որոնց ներկայացուցիչները հայտնի են շրջակա միջավայրի հանդեպ իրենց հարմարվողականությամբ: Մի քանի փոքր ջրային էկոհամակարգերում, օրինակ՝ Գոշի լիճ և Պարզ լիճ, որանք ձկների ֆաունայի միակ ներկայացուցիչներն են: Հայաստանի ձկներից ինը տեսակ էնդեմիկ են, իսկ 16-ը հարմարվել են կամ պատահմամբ են հայտնվել այստեղ:

Հայաստանի գետերում և ջրերում հանդիպում են բույսերի 67 ընտանիքների 417 տեսակներ: Դրանց մեծամասնությունը (58%, այսինքն 246 տեսակ), պատկանում են տասը ընտանիքներին: Այս տեսակներից

2. ՀՀ օրենքը ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին, 2002:

3. Տեղեկատվությունը վերցված է «www.investmentguide.am» և «www.minenergy.am»

4. Տեղեկատվությունը վերցված է «www.investmentguide.am» և «www.minenergy.am»

10% կարելի է հանդիպել լեռնային լճերում և գետերում 2700 մ-ից ավել բարձրության վրա: Բուսատեսակների մեծամասնությունը (50%) հանդիպում է միջին բարձրությունների ջրային էկոհամակարգերում (1200 – 2700 մ), իսկ բույսերի 40% կարելի է հանդիպել 2700 մ-ից ցածր բարձրության վրա:

Ճահճուտների էկոհամակարգը բավականին բազմազան է և ներառում է ջրիմուռների 245 տեսակներ և անոթավոր բույսերի ավելի քան 600 տեսակներ: Ճահճուտների էկոհամակարգերը համարվում են պահպանվող տարածքներ բույսերի էնդեմիկ տեսակների համար:

1.2 Հիմնական վտանգները, մարտահրավերները և հնարավորությունները

Երկրում ջրերի վատթարացող որակը գնալով ավել մեծ մտահոգությունների տեղիք է տալիս: Դրա հիմնական պատճառներից մեկը չմաքրված կամ ոչ բավարար մաքրված ջրի հեռացումն է մակերևութային ջրային ռեսուրսների մեջ: 2008-2012թթ. ընթացքում կեղտաջրերի ընդհանուր ծավալը կրկնապատկվեց, իսկ չմաքրված ջրերի բացթողումն ավելացավ յոթ անգամ: Այս աճի մի մասը կարող է վերագրվել չափուսների ճշգրտմանը և ձկնաբուծարաններից ջրի բացթողումների ավելացմանը: Կեղտաջրերի բոլոր մաքրման կայանները կառուցվել են խորհրդային ժամանակներում և այժմ հնացած են, ունեն վերականգնման կարիք, էներգատար են և շահագործման համար շատ թանկ: Կայանների մեծ մասը դադարեցրել է աշխատանքը, իսկ մի քանիսն իրականացնում է միայն մեխանիկական մաքրում: Լեռնարդյունաբերության աճի արդյունքում ստեղծվել է ջրային մարմինների աղտոտման մեկ այլ հնարավոր աղբյուր (օրինակ, ծանր մետաղներ):

Չնայած կան ջրի մոնիթորինգի (ինչպես ծավալի, այնպես էլ որակի, մակերևութային ջրերի և ստորերկրյա ջրերի) մի քանի տարբեր գործակալություններ, կառավարման մակարդակի հիմնական մարտահրավերը ջրի ծավալների և որակի մասին հուսալի, լավ որակի և հրապարակայնորեն մատչելի տվյալների ժամանակին ստանալու հետ առնչվող դժվարություններն են: Դրանք պատշաճ ձևով գործող ջրի կառավարման և պլանավորման համակարգի նախապայմանն են: Ոչ ապագա ներդրումները, ոչ էլ բնապահպանական ազդեցության գնահատականը հնարավոր չէ լրիվ պատրաստել առանց ջրային ռեսուրսների մասին բավարար գիտելիքների հիմք ունենալու: Ավելին, ինչպես արտադրական (օրինակ՝ ոռոգում, քաղաքային ջրամատակարարում, բնապահպանական թողբեր), այնպես էլ ոիսկի նվազեցման նպատակով (օրինակ՝ վարարումների նախագծաշարում) գործող տարբեր ջրային համակարգերի առօրյա աշխատանքը հնարավոր չէ օպտիմալացնել առանց հուսալի, համարյա իրական ժամանակի մոնիթորինգի ցանցի: Վերջապես, ռեսուրսների ընդհանուր կայունության (օրինակ՝ թույլտվությունների միջոցով) և տարբեր մրցակցություններից առաջացող ճնշումների կառավարումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ իրականացվում է տվյալների երկարաժամկետ մոնիթորինգ, իսկ ռեսուրսների գնահատումը պարբերաբար թարմացվում է:

Մակերևութային հոսքի կարգավորումը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի ոռոգման ոլորտի համար: Ջրի ռազմավարական պաշարների ավելացումը և գետերի հոսքերի կարգավորումը Ջրի ազգային ծրագրում ընդգծած հիմնական միջոցառումն է: Դա կարող է էլ ավելի վճռորոշ նշանակություն ունենալ կլիմայի ապագա փոփոխության և երաշտների ու վարարումների հնարավոր հաճախականության և ուժգնության վրա հնարավոր ազդեցությունների համատեքստում:

1.3 Քաղաքական և օրենսդրական համատեքստ

Վերջին 15 տարիների ընթացքում Հայաստանը զգալի օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների հասավ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության առումով: Դրանցից հարկ է նշել նոր «Ջրային օրենսգրքի» ընդունումը 2002թ., «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների փութությունների մասին» օրենքի ընդունումը 2002թ., «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» օրենքի ընդունումը 2005թ., «Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքի ընդունումը 2006թ. և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» նոր օրենքի ընդունումը 2014թ.:

Ջրային օրենսգրքի ընդունումը հաջորդեց «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» օրենքի ընդունումը 2005թ., որն ավելի հստակ սահմանումներ տվեց և պարզաբանում մտցրեց հիմնական հարցերում, այդ թվում՝ ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության առաջնահերթությունները, ավելի լայն ընթացակարգ սահմանեց պահանջարկի գնահատման և ջրային ռեսուրսների գնահատման համար, ուրվագծեց ջրային քաղաքականության լրացուցիչ սկզբունքներ (որոնք չէին ներառված Ջրային օրենսգրքում), ինչպես նաև ընդգծեց ջրավազանային կառավարման պլանի կենտրոնական դերը: Ջրային ռեսուրսների բաշխումը ջրօգտագործողների միջև ըստ առաջնահերթության իրականացվում է հետևյալ գերակա ուղղություններով՝ ըստ հերթականության. Ազգային ջրային պաշար (սա հետագայում ավելի հստակ սահմանվել է «Ջրի ազգային ծրագրում»), ավանդական (պատմական, ոչ արդյունահանման նպատակով օգտագործում), ջրային ռեսուրսների օգտագործում ներկայիս պայմանագրերի համաձայն, կենցաղային, գյուղատնտեսական, էներգիայի արտադրության, արդյունաբերական և ռեկրեացիոն նպատակով օգտագործում: Օրենքը նաև սահմանում է, որ ջրի բաշխումն օգտագործողների միջև պետք է արվի այնպես, որ ջրային ռեսուրսի արժեքը (տնտեսական, սոցիալական և բնապահպանական) հասցվի առավելագույնի:

Ջրի կառավարմանն ուղղորդող ջրային քաղաքականության լրացուցիչ սկզբունքներից են առաջավոր գիտության կիրառումը, հիմնական կարիքների բավարարումը, ջրի գնադրացման և տնտեսական գործիքների

օգտագործումը, համապարփակ գնահատումը (այդ թվում բնապահպանական, մշակութային, սոցիալական և տնտեսական արժեքների), շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը, «օգտագործողները վճարում են» և «աղտոտողները վճարում են» սկզբունքները, ծախսաձածկումը, ջրի որակի նորմատիվների օգտագործումը, թափանցիկությունը և հանրային մասնակցությունը: Վերջապես, այս օրենքը հանդիսանում է ջրի ազգային քաղաքականության գործողությունների մշակման ուղեցույց:

Ի լրումն ջրային օրենսդրության, Հայաստանն ունի տարբեր բնապահպանական օրենքներ: 1993թ. հուլիսի 6-ին Հայաստանը դարձավ «Միջազգային նշանակություն ունեցող խոնավ տարածքների կոնվենցիա»-ի կողմ՝ հատկապես որպես ջրոլի թռչունների բնական միջավայր (Ռամսարի կոնվենցիա): Միջազգային նշանակություն ունեցող խոնավ տարածքների ցանկում նշված է երկու վայր՝ Սևանա լիճն իր ավազանով և Արփի լիճն իր շրջակա ճահիճներով: Ավելի լայն առումով, բնության և կենսաբազմազանության պահպանությունը գտնվում են երեք հիմնական՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» (2006), «Բուսական աշխարհի մասին» (1999) և «Կենդանական աշխարհի մասին» (2000), օրենքների ներքո:

Շրջակա միջավայրի պահպանությունը և կայունությունը ապահովելու մեկ այլ կարևոր իրավական մեխանիզմ է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014), որը փոխարինեց 1995թ. ընդունված օրենքին: Օրենքը պահանջում է, որ որոշակի ծրագրեր ամեն մի կոնկրետ դեպքում անցնեն ՇՄԱԳ, սակայն ընդհանուր կարծիք կա, որ օրենքով նախատեսված շրջակա միջավայրի պահպանության հարցերում որոշ անհամապատասխանություններ կան:

Հանրության մասնակցությունը բնապահպանական հարցերի որոշումների կայացմանը և բնապահպանական տեղեկատվության մատչելիությունը ապահովվում են հիմնականում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (2014), ինչպես նաև Օրհուսի կոնվենցիայի իրականացմանն ուղղված այլ միջոցառումներով:

ՄԱՍ 2 . ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Սույն հաշվետվությունը գնահատում է Հայաստանի քաղաքական ջրերի պահպանման օրենսդրական և կառավարման մեխանիզմների համադրությունը Եվրամիության մեխանիզմների հետ: Այնուամենայնիվ, քաղաքական ջրերի էկոհամակարգերի պահպանման իրավական շրջանակների ցանկացած վերլուծության համար որպես մեկնարկային կետ պարտադիր պետք է լինեն տարբեր միջազգային իրավական կանոնները: Այդ կանոնները ներկայացնում են ոչ միայն միջազգայնորեն համաձայնեցված ստանդարտներ և սկզբունքներ, այլ նաև սահմանում են այն շրջանակը, որով ԵՄ-ն ձգտում է իրականացնել իր քաղաքական ջրերի քաղաքականությունը, ինչպես նաև Հարավային Կովկասի երկրների շրջանակը՝ այն չափով, որքանով նրանք հանդիսանում են համապատասխան համաձայնագրերի կողմեր:

Քաղաքական ջրերի պահպանությանը համապատասխանող միջազգային կանոնները ներկայացվում են երեք լայն կատեգորիաներով՝ ջրային ռեսուրսների միջազգային համաձայնագրեր, պահպանման և կենսաբազմազանության համաձայնագրեր և այլ համաձայնագրեր, օրինակ այնպիսիք, որոնք գործ ունեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հետ: Ընդհանուր առմամբ, Հայաստանի մասնակցությունը բարձր է պահպանության / կենսաբազմազանության և բնապահպանական համաձայնագրերում, սակայն նա դեռ պետք է վավերացնի ջրային համաձայնագրերից որևէ մեկը:

Աղյուսակ 1 | Մասնակցություն միջազգային համաձայնագրերին

Գործիք	Կարգավիճակ
Ջրի մասին համաձայնագիր	
ՄԱԿ-ի ԵՏՀ «Միջազգային լճերի և անդրսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիա	-
ՄԱԿ-ի Միջազգային ջրահոսքերի ոչ նավագնացային օգտագործման իրավունքի մասին» կոնվենցիա	-
Պահպանման / կենսաբազմազանության մասին համաձայնագրեր	
Կոնվենցիա Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին	01.08.2008
Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա	29.12.1993
Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին կոնվենցիա	01.03.2011
Աֆրիկյան-Եվրասիական չվող ջրային թռչունների պահպանության մասին համաձայնագիր	-
«Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա	06.11.1993
Այլ բնապահպանական համաձայնագրեր	
ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա	21.03.1994
Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիա	10.09.1997
Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիայի ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին արձանագրություն	24.04.2011
ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա	01.08.2001

Պայմանական նշաններ.	Կողմ	Կողմ չէ / միայն ստորագրող
---------------------	------	---------------------------

2.1 Միջազգային համաձայնագրեր ջրի մասին

Սկզբունքորեն գոյություն ունեն երկու միջազգային համաձայնագրեր, որոնք սահմանում են ջրօգտագործման և կառավարման միջազգային շրջանակները:

- **ՄԱԿ ԵՏՀ «Միջազգային լճերի և անդրսահմանային ջրհոսքերի պահպանության և օգտագործման մասին» կոնվենցիան** (ՄԱԿ ԵՏՀ ջրի համաձայնագիր կամ Հելսինկյան համաձայնագիր), որը սահմանում է Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի անդամ երկրների միջև անդրսահմանային ջրհոսքերի աղտոտումից պահպանելու և վերահսկելու շրջանակը՝ ապահովելով ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը կայուն զարգացման տեսանկյունից:
- **ՄԱԿ-ի «Միջազգային ջրային հուները ոչ նավագնացային նպատակներով օգտագործման իրավունքի մասին կոնվենցիա»** (ՄԱԿ-ի ջրային համաձայնագիր), որի նպատակն է՝ լուծել «ի թիվս այլոց, աճող պահանջարկի և աղտոտման հետևանքով շատ միջազգային ջրային հուների վրա ազդող խնդիրները» (նախաբան, կետ 4):

Երկու համաձայնագրերն էլ առնչվում են անդրսահմանային ջրերի կառավարման և օգտագործման ոլորտում համագործակցության հետ: Օրինակ, Հելսինկյան կոնվենցիայի շրջանակներում հիմնական պարտավորությունը ցանկացած «անդրսահմանային ազդեցության»⁵ վերահսկողությանը և նվազեցմանը ուղղված համապատասխան միջոցառումների ձեռնարկումն է, մինչդեռ ՄԱԿ-ի ջրային կոնվենցիան նպատակ ունի լուծել «ի թիվս այլոց, աճող պահանջարկի և աղտոտման հետևանքով շատ միջազգային ջրահոսքերի վրա ազդող խնդիրները» (նախաբան, կետ 4) և պահանջում է կողմերից ձեռնարկել այդ ջրահոսքերի և դրանց ջրերի օգտագործման հետ առնչվող պահպանության և կառավարման միջոցառումներ:

ՄԱԿ-ի ջրային միջավայրի մասին կոնվենցիան նաև ավելացնում է այն առանցքային սկզբունքը, որ համաձայնության կամ սովորության բացակայության դեպքում, միջազգային ջրահոսքի ոչ մի օգտագործում չունի ներհատուկ առավելություն այլ օգտագործումների նկատմամբ և այդ առումով ջրի հոսքի օգտագործումը նույնքան կարևոր է, որքան ջրի այլ օգտագործումները: ՄԱԿ-ի ջրային միջավայրի մասին կոնվենցիան նաև շրջանակ է ստեղծում պլանավորման միջոցառումների համար, ինչպես օրինակ պլանավորված միջոցառումների մասին տեղեկատվության փոխանակում, համատեղ օգտագործման այլ երկրների ծանուցում հնարավոր բացասական ազդեցությունների մասին, պլանավորված միջոցառումների հրատապ իրականացման միջոցառումներ:

2.2 Պահպանության միջազգային համաձայնագրեր

Կան մի քանի միջազգային համաձայնագրեր, որոնք այս կամ այն չափով առնչվում են քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի պահպանման հետ: Հիմնական գործիքներն են՝

- **«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիան** (CBD - ԿԲԿ), որը նախատեսում է լայն պարտավորություններ կենսաբանական բազմազանության և դրա բաղադրիչների պահպանության համար: ԿԲԿ-ի ծրագրի շրջանակներում զգալի աշխատանք է տարվել ներքին ջրերի կենսաբազմազանության ուղղությամբ, որոնք ներառում են ինչպես ջրի մատչելիության, այնպես էլ ջրի որակի (և աղտոտման կանխարգելման) դերն առողջ ջրային էկոհամակարգերը կայունացնելու համար: Օրինակ՝ նպատակ 1.1-ի (բ) խնդիրը վերաբերում է գետավազանների համապարփակ կառավարման ռազմավարությունների ընդունմանը, որոնք նպատակ ունեն վերականգնել կամ բարելավել ներքին ջրային ռեսուրսների որակը, մատակարարումը, ֆունկցիաները և արժեքները: 1.1.2 (կողմերի համար) և 1.1.10(բ) (SBSTTA-ի համար) միջոցառումներն ուղղված են ներքին ջրային էկոհամակարգերի կառավարման ռազմավարությունների մշակմանը, որոնք նպատակ ունեն ապահովելու անհրաժեշտ բնապահպանական թողքերը՝ էկոհամակարգի պահպանության և ամբողջականության համար:
- **«Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթուղուների բնակավայր» կոնվենցիա** (Ռամսարի կոնվենցիա), որը նպատակ ունի պահպանել միջազգային նշանակության խոնավ տարածքների էկոլոգիական բնութագրերը և պլանավորել անդամ երկրների բոլոր խոնավ տարածքների «ողջամիտ» կամ կայուն օգտագործումը: Կոնվենցիան ունի գործողությունների երեք խոշոր հենասյուն՝ միջազգային նշանակություն ունեցող խոնավ տարածքների առանձնացում որպես Ռամսարի տարածք, յուրաքանչյուր երկրի բոլոր խոնավ տարածքների ողջամիտ օգտագործում, միջազգային համագործակցություն այլ երկրների հետ՝ շարունակելու խոնավ տարածքների և դրանց ռեսուրսների ողջամիտ օգտագործումը: Ներկայումս կա մոտ 2200 առանձնացված տարածք, որոնք ծածկում են ընդամենը մոտ 200 մլն հա: Հարավային Կովկասի երկրներում կա Ռամսարի 7 տարածք:
- **«Վայրի կենդանիների միգրացիոն տեսակների պահպանության մասին» կոնվենցիան (Բոննի կոնվենցիա)**, որը խթանում է համագործակցությունը միգրացիոն տեսակների պահպանման հարցում, հատկապես այն տեսակների, որոնց պահպանման վիճակն անբարենպաստ է: Ինչպես և Բեռնի կոնվենցիայի դեպքում, պահպանության ենթակա տեսակների ցուցակը բերված է հավելվածներում: Առաջին հավելվածը թվարկում

5. Մահմանվում է որպես ցանկացած բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա, որն առաջանում է մարդկային գործունեության հետևանքով անդրսահմանային ջրերի վրա պայմանների փոփոխությամբ, որի ֆիզիկական սկզբնաղբյուրը ամբողջությամբ կամ մասամբ գտնվում է համաձայնագրի մեկ այլ կողմի իրավասության ներքո (այդ ազդեցությունները ներառում են ազդեցությունը մարդու առողջության և անվտանգության վրա, բուսական և կենդանական աշխարհի, օդի, կլիմայի և այլնի վրա):

է այն տեսակները, որոնց մասով կողմերից պահանջվում է ապահովել «անհապաղ պահպանություն»: Ի-ին հավելվածում թվարկած տեսակներին պահպանելու համար տարածագոտու երկրի կողմերը պետք է պահպանեն կամ վերականգնեն վտանգված տեսակների բնական միջավայրը, կանխեն, վերացնեն, փոխհատուցեն կամ նվազագույնի հասցնեն այն գործողությունները կամ արգելքները, որոնք խոչընդոտում են թվարկած տեսակների միգրացիային, ինչպես նաև՝ իրագործելի և համապատասխան չափով կանխեն, նվազեցնեն կամ վերահսկեն այն գործոնները, որոնք վտանգում են, կամ ըստ ամենայնի, կշարունակեն վտանգել այդ տեսակներին:

- II հավելվածը թվարկում է այն տեսակները, որոնց պահպանման և կառավարման համար կողմերը պետք է կնքեն բազմակողմանի համաձայնագրեր: Նման համաձայնագրերից է **«Աֆրիկյան-Եվրասիական չվող ջրային թռչունների պահպանման կոնվենցիան»** (ԱԵՀՁԹՊՀ- AEWA), որն ընդգրկում է ավելի քան 250 տեսակի այնպիսի թռչուններ, որոնք՝ իրենց տարեկան ցիկլի առնվազն մի ժամանակաշրջանում, Էկոլոգիապես կախված են խոնավ տարածքներից: Այս համաձայնագրի շրջանակը ներառում է 118 երկրներ, այդ թվում Հարավային Գոլկասի երկրները: Համաձայնագրի կողմերին կոչ է արվում ներգրավել պահպանման գործողությունների լայն շրջանակ, որոնք նկարագրված են համապարփակ «Գործողությունների պլանում» և անդրադառնում են այնպիսի հարցերին, ինչպես տեսակների և բնական միջավայրերի պահպանում, մարդկանց գործողությունների կառավարում, հետազոտություն և մոնիթորինգ, կրթություն ու տեղեկատվություն և իրականացում:
- **«Կոնվենցիա Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին»** (Բեռնի կոնվենցիա), որը նպատակ ունի «պահպանել վայրի բուսական և կենդանական աշխարհի ու բնական միջավայրերը և, մասնավորապես, վտանգված և խոցելի տեսակները, այդ թվում՝ վտանգված և խոցելի միգրացվող տեսակները»: Կոնվենցիան չորս հավելվածներում թվարկում է պահպանվող տեսակները. 1-ին հավելվածում ներկայացված են խստորեն պահպանվող բուսական աշխարհի տեսակները, 2-րդ հավելվածում՝ խստորեն պահպանվող կենդանական աշխարհի տեսակները, 3-րդ հավելվածում՝ պահպանվող կենդանական աշխարհի տեսակները, մինչդեռ 4-րդ հավելվածում ներկայացված են սպանելու և բռնելու արգելված միջոցներն ու մեթոդները և օգտագործման այլ ձևերը:

2.3 Շրջակա միջավայրի մասին համաձայնագրեր

Կան այլ միջազգային համաձայնագրեր և գործիքներ, որոնք առնչվում են քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի պահպանմանը: Դրանցից մի քանիսն ուղղակիորեն չեն անդրադառնում քաղցրահամ ջրերի պահպանությանը (անգամ որևէ նշանակալի չափով), այնուամենայնիվ ունեն Էական նշանակություն: Օրինակ՝ ՄՄԿ-ի շրջանակային կոնվենցիան կլիմայի փոփոխության մասին (և այլ գործիքներ, որոնք անդրադառնում են կլիմայի փոփոխության ազդեցություններին): Սույն ուսումնասիրության նպատակների համար հատուկ ուշադրություն է դարձվում երեք առանցքային գործիքների վրա (յուրաքանչյուրն ընդունված է ՄՄԿ ԵՏՀ-ի հովանավորության ներքո), որոնք անդրադառնում են բնապահպանության ոլորտում որոշումների կայացմանը և պլանավորմանը:

- ՄՄԿ ԵՏՀ-ի **«Անդրասահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիան»** (ՇՄԱԳ կոնվենցիա) պահանջում է կողմերից գնահատել որոշակի գործողությունների (հատկապես զարգացման ծրագրերի) ազդեցությունը շրջակա միջավայրի վրա պլանավորման վաղ փուլերում:
- **«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին արձանագրությունը»** պահանջում է կողմերից գնահատել իրենց պաշտոնական պլանների և ծրագրերի նախագծերի հետևանքները շրջակա միջավայրի վրա (ինչպես նաև անդրադառնում է քաղաքականության և օրենսդրության խնդիրներին, չնայած դրանց նկատմամբ ՇՄԱԳ կիրառումը պարտադիր չէ):
- **«Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիան»** Օրինուսի կոնվենցիա) սահմանում է հասարակայնության մի շարք իրավունքներ շրջակա միջավայրի նկատմամբ: Մասնավորապես՝ բոլորի իրավունքը ստանալ իշխանությունների մոտ պահվող բնապահպանական տեղեկությունը, բնապահպանական հարցերին վերաբերող որոշումների կայացմանը մասնակցելու իրավունքը, արդարադատության մատչելիությունը բնապահպանական հարցերում, այսինքն՝ վիճարկել այն պետական որոշումները, որոնք կայացվել են առանց հարգելու վերոնշյալ երկու իրավունքները կամ ընդհանրապես բնապահպանական օրենսդրությունը:

2.4 ԵՄ օրենսդրություն

2.4.1 Ջրի շրջանակային դիրեկտիվ

«Ջրի շրջանակային դիրեկտիվը» ԵՄ ընդհանուր իրավական շրջանակն է ջրային քաղաքականության հետ առնչվող հարցերում: Այն ունի մի շարք կարևոր առանձնահատկություններ, ինչպես՝ օրենսդրական, այնպես էլ՝ քաղաքականության տեսանկյունից, որոնք հիմնված են ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման (ՋՌՀԿ) ընդհանուր սկզբունքների վրա, որոնցից ամենակարևորները՝ սույն ուսումնասիրության նպատակներով, բերված են ստորև:

Նախ, այն մշակված է՝ գործելու որպես մեկ առանձին, ամբողջականացված կանոնագիրք ջրային ռեսուրսների կառավարման համար, ներառելով բոլոր ներքին ջրերը, և այն ամբողջականացրել է եվրոպական ջրային և ջրերի հետ առնչվող օրենսդրությունը (փոխարինել է՝ շրջանակների մեջ ընդգրկելով կամ փոփոխելով հին ջրային դիրեկտիվները, ինչպես նաև ամբողջականացնելով այլ տեղին դիրեկտիվների դրույթները շրջանակի մեջ):

Երկրորդ, այն թիրախային է. պարտադրում է շրջակա միջավայրի պահպանության ընդհանուր պահանջներ և նվազագույն քիմիական ստանդարտներ բոլոր մակերևութային ջրերի համար (որի արդյունքում բոլոր ջրերի համար կնվաճվի «լավ կարգավիճակ» սահմանված ժամկետին): Այս թիրախն օրենքով պարտադիր է, ինչը նշանակում է, որ անդամ երկրները պետք է ոչ միայն պահպանեն ԵՄ ջրային օրենսդրության կոնկրետ օրենսդրական պահանջները, այլ նաև ձեռնարկեն լրացուցիչ միջոցներ՝ ազգային մակարդակի վրա «լավ կարգավիճակի» նվաճումն ապահովելու համար:

Երրորդ, որն ամենից նշանակալին է սույն ուսումնասիրության տեսանկյունից, դիրեկտիվը մտցնում է գետավազանների կամ աշխարհագրական տարածքների, այլ ոչ վարչական կամ քաղաքական սահմանների վրա հիմնված ջրի կառավարման նոր մոդել: Համաձայն այս մոտեցման, ջրի բնութագրերը, մարդու կողմից ազդեցությունները, կառավարման կարիքները և այլն՝ բոլորը գնահատվում են գետավազանի մակարդակով, նմանապես, պլանավորումն ու ինստիտուցիոնալ մեխանիզմները սահմանվում են գետավազանի մակարդակով՝ ներառելով կոնկրետ գետավազանի հետ կապ ունեցող բոլոր շահագրգիռ կողմերին: Անդամ երկրների հիմնական գործողությունները պետք է ներառեն՝

- իրենց ազգային տարածքում առանձին գետավազանների բացահայտում և դրանց վերագրում առանձին գետավազանային տարածքների (ԳԱՏ),
- իրավասու լիազոր մարմինների նշանակում, որոնք պատասխանատու կլինեն յուրաքանչյուր ԳԱՏ-ին,
- գետավազանային տարածքների բնութագրում ճնշումների, ազդեցությունների և ջրի տնտեսական օգտագործման առումով (այդ թվում գետավազանային տարածքում գտնվող պահպանվող տարածքների կադաստր),
- մոնիթորինգի ծրագրերի ու ցանցերի ստեղծում և իրականացում,
- մոնիթորինգի ծրագրի, ինչպես նաև գետավազանի բնութագրերի վերլուծության հիման վրա, միջոցառումների ծրագրի կազմում՝ ԳԱՏ-ի ջրերի համար նվաճելի «լավ կարգավիճակ» ապահովելու համար,
- «Գետավազանային կառավարման պլանի» (ԳԿՊ) կազմում յուրաքանչյուր ԳԱՏ-ի համար:

2.4.2 Բնական միջավայրերի և թռչունների մասին դիրեկտիվներ

«Բնական միջավայրերի մասին» և «Թռչունների մասին» դիրեկտիվները ԵՄ-ի գործիքներ են, որոնք նախատեսված են Միության շրջանակներում բնության պահպանման և պահպանության միջոցառումների իրականացման համար: Դրանք իրագործում են, մասնավորապես, ԵՄ և անդամ երկրների պարտավորությունները կենսաբազմազանության առանցքային գործիքների շրջանակներում (Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա, Գաղթող տեսակների մասին կոնվենցիա և Բեռնի կոնվենցիա): Ընդհանուր առմամբ, դիրեկտիվները պահպանում են ավելի քան 1000 կենդանական և բուսական աշխարհի տեսակներ և ավելի քան 200, այսպես կոչված, «եվրոպական նշանակության» տիպի բնական միջավայրեր (օրինակ, հատուկ տեսակի անտառներ, մարգագետիններ, խոնավ տարածքներ):

Օրենսդրությունը կառուցված է երկու հենասյունների շուրջ՝ պահպանվող տեղամասերի Natura 2000 ցանց և տեսակների պահպանության խիստ համակարգ: «Բնական միջավայրերի մասին» դիրեկտիվի 6 հոդվածը սահմանում է, թե ինչպես են կառավարվում և պահպանվում Natura 2000 տեղամասերը և պահանջում է ԵՄ անդամ երկրներից, որ նրանք՝

- ձեռնարկեն պատշաճ պահպանման միջոցառումներ՝ պահպանելու այն բնական միջավայրերը և տեսակները, որոնց համար առանձնացվել է տեղամասը և վերականգնեն դրանք մինչև նպաստավոր պահպանվող տարածքի վիճակի,
- խուսափեն փաստող գործողություններից, որոնք կարող են նշանակալի կերպով խախտել այդ տեսակները կամ քայքայել պահպանվող տեսակների բնական միջավայրերը կամ բնական միջավայրերի տիպերը:

Ցանկացած պլան կամ ծրագիր, որը կարող է նշանակալի ազդեցություն թողնել Natura 2000-ի վրա՝ առանձին կամ այլ պլանների կամ ծրագրերի հետ միասին, պետք է անցնի պատշաճ գնահատում (փաստորեն, ՇՄԱԳ)՝ դրա ազդեցությունը տեղամասի վրա որոշելու համար: Իրավասու մարմինները կարող են համաձայնվել պլանի կամ ծրագրի հետ միայն այն բանից հետո, երբ համոզվեն, որ այն բացասաբար չի ազդի դիտարկվող տեղամասի ամբողջականության վրա (եթե միայն պլանը կամ ծրագիրը չունի գերակա պետական շահ):

Որպես իր համապարփակ մոտեցման մաս, ՋՇԴ-ն սերտ կապ է հաստատում բնության մասին այս երկու դիրեկտիվների միջև: Ինչպես բնության մասին դիրեկտիվները, այնպես էլ ՋՇԴ-ն նպատակ ունեն ապահովել առողջ ջրային էկոհամակարգ՝ միևնույն ժամանակ ապահովելով հավասարակշռությունը ջրի/բնության պահպանության և ջրային ռեսուրսների կայուն օգտագործման միջև: Բսկապես, այստեղ առկա են շատ սիներգիաներ, քանի որ ՋՇԴ-ի ներքո իրականացված միջոցառումները, ընդհանուր առմամբ նպաստում են

բնության մասին դիրեկտիվների նպատակներին:

ՁՇԴ-ի 1(ա) հոդվածը հստակ նշում է էկոհամակարգերի պահպանությունը և կարգավիճակի լավացումը, իսկ դրանց ջրային կարիքների մասով՝ նաև դրանցից անմիջականորեն կախված ցամաքային էկոհամակարգերի և խոնավ տարածքների պահպանությունը: ՁՇԴ-ի 6.1 հոդվածը սահմանում է պահպանվող տարածքների կադաստրի ստեղծում, «որոնք առանձնացված կլինեն որպես հատուկ պահպանություն պահանջող տարածքներ ... իրենց մակերևութային և ստորերկրյա ջրերի պահպանության կամ ջրից ուղղակի կախում ունեցող բնական միջավայրերի և տեսակների պահպանման համար»: Կադաստրը պետք է պարունակի «առանձնացված տարածքներ այնպիսի բնական միջավայրերի կամ տեսակների պահպանության համար, որտեղ ջրի վիճակի պահպանումը կամ բարելավումը կարևոր գործոն է դրանց պահպանության համար» (Հավելված IV, (v) ՁՇԴ):

Դիրեկտիվներով պահպանվող ցանկացած Natura 2000 տեղամաս՝ ջրից կախում ունեցող բնական միջավայրերի տիպերով կամ տեսակներով, պետք է դիտարկվի կադաստրում ներառվելու համար: Այդ տարածքներն ամփոփվում են որպես «ջրից կախում ունեցող Natura 2000 տեղամասեր», և դրանց նկատմամբ կիրառվում են ինչպես Թռչունների/Բնական միջավայրերի մասին դիրեկտիվները, այնպես էլ ՁՇԴ-ն:

2.5 Այլ օրենսդրություններ

Թռչունների և բնական միջավայրերի մասին դիրեկտիվները կազմում են Եվրոպայի բնության պահպանության քաղաքականության անկյունաքարը: Որոշ չափով տեղին կարող են լինել նաև այլ գործիքներ, որոնք մասնակի ընդգրկված են այս ուսումնասիրության մեջ: Դրանցից են՝ ոլորտային օրենսդրությունները, ինչպես օրինակ ձկնորսությունը (չնայած ներքին/ քաղցրահամ ջրերի ձկնորսությունն ամբողջությամբ չի կարգավորվում ԵՄ օրենսդրությամբ ձկնորսության ընդհանուր քաղաքականության շրջանակներում և ենթակա է ազգային մակարդակի կանոններին):

Շրջակա միջավայրի համատեքստում, ընդհանուր առմամբ, տեղին են այն գործիքները, որոնք առնչվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման հետ (ՇՄՌԳ): ՇՄԱԳ-ի մասին դիրեկտիվը սահմանում է բնապահպանական գնահատման ընթացակարգեր այն ծրագրերի համար, որոնք կարող են ազդել շրջակա միջավայրի վրա: ՇՄԱԳ ընթացակարգը կարող է ամփոփվել հետևյալ կերպ. նախաձեռնողը կարող է խնդրել իրավասու մարմնից, թե ինչ պետք է ներկայացվի նախաձեռնողի կողմից ՇՄԱԳ-ի համար (ոլորտի որոշման փուլ), նախաձեռնողը պետք է ներկայացնի տեղեկատվություն շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին (ՇՄԱԳ հաշվետվություն, հավելված IV), բնապահպանության ոլորտի մարմինները և հանրությունը (և առնչվող անդամ պետությունները) պետք է տեղեկացվեն և նրանց հետ պետք է անցկացվեն քննարկումներ, որի արդյունքների հիման վրա իրավասու մարմինը կայացնում է որոշում: Դրանից հետո հանրությունը տեղեկացվում է որոշման մասին և կարող է վիճարկել որոշումը դատարանում:

- ՇՄՌԳ դիրեկտիվը կիրառվում է **հանրային/պետական** պլանների և ծրագրերի լայն շրջանակի նկատմամբ (օրինակ, հողօգտագործում, տրանսպորտ, էներգետիկա, թափոններ, գյուղատնտեսություն և այլն): Որոշակի տիպի պլաններ կամ ծրագրեր պարտադիր պետք է կատարեն ՇՄՌԳ պահանջները, մինչդեռ մյուսները պետք է անցնեն սքրինինգի (ընտրության) գործընթացով՝ որոշելու, թե արդյոք կարո՞ղ են լինել «նշանակալի բնապահպանական ազդեցություններ»: Սքրինինգի ընթացակարգը հիմնված է դիրեկտիվի II հավելվածում սահմանված չափանիշների վրա: ՇՄՌԳ գործընթացը կարելի է ամփոփել հետևյալ կերպ. պատրաստվում է շրջակա միջավայրի մասին հաշվետվություն, որում բացահայտվում են հիմնական հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա և առաջարկված պլանի կամ ծրագրի ողջամիտ այլընտրանքները: Հանրությունը և բնապահպանության ոլորտի մարմինները տեղեկացվում են պլանի կամ ծրագրի նախագծի մասին, անց են կացնում քննարկումներ և պատրաստվում է շրջակա միջավայրի մասին հաշվետվություն:

ՄԱՍ 3. ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Համադրումը Ջրի շրջանակային դիրեկտիվին (ՁԾԴ)

Այս բաժինը դիտարկելու է ազգային օրենսդրության, քաղաքականության և ինստիտուցիոնալ մեխանիզմների համադրությունը Ջրի շրջանակային դիրեկտիվին և դրա հետ կապված մյուս դիրեկտիվներին՝ նպատակաուղղված այն անհրաժեշտ պահանջներին, որոնք կաջակցեն քաղցրահամ ջրերի արդյունավետ պահպանությանը: Ուսումնասիրությունը ներառում է ՁԾԴ-ով նախատեսված ադմինիստրատիվ մեխանիզմների համապատասխանության գնահատումը, ինչպես նաև հիմնական քայլերը, որոնք պետք է իրականացվեն գետավազանի պլանավորման և կառավարման մոտեցումներում: Հետագայում հաշվի պետք է առնվեն մի քանի հատուկ ջրային դիրեկտիվները, ներառյալ՝ կոմունալ-կենցաղային կեղտաջրերի, շրջակա միջավայրի որակի ստանդարտների, նիտրատների և հեղեղների վերաբերյալ դիրեկտիվները:

3.1.1 Ադմինիստրատիվ մեխանիզմները

ՁԾԴ-ի ջրի համապարփակ կառավարման հիմքում ընկած են ադմինիստրատիվ և պլանավորման հարցերը: Պլանավորումը, կառավարումը և շրջակա միջավայրի պահպանությունը կազմակերպված է գետավազանային տարածքների շուրջ: Յուրաքանչյուր գետավազանային տարածք ունի իրավասու մարմին, որի հիմնական պատասխանատվությունն է՝ ապահովել Դիրեկտիվի իրականացումը:

ՁԾԴ-ով իրավասու մարմինն ունի որոշակի կոնկրետ պարտավորություններ (օրինակ՝ հաստատել գետավազանի կառավարման պլանների նախագիծը, հաստատել շրջակա միջավայրի պահպանության նպատակները և միջոցառումների ծրագրերը, և այլն), ինչպես նաև ապահովել համակարգումը և հետևողական իրականացումը մյուս պետական մարմինների կողմից:

Ջրային օրենսգրքը սահմանում է Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման համար պատասխանատու մարմինները: Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունների մասին Հոդված 3-ի համաձայն ՀՀ կառավարությունը համապատասխան պետական կառավարման մարմինների միջոցով իրականացնում է սույն օրենսգրքի նպատակները, ապահովում է ջրի պահպանությունը, պաշտպանությունը՝ վնասակար ազդեցությունից, օգտագործումը հանրության շահերի համար՝ հանուն բոլոր անձանց անվտանգության: ՀՀ ջրային օրենսգրքով սահմանված են հետևյալ մարմինները.

- **Ջրի ազգային խորհուրդը** (Հոդ.8), որի նախագահը Հայաստանի Հանրապետության վարչապետն է, ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում բարձրագույն խորհրդատվական մարմինն է: Այն միջնազավառային մասնակցության միջոցով քննարկում և առաջարկություններ է ներկայացնում ջրի ազգային քաղաքականության, ջրի ազգային ծրագրի և այլ իրավական ակտերի վերաբերյալ:
- **Վեճերը լուծող հանձնաժողովը** (Հոդ. 9) ջրի ազգային խորհրդի կազմում է և կարող է լուծել ջրային հարաբերություններում ծագած ջրօգտագործման թույլտվություններին առնչվող վեճերը:
- **Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը** (Հոդ.10) ՀՀ բնապահպանության նախարարության կազմում ստեղծվել է ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը (ՋՌԿԳ), որը ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի սահմաններում պատասխանատու է իրականացնելու ռեսուրսների կառավարումն ու պահպանությունը: Այն ներառում է ջրի առկայության վերաբերյալ տեղեկության տրամադրումը և օգտագործման հաշվարկները, ջրօգտագործման կանոնակարգումը և բաշխումը, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը, վերահսկողությունը է իրականացնում ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության բնագավառում, ապահովում է ջրավազանային կառավարման պլանների մշակումը և դրանց իրականացումը, դասակարգում է ջրային ռեսուրսները: ՋՌԿԳ-ն պատասխանատու է նաև պետական ջրային կադաստրի վարման համար:
- ՋՌԿԳ-ն և ենթակա կազմակերպություններն իրենց գործառնություններն իրականացնելու համար կարիք ունեն տեխնիկական և ֆինանսական աջակցության:
- **Ջրավազանային կառավարման մարմինները** (Հոդ.11) ՋՌԿԳ-ի ներքո ստեղծվել են վեց ջրավազանային տարածքային կառավարման բաժիններ (ՋՏԿԲ)՝ Սևանի, Հրազդանի, Հյուսիսային, Ախուրյանի, Արարատի և Հարավային, որոնք ջրավազանի մակարդակում պատասխանատու են ՋՌԿԳ-ի և համայնքների միջև կապի հաստատման համար: Ջրավազանային կառավարման մարմիններին վերաբերող շատ գործառնություններ փոխանցված են ջրային ռեսուրսները կառավարող գոյություն ունեցող այլ կազմակերպությունների, մասնավորապես ՋՌԿԳ-ին՝ ջրօգտագործման պլանավորման, թույլտվությունների տրման և կատարման հարցերում: Այսինքն, ՋՏԿԲ-ները ենթակա են ՋՌԿԳ-ին և աջակցում են ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման պարտականությունների իրականացմանը:

Հետևաբար, ՋՏԿԲ-ները պատասխանատու են մասնակցելու ջրավազանային կառավարման պլանների մշակմանը, ջրօգտագործման թույլտվությունների հաշվառմանը, ապահովելու ջրային ռեսուրսների

պահպանությունը, հետևելու ջրօգտագործման թույլտվություններում սահմանած պայմանների կատարմանը, մշակելու ջրառի ռեժիմները, ինչպես նաև մասնակցելու ջրավազանային տարածքում ջրօգտագործման պլանների մշակմանը: Հետագայում հնարավոր է կապահանջվի օրենսդրական հստակեցում՝ ՋՏԿԲ-ների դերն ու կարողություններն ուժեղացնելու համար:

Ջրի ազգային ծրագրի համաձայն ջրավազանային հասարակական խորհուրդները (ՋԿԽ) խորհրդատվական դեր կարող են ունենալ ՋՏԿԲ-ների համար և ծառայել որպես հարթակ հասարակության մասնակցության համար: Սակայն, ՋԿԽ-ները հստակ սահմանված առաքելություն, կառուցվածք կամ ընթացակարգեր դեռ չունեն:

- **Ջրային ռեսուրսների քաղաքականության վարչությունը** ստեղծվել էր 2010 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության ներքո և պատասխանատու էր ջրային ռեսուրսների պահպանության վերաբերյալ պետական քաղաքականության ձևավորման, ծրագրերի և ռազմավարական ուղղությունների մշակման և դրանց իրականացման մոնիթորինգի համար: Այն հանդես էր գալիս որպես ՀՀ ջրային օրենսգրքով պահանջվող նոր օրենքներ և կանոնակարգեր մշակելու աշխատանքները նախաձեռնող առաջատար մարմին: 2015 թվականի հունիսին որոշ կառուցվածքային փոփոխություններ տեղի ունեցան և Ջրային ռեսուրսների քաղաքականության վարչության իրավասությունները փոխանցվեցին Շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության վարչության կազմում ստեղծված Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և ջրային ռեսուրսների պահպանության քաղաքականության բաժնին:

- **Ջրային համակարգերի կառավարման մարմինը** (Հոդ.12), ՀՀ գյուղատնտեսության նախարարության կառուցվածքում գործող Ջրային տնտեսության պետական կոմիտեն այն պետական մարմինն է, որն իրավասու է պետական սեփականություն հանդիսացող ջրատնտեսական համակարգերի շահագործման և պահպանության համար (օրինակ՝ ոռոգման, ջրամատակարարման և ջրահեռացման): Համակարգում կան նաև երկու փակ բաժնետիրական ընկերություններ՝ Սևան-Հրազդանի և Ախուրյան-Արաքսի ոռոգում-ջրառ ՓԲԸ-ները, որոնք պատասխանատու են այդ տարածքներում ոռոգման համակարգերի շահագործման և պահպանության համար, ներառյալ՝ ջրամբարները, մայր ջրանցքները և պոմպակայանները:

2001 թվականին Ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին ՀՀ օրենքի և 2003թ. մարտի 13-ի Թիվ 314-Ն որոշման համաձայն երկրորդ կարգի ջրանցքների մակարդակում՝ պետական սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերը փոխանցվեցին ջրօգտագործողների ընկերություններին: Ներկայումս գոյություն ունեն 42 ՋՕԸ, որոնք պատասխանատու են 195,000 հեկտար հողատարածության ոռոգման համար: ՋՕԸ-ների խնդիրներն են ոռոգման համակարգերի շահագործումն ու պահպանությունը, ջրի բաշխումը սպասարկման տարածքում գտնվող անդամ և ոչ անդամ ջրօգտագործողների միջև, շինարարական և վերականգնման աշխատանքները, ջրամատակարար կազմակերպությունից (Ջրտնտպետկոմ) ոռոգման ջրի ձեռքբերումը կամ բնական ջրաղբյուրից ջրառի կազմակերպումը, ծառայությունների դիմաց ընկերության անդամ և ոչ անդամ ջրօգտագործողներից ջրի վարձավճարների հավաքագրումը, հիդրոտեխնիկական սարքավորումների ձեռքբերումը: Այս ՋՕԸ-ները դեռևս կարողությունների զարգացման սկզբնական փուլում են:

- **Կարգավորող հանձնաժողովը** (Հոդ.14) Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀՄԿՀ) ջրային ոլորտում իրականացնում է սակագնային քաղաքականությունը: Մասնավորապես, այն տրամադրում է ջրատնտեսական համակարգերի օգտագործման թույլտվություններ ոչ մրցակցային ջրամատակարարներին և սահմանում է սակագներ այդ օգտագործողների համար: Հետևաբար, հանձնաժողովը հաստատում է խմելու ջրի մատակարարման կազմակերպությունների կողմից ջրամատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համար սպասարկված ծառայությունների մանրաձախ սակագները, ինչպես նաև ՋՕԸ-ներին, ՋՕԸ միություններին և այլ ջրօգտագործողներին մատակարարվող ջրի սակագները:

- **Շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգի կենտրոնը** պատասխանատու է մակերևութային ջրերի որակի տվյալների հավաքագրման համար: Կենտրոնական գրասենյակը գտնվում է Երևանում, որտեղ և տեղակայված է հիմնական լաբորատորիան: 1992թ-ից հետո ջրի որակի մոնիթորինգը կտրուկ նվազել էր, որի արդյունքում ընդհատվել էր երկարաժամկետ տվյալների շարքը: 2006թ-ից կենտրոնը վերականգնել է լիարժեք գործունեությունը՝ 131 դիտակետերից վերցնելով 1200 փորձանմուշ (տարեկան 6-12 փորձանմուշ): Մոնիթորինգի կենտրոնն ունի նաև տվյալների ստուգման և վավերացման հատուկ ընթացակարգ:

- **Բնապահպանական պետական տեսչությունը** (ԲՊՏ) պատասխանատու է ջրօգտագործման թույլտվության (ՋԹ) պահանջների կատարման համար: ԲՊՏ-ն վերահսկողություն է իրականացնում ջրօգտագործման իրականացման պահանջների կատարման պահպանման նկատմամբ, սահմանված չափաքանակներից ավելի ջրային ռեսուրսներն աղտոտելու և ջրհավաք ավազաններում ջրային ռեժիմի սահմանափակումների պահպանման նկատմամբ, ջրային ռեսուրսների ջրառի ծավալների օգտագործման նպատակայնության և ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի, ինչպես նաև դրանցում պարունակվող ֆոսֆատային նյութերի չափաքանակների պահպանման նկատմամբ ըստ գետավազանների, մարզերի և համայնքների, և այլն:

3.1.1.1 Իրավասու մարմնի նշանակումը

ՋԵԴ-ում ամրագրված հիմնական պարտավորություններից մեկն է ապահովել համապատասխան վարչական միջոցառումները, այդ թվում՝ համապատասխան իրավասու մարմնի բացահայտումը, որպեսզի իրականացվեն

սույն դիրեկտիվի հրահանգները յուրաքանչյուր գետավազանի տարածքում (ՁԵԴ, Հոդ.3 (2)): Սա չի նշանակում, որ պետք է ստեղծել հատուկ մարմին. ՁԵԴ-ն հաստատում է, որ անդամ պետությունները կարող են բացահայտել արդեն իսկ գոյություն ունեցող ազգային կամ միջազգային կազմակերպություն՝ որպես իրավասու մարմին (ՁԵԴ, Հոդ.3 (6)):

Համաձայն ջրային օրենսգրքի ստեղծվում է ջրային ռեսուրսների կառավարման կառուցվածքային համակարգ՝ ներառյալ ջրային ռեսուրսների կառավարման մարմինը (ՁՌԿԳ), որը ՁԵԴ-ի համատեքստում կարող է հանդես գալ որպես իրավասու մարմին: ՁՌԿԳ-ին ջրավազանային տարածքների մակարդակում ջրային ռեսուրսների պահպանության պարտավորություններն իրականացնելու գործում աջակցում են ջրավազանային տարածքային կառավարման բաժինները:

Չափանիշ	Մոտ համարժեքություն
Օրենսդրությունը և ինստիտուցիոնալ կառուցվածքը արտացոլում է գետավազանային մոտեցումը, և գործող Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը իրականացնում է «իրավասու մարմին» գործառույթները:	

3.1.1.2 Ադմինիստրատիվ մեխանիզմների ստեղծումը միջազգային գետերի, լճերի և ափամերձ ջրերի համար

Այնտեղ, որտեղ գետերի, լճերի կամ ափամերձ ջրհավաք ավազանների տարածքները հատում են ազգային սահմանները, անհրաժեշտ է համապարփակ և արդյունավետ միջազգային համագործակցություն: ՁԵԴ-ի Հոդ.3(3) պահանջվում է, որպեսզի մեկից ավել անդամ երկրներ ընդգրկող ջրավազանները ընդունվեն որպես միջազգային գետավազանային տարածքներ և որ այդ տարածքներում ներդրված լինեն համապատասխան միջազգային մեխանիզմները՝ ներառյալ համապատասխան իրավասու մարմին բացահայտումը: Եթե (ըստ անհրաժեշտության) անդամ պետությունը պատասխանատվություն է կրում ապահովելու ՁԵԴ-ի կիրառումը միջազգային գետավազանի միայն իր տարածքի նկատմամբ, ապա իրավասու մարմինն ունի միջազգային համագործակցությանը վերաբերող որոշակի լրացուցիչ պարտականություններ:

Անդրսահմանային ջրային ռեսուրսների վերաբերյալ հարցերը լայնորեն արտացոլված են Հայաստանի օրենսդրության մեջ: ՀՀ ջրային օրենսգրքի «Անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության պայմաններ»-ի վերաբերյալ հոդված 63-ը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ձևավորվող անդրսահմանային ջրային ռեսուրսների նկատմամբ, մինչև Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելը, կիրառվում են սույն օրենսգրքով սահմանված նորմերը: Անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության պայմանները պետական սահմանի վրա սահմանվում են Հայաստանի Հանրապետության և սահմանակից երկրների միջպետական համաձայնագրերով և (կամ) պայմանագրերով: Անդրսահմանային ջրային ռեսուրսների համատեղ օգտագործման և պահպանության օպերատիվ խնդիրների լուծումն իրականացնում են մշտական գործող միջպետական հանձնաժողովները: Հայաստանի Հանրապետության հանձնախմբի կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

Հոդված 64. «Անդրսահմանային ջրային ռեսուրսների Հայաստանի Հանրապետության հանձնախմբի լիազորությունները և պարտականությունները»-ի համաձայն Անդրսահմանային ջրային ռեսուրսների ՀՀ հանձնախմբումն ունի հետևյալ լիազորությունները և պարտականությունները՝

- 1) մշակում և կառավարություն է ներկայացնում միջպետական համաձայնագրերի նախագծեր.
- 2) մշակում և կառավարություն է ներկայացնում առաջարկություններ՝ անդրսահմանային ջրային համակարգի օգտագործման համատեղ մշտական գործող միջպետական հանձնաժողովներ ստեղծելու մասին.
- 3) Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին սահմանված կարգով տեղեկացնում է անդրսահմանային ազդեցությունների մասին.
- 4) Ջրային համակարգերի կառավարման մարմին է ներկայացնում մշտական գործող միջպետական հանձնաժողովի որոշումները.
- 5) Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններ սահմանված կարգով ներկայացնում է մշտական գործող միջպետական հանձնաժողովում բարձրացված այն հարցերը, որոնք չեն կանոնակարգվում միջպետական համաձայնագրերով և (կամ) պայմանագրերով և պահանջում են համապատասխան լուծումներ.
- 6) Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններ սահմանված կարգով ներկայացնում է մշտական գործող միջպետական հանձնաժողովում առաջացած տարաձայնությունները:

ՀՀ ջրային օրենսգրքի Հոդված 112. «Անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության շուրջ ծագած վեճերի լուծումը» հաստատում է, որ անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության շուրջ ծագած վեճերը լուծվում են միջազգային պայմանագրերով սահմանված նորմերին համապատասխան, իսկ «Սույն օրենսգրքի պահանջներին չհամապատասխանող գործարքների անվավերությունը» Հոդված 113.-ի համաձայն ջրային ռեսուրսների նկատմամբ պետական սեփականության

իրավունքի, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի սեփականության, ջրային հարաբերություններում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների, ինչպես նաև սույն օրենսգրքով սահմանված ջրային հարաբերություններում վճարների սկզբունքների խախտումը կնքված գործարքներն անվավեր են:

Այս դրույթների պաշտոնական իրականացումը միջպետական համաձայնագրերի ստեղծման միջոցով բավականին սահմանափակ է, ունի դեպքից դեպք բնույթ և չի ապահովում ընդհանուր ջրավազանային կառավարման խնդիրը:

Հայաստանը Թուրքիայի հետ համաձայնագիր ունի Արաքս և Ախուրյան գետերի օգտագործման վերաբերյալ: 1927 թ. Ստորագրված Կարսի արձանագրությունն իր մեջ ներառում է դրույթներ անդրսահմանային գետերի, փոքր գետերի և վտակների հոսքի 50:50 օգտագործման իրավունքի, ինչպես նաև մի քանի հիմնական կանոնակարգեր ենթակառուցվածքների և պատվարների շինարարության վերաբերյալ: 1964 թ. Վին արձանագրություն է կնքվել Ախուրյանի ջրամբարի համատեղ կառուցման վերաբերյալ, ներառյալ պատվարի համատեղ կառուցումը և ջրի հավասարապես (50:50) հիմունքներով բաշխումը, ինչպես նաև հոսանքն ի վար մինչև Իրանի սահման ջրի օգտագործման համատեղ կարգավորումը: Ախուրյանի ջրամբարի ջրային ռեսուրսների օգտագործման և տեխնիկական շահագործման նպատակով ստեղծվել է մշտական գործող հանձնաժողով: Մեկ այլ համաձայնագիր է ստորագրվել 1973 թ. Ախուրյան գետի վրա կամուրջների շինարարության և սահմանային հարցերի վերաբերյալ ներառյալ վտակների կարգավորման կանոնները: 1987 թ. Տեխնիկական և տնտեսական գեկույցում առաջարկվել է Արաքս գետի վրա ջրամբարի միջոցով խթանել ջրային ռեսուրսների համապարփակ օգտագործումը (ռոտզման և էլեկտրաէներգիայի արտադրության համար) և կանխարգելել հայ-թուրքական սահմանի երկայնքով էրոզիայի երևույթները: 1990 թ. վականին Թուրքիայի հետ կնքվել է համաձայնագիր համատեղ հիդրոէլեկտրակայան կառուցելու հետ կապված տեխնիկական հարցերի, ինչպես նաև տեխնիկական համագործակցության վերաբերյալ, որը սակայն դեռևս կյանքի չի կոչվել:

Գոյություն ունի նաև համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև Արաքս գետի սահմանամերձ տարածքների համատեղ օգտագործման վերաբերյալ՝ ռոտզման, էներգիայի արտադրության և կենցաղային օգտագործման նպատակով: Ըստ այդ պայմանագրի, երկու երկրները անդրսահմանային Արաքս գետի հոսքը բաշխում են հավասարապես՝ 50:50 հիմունքներով: Մշակվել են նաև համագործակցության սխեմաներ հիդրոտեխնիկական օբյեկտների համատեղ կառուցման համար, ինչը չի իրագործվել, ինչպես նաև տվյալների հավաքման վերաբերյալ:

Ընդունվել են նաև հրամանագրեր և կնքվել համաձայնագրեր Հայաստանի և Վրաստանի միջև Դեբեդ գետի օգտագործման վերաբերյալ: Նմանատիպ հրամանագրեր են ընդունվել Հայաստանի և Ադրբեջանի կողմից

Թուրքիայի հետ կապված ընթացիկ զարգացումների պատճառով ջրի մատչելիության նվազումը ՀՀ կառավարության գլխավոր մտահոգությունն է: Մրցակցային (ռոտզման և ջրամատակարարում) և ոչ մրցակցային (հիդրոէներգետիկա) ջրօգտագործման համար Արաքսի գետավազանում առկա և պլանավորված Թուրքիայի հիդրավիլի ենթակառուցվածքը գետի հոսքի ռեժիմի, ինչպես նաև դինամիկայի ու մորֆոլոգիայի փոփոխությունների կհանգեցնի (UNECE 2011): Համաձայն գետի արտահոսքի վերաբերյալ Ախուրյան և Արաքս գետերի հիդրոլոգիական կայանների երկարաժամկետ գրառումների, Ախուրյան գետի հետ միացման կետից հոսքն ի վար ընկած Սուրմալուի կայանում Արաքս գետից արտահոսքի նվազող միտում է նկատվել, չնայած որ այդ միացման կետից հոսք ի վեր ընկած Երվանդաշատի կայանը ցույց է տալիս աճող միտում: Քանի որ սահմանափակ տեղեկություններ կան Սուրմալու կայանից վերև ընկած ջրառի վերաբերյալ, ներկայումս հնարավոր չէ կտրականապես եզրակացնել, որ Արաքս գետի հոսքի նվազող միտումը կապված է հոսքն ի վեր մրցակցային ջրօգտագործման համար կատարվող ջրառի հետ (Hannan, Leummens, և Matthews 2013):

Անդրսահմանային գետերի ջրերի որակի վատթարացումը նույնպես մտահոգության առարկա է, օրինակ՝ Արաքս և Ախուրյան գետերի ցրված աղտոտումը գյուղատնտեսության և անասնապահության պատճառով: Հանքարդյունաբերությունը նույնպես խնդրահարույց է, քանի որ այն ազդում է համատեղ օգտագործվող ջրատար հորիզոնների վրա, ինչպիսիք են Աղստև-Տավուշի և Փամբակ-Դեբեդ ջրատար հորիզոնները:

Այդ երկու անդրսահմանային ջրատար հորիզոնների կապակցությամբ՝ մատչելի ռեսուրսների օգտագործման համար ակնկալվում են նաև հնարավոր բախումներ, քանի որ առափնյա երկրների ջրի պահանջարկը աճում է: Անդրսահմանային գետերի և ստորգետնյա աղբյուրների հետ մեկտեղ, Արաքս/Արազ գետի հովտում Հայաստանն ու Թուրքիան կիսում են նաև կարևոր անդրսահմանային էկոհամակարգեր: Համաձայն ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի տվյալների (UNECE 2011), Արաքս/Արազ հովտում են տեղաբաշխվում մի քանի բնական և արհեստական ճահճացած հողեր, որոնք ջրային թռչունների կարևոր բնադրման տարածքներ են: Վերջին տասնամյակի ընթացքում այդ ճահճացած հողերը ձկնաբուծության զարգացման աճի պատճառով ինտենսիվ ներգործության ենթարկվեցին: Մասնավորապես, կարևոր վայր է Հայաստանում Խոր Վիրապի ճահիճը, որը 2007 թ. վականին ճանաչվել է Ռամսարի վայր:

Արփա գետի հոսքը դեպի Սևանա լիճ տեղափոխելու վերաբերյալ, Որոտան գետի հոսքի կարգավորումը երկու երկրների միջև հավասարապես բաշխելու և սակավաջուր տարիներին նվազագույն հոսքը ապահովելու վերաբերյալ, ինչպես նաև Աղստև և Տավուշ գետերի օգտագործման խնդիրը⁶:

Համենայն դեպս առավել լայն ոչ պաշտոնական համագործակցություն է ծավալվել դոնորների կողմից ֆինանսավորված ծրագրերի շրջանակներում: Բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպվել ԵՄ/ԵԽ, ՄԱԿԶՕ/ԳԵՖ, ՄԱԿԶՕ/Սիդա և ԵԱՀԿ կողմից անդրսահմանային ջրային ռեսուրսների մոնիթորինգի և կառավարման հարցերում երկխոսությունը և համագործակցությունը խթանելու համար: Առ այսօր ջանքերը հիմնականում ուղղված են Քուռի գետավազանին (Հայաստան, Ադրբեջան և Վրաստան):

Աշխատանքի հիմնական մասը ուղղված է եղել ներկայացնելու ԵՄ Ջրային շրջանակային դիրեկտիվի սկզբունքներն ու մոտեցումները, մշակելու ընդհանուր մոտեցումներ և մեթոդոլոգիաներ ջրի որակի մոնիթորինգի և գնահատման, անդրսահմանային տարածքներում գետավազանային կառավարման պլանների մշակման ուղղությամբ, ինչպես նաև ներկայացնելու մակերևութային և ստորգետնյա ջրային ռեսուրսների համապարփակ մոնիթորինգի համակարգը: Օրինակ՝ ԵՄ-ն 2002-2004թ.թ. և 2008-2013թ.թ. ծրագրեր է իրականացրել Քուռ գետի (Հայաստան, Ադրբեջան և Վրաստան) անդրսահմանային կառավարման խնդիրների վերաբերյալ: Այդ ծրագրերն աջակցել են մոնիթորինգի և տվյալների կառավարման ընդհանուր համակարգ մշակելու գործին՝ ուղղված Քուռ գետավազանի անդրսահմանային համագործակցության ուժեղացմանը:

Դոնոր կազմակերպությունները ջանքեր են գործադրել ներգրավելու Իրանը և/կամ Թուրքիան, սակայն հաջողության չեն հասել:

Չափանիշ	Մոտ համարժեքություն
Չնայած գործնականում միջկառավարական համագործակցությունը բավականին սահմանափակ է, ՀՀ ջրային օրենսգիրքը ներկայացնում է բավականին մանրամաստ և ինստիտուցիոնալ մեխանիզմներ անդրսահմանային համագործակցության համար, հետևաբար կարելի է ընդունել, որ ԶՇԴ-ի պահանջները լիովին կատարված են:	

3.1.2. Գետավազանային կառավարում

ԶՇԴ-ի կենտրոնական առանձնահատկությունը, որի շուրջ համախմբված են բոլոր փառացած տարրերը, այն է, որ, որպես հիմնական միավոր օգտագործել գետերի ավազանները՝ ջրային ռեսուրսների պլանավորման և կառավարման միջոցառումների համար: Սա նշանակում է, որ ջուրը բնութագրվում է ֆիզիկական և հիդրոլոգիական սահմաններով և ոչ թե քաղաքական և վարչական սահմաններով: Անդամ պետությունները պարտավոր են բացահայտել իրենց տարածքում գտնվող առանձին գետերի ավազանները և առանձնացնել դրանք որպես գետավազանային տարածքներ: Դրանից հետո, առաջանում են մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ գետավազանի բնութագրական տվյալների վերլուծություն՝ ներառյալ բնապահպանական և տնտեսական վերլուծությունը, հաստատել մոնիթորինգի ծրագրեր և ապահովել, որպեսզի յուրաքանչյուր գետավազանի համար մշակվի գետավազանային կառավարման պլան (ԳԿՊ):

Ըստ էության պլաններն իրականացնում են հետևյալ գործառնությունները.

- Նրանք հանդես են գալիս որպես հավաքագրված տվյալների գույքագրման և փաստաթղթավորման մեխանիզմ՝ ներառյալ մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների բնապահպանական խնդիրները, որակը և քանակը, ջրային ռեսուրսների վրա մարդկային գործունեության ազդեցությունը
- Գետավազանի տարածքում համակարգում են միջոցառումների ծրագրերը և այլ համապատասխան ծրագրեր
- նրանք ձևավորում են առաջընթացի հաշվետվության հիմնական մեխանիզմը:

Մինչև ԳԿՊ-ի մշակման ավարտը պլանավորման գործընթացի կարևոր առանձնահատկությունը շահագրգիռ կողմերի և հասարակության հետ խորհրդակցելն է բովանդակության վերաբերյալ և առաջարկների ընդգրկումը:

3.1.2.1 Գետավազանային տարածքների բացահայտումը

ԶՇԴ-ի Հոդ.3(1) պահանջում է, որպեսզի անդամ պետությունները բացահայտեն իրենց տարածքում գտնվող առանձին գետերի ավազանները և որպես սույն դիրեկտիվի նպատակ, հաստատեն դրանք որպես առանձին գետավազանային տարածքներ: Փոքր գետերի ավազանները կարող են ընդգրկվել մեծ գետերի ավազաններում կամ որտեղ հարմար է միանալ հարևան փոքր ավազանների հետ՝ ձևավորելով առանձին գետավազան:

6, Ref. 19 - Toward Integrated Water Resources Management in Armenia, Winston Yu, Rita E. Cestti, and Ju Young Lee, 2015 International Bank for Reconstruction and Development

Սկզբունքորեն, գետավազանային կառավարման մոտեցումը որդեգրված է Հայաստանի օրենսդրական համակարգում: Այսպիսով, համաձայն Ջրային օրենսգրքի 10-րդ հոդվածի Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը «ապահովում է ջրավազանային կառավարման պլանների մշակումը և դրանց իրականացումը» և 17-րդ հոդվածով մշակում է ջրավազանային կառավարման պլաններ, որոնք հաստատում է կառավարությունը: Ջրավազանային կառավարման պլանավորման միջոցով հավասարակշռվում են ջրօգտագործողների, ներառյալ՝ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի փոխկապակցված հարաբերությունները:

Ավելին, ջրօգտագործման թույլտվությունը հատուկ կապված է ՋԿՊ-ների հետ: Օրինակ, 28 և 40 հոդվածների համաձայն յուրաքանչյուր ջրօգտագործման թույլտվության օգտագործումը և ջրային համակարգի օգտագործման թույլտվությունը պետք է համապատասխանի տվյալ ջրավազանային կառավարման պլանին:

Եթե ներդրումային ծախսերը կարող են երաշխավորվել, ապա Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը, Ջրի ազգային խորհրդի դրական եզրակացության դեպքում, ջրավազանային կառավարման պլանների հիման վրա կարող է ջրօգտագործման թույլտվություն տալ ավելի երկար ժամկետով, որը չի կարող գերազանցել 40 տարին (Հոդված 33):

Հայաստանում առանձնացվել են գետավազանային տարածքները: ՀՀ ջրային օրենսգրքում ամրագրվել է այն մոտեցումը, որը մշակվել է ՋՇԴ-ում: «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքի ջրային հաշվեկշռի տարրերը բաշխված են ըստ 14 խոշոր գետային ավազանների, տեղաբաշխված են 7 ջրավազանային կառավարման տարածքների միջև, որոնք իրենց հերթին գտնվում են 6 աղմինիստրատիվ միավորների ներքո՝ Հյուսիսային ջրավազանային տարածքային կառավարման բաժին (ՋՏԿԲ), Հրազդան ՋՏԿԲ, Սևան ՋՏԿԲ, Արարատյան ՋՏԿԲ, Ախուրյան ՋՏԿԲ և Հարավային ՋՏԿԲ:

Չափանիշ	Մոտ համարժեքություն
Հայաստանում գործում է գետավազանային կառավարումը: Ջրի ազգային ծրագրի մասին ՀՀ օրենքում ամրագրված են գետային ավազանները և ջրավազանային կառավարման տարածքները:	

3.1.2.2 Գետային ավազանների բնութագրիչների վերլուծություն

ՋՇԴ-ի Հոդ.5-ը պահանջում է, որպեսզի ԵՄ յուրաքանչյուր անդամ կառավարություն իր գետային ավազանների համար իրականացնի.

- Բնութագրիչների վերլուծություն (ներառյալ ջրային մարմնի տեսակը)
- Մարդու գործունեության ազդեցության ստուգում մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների վիճակի վրա
- Ջրի օգտագործման տնտեսական վերլուծություն:

Հավելվածներ II և III սահմանում են մանրամասն տեխնիկական մասնագրերը բնապահպանական և տնտեսական բնութագրիչները վերլուծելու համար, այդ թվում՝ էական մարդածին ճնշումները և ազդեցությունները մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա գնահատելու համար: Այս վերլուծությունը հիմք է հանդիսանում մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների վիճակը գնահատելու համար և ցույց է տալիս, թե որ ջրային ռեսուրսն է «վտանգի տակ»: Մոնիթորինգի ցանցերի և միջոցառումների ծրագրի հետագա զարգացումները հիմնված են լինելու այս վերլուծությունների արդյունքների վրա:

Ինչ-որ չափով այդ տիպի գնահատումը նախատեսվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Օրինակ՝ 2005թ. «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքը սահմանում է ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթները հետևյալ ուղղություններով. ջրային ռեսուրսների կայուն կառավարում, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության գերակայությունները, ջրային ռեսուրսի հաշվառումը և գնահատումը, ջրային ռեսուրսների առաջարկի և պահանջարկի ձևավորում, ջրավազանների պլանավորում և կառավարում և ջրի ազգային ծրագրի հիմքերի նախապատրաստում:

Ջրային օրենսգրքում կան նաև ջրային ռեսուրսների մոնիթորինգի կանոնները: «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ն ունի որոշակի գործառնություններ և պարտականություններ՝ կապված ջրի որոշ պարամետրերի վերլուծության հետ:

ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ն իրականացնում է հետևյալ գործառնությունները.

մասնակցում է շրջակա միջավայրի վիճակի, դրա վրա ներգործության և հետևանքների մոնիթորինգի կազմակերպման պետական հայեցակարգի, քաղաքականության և ռազմավարությունների, դրա կենսագործման պետական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը.

ապահովում է շրջակա միջավայրի վրա ներգործության ու դրա հետևանքների, դիտարկումների, տվյալների կուտակման, պահպանման, մշակման, վերլուծության և տարածման մեթոդների, տեխնիկական միջոցների ու համակարգերի կատարելագործումն ու հուսալի աշխատանքը, ստացված ինֆորմացիայի հավաստիության

անհրաժեշտ մակարդակը.

ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ այդ աշխատանքները միջազգային ստանդարտներին համապատասխանացնելու, բնագավառում ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների ներդրման, մոնիթորինգի դիտացանցի և նյութատեխնիկական բազայի զարգացման ուղղությամբ, և այլն:

Որպեսզի մշակվեն և կիրառվեն ջրի որակի ստանդարտները՝ օգտագործելով միջազգայնորեն ընդունված մեթոդաբանությունը, ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները նվազեցնելու նպատակով և ջրի որակը ապահովելու համար՝ հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, ՀՀ կառավարությունը 2011թ. հունվարի 27-ին ընդունել է «Կախված տեղանքի առանձնահատկություններից յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» թիվ 75-Ն որոշումը, որը հիմնված է միջազգային ընդունված մեթոդաբանությունների վրա և գնահատվել է որպես համեմատաբար առաջադեմ փաստաթուղթ:

Կառավարությունը մշակել և ընդունել է նաև ստորև ներկայացված որոշումները.

1. 2011թ. հունիսի 30-ի «Հստ Հայաստանի Հանրապետության ջրավազանային տարածքների՝ խմելու-կենցաղային, գյուղատնտեսական նպատակներով ջրի պահանջարկի, ինչպես նաև բնապահպանական թողքերի գնահատումները սահմանելու մասին» թիվ 927-Ն որոշումը

2. 2010թ. հունվարի 14-ի «Արդիական տեխնոլոգիաների կիրառմամբ, ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումները ւսահանելու մասին» թիվ 118-Ն որոշումը:

Այս որոշումները կարգավորում են ջրային ռեսուրսների որակի և քանակի գնահատումն ըստ ոլորտային ջրօգտագործման, ինչպես նաև սահմանում են բնապահպանական թողքի գնահատման մեթոդաբանությունը՝ ջրային ռեսուրսների անվտանգ էկոլոգիական վիճակը ապահովելու համար: Սակայն, թողքի սահմանված չափանիշներն ավելի շատ ելնում են հիդրոլոգիական, քան թե էկոլոգիական պայմաններից, այն դեպքում, երբ էկոլոգիական թողքի հիմնարար հայեցակարգը վերաբերում է ջրի որակի և քանակի սերտ փոխկապակցվածությանը:

Զափանիշ	Մասնակի համարժեքություն
Առկա են տարբեր օրենսդրական պահանջներ՝ ջրային ռեսուրսները գնահատելու և այլ հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են ջրի պահանջարկի գնահատում, ջրի օգտագործման և պահպանման առաջնայնություններ, արտակարգ իրավիճակներ, և այլն: Սակայն, սրանք հատուկ կապված չեն ՋՏԿ պլանավորման հետ, և չկա ոչ մի օրենսդրական պահանջ կամ քաղաքականության դիրեկտիվ գետավազանային տարածքների բնութագրերը վերլուծելու համար, ինչպես ակնկալում է ՋՇԴ-ն: Ավելին, կասկածի ենթակա է գոյություն ունեցող կազմակերպությունների ֆինանսական ապահովությունը կամ տեխնիկական զինվածությունը՝ վերլուծություններն իրականացնելու իրենց գործառնություններն ապահովելու համար:	

3.1.2.3 Ջրի որակի մոնիթորինգի ծրագրեր

ՋՇԴ-ի 8-րդ հոդվածը սահմանում է պահանջներ մակերևութային և ստորերկրյա ջրերի վիճակի և պահպանվող տարածքների մոնիթորինգի վերաբերյալ: Մոնիթորինգի ծրագրերը պահանջում են ստեղծել ջրի վիճակի հետևողական և համապարփակ ակնարկ յուրաքանչյուր գետավազանի ներսում:

Մոնիթորինգի նպատակն է յուրաքանչյուր գետավազանի տարածքի համար հիմնել ընդհանուր տվյալների համակարգ: Այն նաև պետք է թույլ տա, դասակարգելու բոլոր մակերևութային ջրային ռեսուրսները մեկից հինգ դասերի և ստորերկրյա ռեսուրսները՝ մեկից երկու դասերի: Մոնիթորինգի ծրագրերի համար ներկայացվող մանրամասն (նվազագույն) տեխնիկական պահանջները սահմանված են V հավելվածում և ապահովում են ստորև բերված հարցերը.

- Ռիսկի տակ գտնվող բոլոր ստորերկրյա ջրային ռեսուրսների կամ դրանց խմբերի քիմիական բաղադրությունը
- Բոլոր ստորերկրյա ջրային ռեսուրսների կամ դրանց խմբերի քանակական տվյալների հավաստի գնահատում
- Անդամ պետությունների սահմանները հատող ստորերկրյա ջրային ռեսուրսների հոսքի ուղղության և քանակի գնահատումները: Սա պետք է օգտագործվի երկարաժամկետ միտումների գնահատման ժամանակ, որպես բնական պայմանների փոփոխությունների և անտրոպոգեն գործունեության հետևանք
- Միջազգային սահմանները տեղափոխվող կամ դեպի ծով հեռացվող աղտոտիչների գնահատումները
- Ջրային ռեսուրսների վիճակի փոփոխության գնահատումը
- Ջրային ռեսուրսների բնապահպանական նպատակներին չհասնելու պատճառները
- Վթարային աղտոտման ուժգնությունը և հետևանքները
- Պահպանվող տարածքներում չափանիշներին ու նպատակներին համապատասխանության գնահատականներ
- Մակերևութային ջրային ռեսուրսների քանակական ելակետային պայմաններ (որտեղ դրանք առկա են):

Ջրային օրենսգրքով կարևորվում են մոնիթորինգի ծրագրերը որպես ջրային ռեսուրսների կառավարման

անբաժանելի բաղադրիչ: Օրինակ՝ հոդված 1-ում ջրային ռեսուրսների մոնիթորինգի վերաբերյալ ներառված են օրենսգրքում օգտագործվող հասկացությունները

ջրային ռեսուրսների մոնիթորինգ՝ հիդրոլոգիական, հիդրոերկրաբանական, հիդրոֆիզիկական և հիդրոքիմիական ցուցանիշների նկատմամբ կանոնակարգված (և տարածման ենթակա) դիտարկումների համակարգ, որն ապահովում է դրանց հավաքումը և մշակումը

պետական ջրային կադաստր՝ մշտապես գործող համակարգ, որը համապարփակ տվյալներ է գրանցում ջրային ռեսուրսների քանակական ու որակական ցուցանիշների, ջրհավաք ավազանների, ջրավազանների հուններից ու ավերից արդյունահանվող նյութերի, կենսառեսուրսների կազմի ու չափաքանակների, ջրօգտագործողների, ջրօգտագործման թույլտվությունների և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների մասին:

Ավելին, գործնականում տարբեր մոնիթորինգային գործընթացներ են իրականացվում: Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոնը (ՇՄՆՄԿ) իր իրավասության սահմաններում իրականացնում է հետևյալ գործառնությունները.

- մասնակցում է շրջակա միջավայրի վիճակի, դրա վրա ներգործության և հետևանքների մոնիթորինգի կազմակերպման պետական հայեցակարգի, քաղաքականության և ռազմավարությունների, դրա կենսագործման պետական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը.
- ապահովում է շրջակա միջավայրի վրա ներգործության ու դրա հետևանքների, դիտարկումների, տվյալների կուտակման, պահպանման, մշակման, վերլուծության և տարածման մեթոդների, տեխնիկական միջոցների ու համակարգերի կատարելագործումն ու հուսալի աշխատանքը, ստացված ինֆորմացիայի հավաստիության անհրաժեշտ մակարդակը
- զարգացնում է մոնիթորինգի դիտացանցը և պատրաստում տեխնիկական հաշվետվություններ:

Ի վերջո, ՇՄՆՄԿ-ն իրականացնում է մակերևութային ջրերի մոնիթորինգ՝ նմուշառման 131 դիտակետում, որոնք ընդգրկում են հանրապետության մեծ և միջին մեծության մոտ 50 գետեր, 6 ջրամբարներ և Սևանա լիճը: Տարեկան կտրվածքով մակերևութային ջրերից վերցվում է 1000-1200 փորձանմուշ (յուրաքանչյուր հատվածքից նմուշառումն իրականացվում է տարեկան 7-12 անգամ): Յուրաքանչյուր վերցված նմուշի համար որոշվում է 40-65 ցուցանիշ, այդ թվում ջրաքիմիական հիմնական բաղադրիչներ, ծանր մետաղներ, քլորօրգանական պեստիցիդներ և այլն: Ներկայումս ՀՀ-ում մակերևութային ջրերի քիմիական որակի մոնիտորինգը կատարվում է Եվրամիության Ջրի շրջանակային դիրեկտիվի սկզբունքներին համահունչ: Գնահատման համակարգը, որը սահմանվել է համաձայն ՀՀ կառավարության 2011թ.-ի հունվարի 27-ի N 75-Ն որոշման, կիրառվում է 2013թ.-ի հունվարից: Ըստ նշված որոշման, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի համար ընդունվել են ջրի քիմիական որակի գնահատման նորմեր՝ ելնելով տեղանքի առանձնահատկություններից: Մշակվել է դասակարգման սխեմա, որը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր տարրի համար տարբերակում է կարգավիճակի 5 դաս՝ գերազանց (1 դաս), լավ (2 դաս), միջակ (3 դաս), անբավարար (4 դաս) և վատ (5 դաս): Չի իրականացվում կենսաբանական մոնիտորինգ, որի պատճառով չի կատարվում ջրի որակի էկոլոգիական գնահատում համաձայն ՋՇԴ-ի:

«Հիդրոոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ը Հայաստանում մակերևութային ջրերի քանակի և մթնոլորտի մոնիթորինգ իրականացնող հիմնական իրավասու մարմինն է: Այն գտնվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կազմում: Ներկայումս կազմակերպությունը շահագործում և պահպանում է 47 օդերևութաբանական (ներառյալ 6 լեռնային և 3 մասնագիտացված կայաններ), 33 ագրոօդերևութաբանական, 7 հիդրոլոգիական կայաններ և 94 հիդրոլոգիական դիտակետ: Հայհիդրոմետի հիմնական գործառնություններից է կանխատեսումների կազմումը, ինչը շատ կարևոր է ջրային ռեսուրսների կառավարման, ինչպես կարճաժամկետ (ջրհեղեղի կամ երաշտների), այնպես էլ երկարաժամկետ (օրինակ՝ սեզոնային գյուղատնտեսության պլանավորման) աշխատանքների համար:

Այնուամենայնիվ, ջրի քանակի և որակի հավաստի, ժամանակին, լավ որակի և հանրությանը հասանելի տվյալների ձեռք բերումը Հայաստանում գործող ջրային ռեսուրսների կառավարման և պլանավորման համակարգի հիմնական մարտահրավերներից է: Ակնհայտ է, որ մոնիթորինգի ենթակառուցվածքներում (ներառյալ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը) տասնամյակների ընթացքում կատարվել են անբավարար ներդրումներ, որոնք հնարավորություն չեն տվել ներդնելու տվյալների հավաքագրման, ստուգման և կառավարման նոր տեխնոլոգիաներ ու մոտեցումներ: Մոնիթորինգի համար պատասխանատու տարբեր գերատեսչությունների միջև համակարգումը և ներդաշնակեցումը դարձել է հրամայական:

Չափանիշ	Մասնակի համարժեքություն
Մոնիթորինգի ծրագրերի անհրաժեշտությունը կարևորվել է ջրի քաղաքականության շրջանակներում, և իրականացվում են որոշ մոնիթորինգի ծրագրեր: Դրանք կոնկրետ կապված չեն գետավազանների հետ: Գործնականում տեխնիկական և ֆինանսական կարողությունների բացակայությունը խոչընդոտում է հետագա զարգացմանը:	

3.1.2.4 Գետավազանային կառավարման պլանների մշակում

ՋՇԴ-ի հիմնական բաղադրիչներից են գետավազանային կառավարման պլանները, որոնք վերանայվում են վեց տարին մեկ անգամ և որոնք յուրաքանչյուր գետավազանի համար սահմանում են պահանջվող գործողություններ շրջակա միջավայրի որակի նպատակներին հասնելու համար:

Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ապահովի, որ գետավազանային կառավարման պլանը (ԳԿՊ) մշակված է յուրաքանչյուր գետավազանի ողջ տարածքի համար (հոդված 13): Սա արդյունավետորեն ապահովում է միջոցառումների ծրագրի փոխանցման մեխանիզմը՝ «լավ կարգավիճակի» հասնելու համար: Անդրաահմանային գետերի ավազանների դեպքում, անդամ պետությունները պետք է աշխատեն համատեղ, նպատակ ունենալով մշակել միասնական միջազգային ԳԿՊ: Եթե միասնական պլանը չի մշակվում, ապա յուրաքանչյուր անդամ պետություն պատասխանատվություն է կրում մշակելու մասնակի ԳԿՊ՝ իր տարածքում գտնվող մասի համար:

Հավելված VII սահմանում է այն տարրերը, որոնք պետք է ներառվեն յուրաքանչյուր ԳԿՊ-ի կազմում (տես ստորև Աղ.2): Պահանջվող տեղեկատվությունը բավականին ծավալուն է (տես ստորև բերված աղյուսակը), ապահովելով գետավազանային պլանավորման գործընթացում բոլոր ասպեկտները, եթե անհրաժեշտ է Հանձնաժողովին: Լրացուցիչ տեղեկությունների մատչելիությունը պետք է հասանելի լինի անդամ պետության կողմից: Ծրագրում պետք է լինի նաև, այսպես կոչված, բացթողումների վերլուծությունը, որտեղ յուրաքանչյուր ջրային ռեսուրսի համար, պետք է բացահայտվի ՋՇԴ-ի պահանջներին հակասող առկա վիճակ:

ՋՇԴ-ում ԳԿՊ-ների մշակման կարևոր տարրերից է հասարակության մասնակցության ապահովումը:

ՋՇԴ-ի հոդված 14-ը պահանջում է, որպեսզի Անդամ երկրները խթանեն բոլոր հետաքրքրված կողմերի ակտիվ մասնակցությունը Դիրեկտիվի իրականացմանը և գետավազանային կառավարման պլանների մշակմանը: Անդամ երկրները պարտավոր են իրազեկելու և խորհրդակցելու հասարակության հետ՝ ներառյալ օգտագործողներին, մասնավորապես.

- Գետավազանային կառավարման պլանների մշակման ժամանակացույցի և աշխատանքային պլանի, ինչպես նաև խորհրդատվության դերի վերաբերյալ
- Ելակետային տվյալներ գետում ջրի կառավարման կարևոր հարցերի վերաբերյալ
- Գետավազանային կառավարման պլանի նախագծի վերաբերյալ:

Ամենաքիչը 6 ամիս պետք է տրվի կարծիքների համար՝ ակտիվորեն ներգրավելու և խորհրդակցելու հնարավորություն ստեղծելու համար: ԳԿՊ-ն պետք է ունենա հասարակության իրազեկման և խորհրդատվության իրականացման վերաբերյալ միջոցառումների ամփոփագիր, արդյունքները և պլանում տեղ գտած փոփոխությունները (ՋՇԴ, Հավելված VII):

Աղյուսակ 2–Գետավազանային կառավարման պլանում արտացոլված հարցերի ամփոփում

- Գետավազանի տարածքի պարամետրերի ընդհանուր բացատրություն, ներառյալ մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների տեղադրման և սահմանների քարտեզը, ինչպես նաև ավազանի ներսում գտնվող մակերևութային ջրային ռեսուրսների տեսակների քարտեզը:
- Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների վիճակի վրա անտրոպոգեն գործունեության ազդեցությունների և ճնշումների ամփոփումը, ներառյալ կետային աղտոտման աղբյուրները, ցրված աղտոտումը և դրա հետ կապված հոդօգտագործման խնդիրները, ջրի քանակական վիճակը, ներառյալ ջրառը, ինչպես նաև մարդու գործունեության հետ կապված ջրի վիճակի վրա այլ ազդեցությունների վերլուծություն
- Մոնիթորինգի ցանցի քարտեզ
- Մոնիթորինգային ծրագրերի արդյունքների քարտեզ, որի վրա ցույց է տրված բոլոր ջրային ռեսուրսների և պահպանվող տարածքների վիճակը
- Բոլոր ջրային օբյեկտների համար սահմանված բնապահպանական խնդիրների ցանկը, ներառյալ այն տեղերը, ուր տեղի են ունեցել ջրօգտագործման շեղումներ
- Զրոգտագործման տնտեսական վերլուծության ամփոփում
- Միջոցառումների ծրագրի կամ ծրագրերի ամփոփում
- Այլ ծրագրերի և մոնիթորինգի պլանների գրանցում և դրանց բովանդակության ամփոփում
- Հասարակայնության ներգրավման և խորհրդատվության ուղղությամբ իրականացված միջոցառումների ամփոփում, արդյունքները և պլանում տեղ գտած փոփոխությունները
- Իրավասու մարմինների ցանկը:
- Ելակետային փաստաթղթերի և տվյալների ձեռքբերման համար կոնտակտներ և ընթացակարգեր, ներառյալ փաստացի մոնիթորինգի տվյալները:

Զրային շրջանակային դիրեկտիվի (2000/60/ EC) ընդհանուր իրականացման ռազմավարության ուղեցուցային փաստաթուղթ թիվ 1-ի հիման վրա


2007 թվականից սկսած մի շարք գետավազանային պլանավորմանն ուղղված աշխատանքներ են իրականացվել կամ իրականացման ընթացքում են տարբեր միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորված ծրագրերով: 2008 թվականին հետևելով Ջրային օրենսգրքի պահանջներին ԱՄՆ ՄՁԳ-ի աջակցությամբ պատրաստվեց մոդելային ուղեցույց ԳԿՊ մշակելու համար: Մոդելային ուղեցույցը հիմնված է ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման (ՋՌՀԿ) սկզբունքների և ԵՄ ՋՇԴ-ի դրույթների վրա: Սակայն, այս մոդելը չունի պաշտոնական կարգավիճակ և հայտնի չէ, թե որքանով հաշվի կառնվի և կկիրառվի այլ դոնոր ծրագրերի կողմից:

Տարածքային ընդգրկման առումով, Հայաստանի գրեթե բոլոր գետավազանային կառավարման տարածքներն ընդգրկվել են ծրագրերում (տես ստորև քարտեզը): Սակայն ոչ մի պլան դեռևս չի հաստատվել ՀՀ կառավարության կողմից, հետևաբար նրանք իրավական հիմք չունեն: Նման պլանների հաստատումը Կառավարության կողմից անհրաժեշտ է, որպեսզի կառավարության բոլոր մակարդակներում ապահովվի հետևողական պլանավորման տեսլականը և ապագա ներդրումների հստակ առաջնահերթությունները:

Հայաստանում ջրային ռեսուրսների պլանավորման գործում անշուշտ արժեքավոր դասեր և տեղեկատվություն տրամադրեցին (2008-2010) թ.թ. պլանավորմանն ուղղված ջանքերը: Ավելին, հաշվի առնելով, որ առկա մոդելային ուղեցույցը պետք է հետագայում հարմարեցնել տեղական պայմաններին, 2011 թ.-ին ՀՀ կառավարությունն արձանագրեց այն տարրերը, որոնք պետք է ընդգրկվեն յուրաքանչյուր ԳԿՊ-ում:

Ջրավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությունը, որը մշակվել է ԵՄ ՋՇԴ-ի դրույթներին համահունչ, ներկայումս հիմք է հանդիսանում երկրում ԳԿՊ-ների մշակման համար: Արձանագրությունը, համենայն դեպս, լիովին չի համապատասխանում Ջրային օրենսգրքին, որտեղ առանձնահատուկ նախատեսվում է, որ «Ջրավազանային կառավարման պլանավորման միջոցով հավասարակշռվում են ջրօգտագործողների, ներառյալ՝ համայնքների, էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի փոխկապակցված հարաբերությունները»: ԵՄ ՋՇԴ-ի մոտեցումն ավելի նեղ է և ուղղված է միայն ջրային էկոհամակարգի պահպանությանը:

Հայաստանում ԳԿՊ-ների ընդգրկման քարտեզը⁷



7. Toward Integrated Water Resources Management in Armenia, Winston Yu, Rita E. Cestti, and Ju Young Lee, 2015 International Bank for Reconstruction and Development

Զափանիշ	Մասնակի համարժեքություն
Գործնականում գետավազանային կառավարման պլաններ մշակվել են տարբեր դոնորային ծրագրերով, սակայն այդ պլանները որևէ պաշտոնական կարգավիճակ չունեն: Արդյունքում, պլանները չեն մշակվել մեկ ընդհանուր ձևաչափով (չնայած 2011թ.-ին Կառավարության կողմից ընդունված մոդելային պլանի բովանդակության): Անհրաժեշտ է առավել լիարժեք ձևակերպել գետավազանային կառավարման պլանավորումը, տալ դրանց իրավական հիմք և օրինական ուժ (որը պաշտոնապես պետք է ընդգրկի պահանջներ խորհրդատվության և վերանայման համար):	

3.1.2.5 Միջոցառումների ծրագրի նախապատրաստում

Միջոցառումների ծրագիրը գետավազանի կառավարման պլանավորման կարևորագույն մասն է, քանի որ այնտեղ շարադրված են գործողություններ, որոնք պետք է իրականացվեն պլանի ժամանակահատվածում՝ ՋԵԴ-ի նպատակները ապահովելու համար: Այն կառուցվում է բացթողումների վերլուծության հիման վրա և ներառում է հետևյալ նկատառումները.

- Ջրառի և ջրահեռացման լիցենզավորման գործող ընթացակարգի վերաբերյալ ցանկացած փոփոխություն կատարելու մասին առաջարկներ, եթե այն [գործող ընթացակարգը] չի ապահովում Դիրեկտիվի պահանջները:
- Համայնքի օրենսդրությամբ անհրաժեշտ է իրականացնել **Հիմնական միջոցառումներ**՝ ջրային ռեսուրսները գետավազանի տարածքում պահպանելու համար, այնպես ինչպես շարադրված է առնչվող դիրեկտիվներում (Քաղաքային կոյուղաջրերի մաքրման, Գյուղատնտեսական աղբյուրներից նիտրատներով ջրերի աղտոտման դեմ պահպանության, և այլն):
- Նախատեսված ցանկացած գնագոյացման միջոցները կամ այլ տնտեսական գործիքները, որոնք կխրախուսեն առավել կայուն ու արդյունավետ ջրօգտագործումը
- Եթե վերոնշյալը բավարար չէ ապահովելու Դիրեկտիվի պահանջները, ապա Անդամ պետությունները կարիք կունենան աշխատացնելու **լրացուցիչ միջոցառումներ**, ինչպես ներկայացված է աղյուսակ 3-ում
- Բացառիկ դեպքերում լրացուցիչ միջոցառումներ կպահանջվեն ջրային միջավայրը պահպանելու համար: Սա կարող է լինել միջազգային գետավազաններում:

Միջոցառումների ծրագիրը պետք է նաև բացահայտի.

- Գետավազանի տարածքում ցանկացած խիստ փոփոխված և արհեստական ջրային ռեսուրսները և անհրաժեշտ միջոցառումները՝ ապահովելու և պահպանելու լավ էկոլոգիական պոտենցիալի փոքր նպատակները: Գործողությունները պետք է ապահովեն լավ էկոլոգիական պոտենցիալի փոքր նպատակների ձեռքբերումը:
- Մշտական կամ ժամանակավոր ցանկացած շեղումները, որոնք ակնկալվում են առանձին ջրային ռեսուրսներում:

Աղյուսակ 3 – Միջոցառումների ծրագրում ընդգրկվելիք միջոցառումները

Նշված դիրեկտիվներում պահանջվող միջոցառումները	Առաջարկվող լրացուցիչ միջոցառումները
• Լոգանքի ջրի դիրեկտիվ - (76/160/EEC) • Թռչունների դիրեկտիվ - (79/04/EEC) • Խմելու ջրի դիրեկտիվ - (80/778/EEC) • փոփոխված սույն դիրեկտիվով - (98/83/EC) • Խոշոր վթարների (Մեկտա II) դիրեկտիվ - (96/82/EC) • Շրջակա միջավայրի վրա ազդեցության դիրեկտիվ - (85/337/EEC) • Կոյուղու տիղմի դիրեկտիվ - (86/278/EEC) • Քաղաքային կոյուղաջրերի մաքրման դիրժ - (91/271/EEC) • Բույսերի պահպանության ապրանքների դիրեկտիվ - (91/414/EEC) • Նիտրատների դիրեկտիվ - (91/676/EEC) • Բնակավայրերի դիրեկտիվ - (92/43/EEC) • Աղտոտման համապարփակ կանխման և վերահսկողության դիրեկտիվ - (96/61/EC)	• Օրենսդրական, վարչական, տնտեսական և ֆինանսական գործիքներ • Ջրառի և ջրահեռացման հսկողություն • Բանակցված բնապահպանական համաձայնություններ • Լավագույն փորձի կանոններ • Պահանջի կառավարման միջոցներ • Արդյունավետություն և կրկնակի օգտագործում • Ջրատար հորիզոնների արհեստական վերալիցքավորում • Խոնավ տարածքների վերականգնում • Շինարարական ծրագրեր • Տարածքների աղաղակում • Վերականգնման ծրագրեր • Կրթական ծրագրեր • Գիտական, զարգացման և ցուցադրական ծրագրեր • Այլ համապատասխան միջոցառումներ:
Հիմնված Դիրեկտիվ 2000/60/EC –ի Հավելված VI (Մաս A)	Հիմնված Դիրեկտիվ 2000/60/EC –ի Հավելված VI (Մաս B)

Հայաստանում տարբեր դոնոր ծրագրերով մշակված ջրավազանային կառավարման պլանները պարունակում են միջոցառումների ծրագրեր, որոնց միջոցով կարելի է հասնել պլանի բնապահպանական կամ այլ նպատակներին: Սակայն, այդ միջոցառումները չունեն այն ազդեցությունը կամ արդյունքը, որոնք նախատեսված են եղել ՁՇԴ-ում: Առաջինը, քանի որ ԳԿՊ-ները չունեն իրավաբանական կարգավիճակ, ապա միջոցառումների ծրագիրը ևս չունի այդ կարգավիճակը: Բոլոր դեպքերում հիմնական միջոցառումների պարտադիր լինելը ՁՇԴ-ի կարևոր պահանջն է և երկրորդ պարտավորությունը անհրաժեշտության դեպքում իրականացնել լրացուցիչ միջոցառումներ՝ շրջակա միջավայրի պահպանության թիրախները բավարարելու համար:

Քանի որ մշակված ՁԿՊ-ներից և ոչ մեկը դեռևս պաշտոնապես չի հաստատվել, դրանցում ընդգրկված միջոցառումների ծրագրերը ևս իրավական ուժ չունեն:

Չափանիշ	Ցածր համարժեքություն
ԳԿՊ-ները, որոնք մշակվել էին միջոցառումների պլանները բացահայտելու համար, չունեցան որևէ իրավական արդյունք: Քանի որ գետավազանային կառավարման պլանավորումն օրենսդրորեն ամրագրված է, անհրաժեշտ է ազգային օրենսդրության մեջ բացահայտել այն օրենսդրական դրույթները, որոնք պետք է կիրառվեն ԳԿՊ-ներում և ներկայացնեն իրավական պարտավորությունները լրացուցիչ միջոցներ հաշվի առնելու համար, ինչպես որ սահմանված է ՁՇԴ-ում:	

3.2 Համադրումը Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվին

Քաղաքահամ ջրերի էկոհամակարգերի համար լուրջ վտանգ կարող են լինել հեռացված քաղաքային կոյուղաջրերը: Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվը (UWWTD)⁸ նպատակաուղղված է պահպանելու շրջակա միջավայրը քաղաքային և արդյունաբերական կեղտաջրերի փաստակարար ազդեցությունից (Դիրեկտիվի հավելված III): Այն վերաբերում է կոմունալ-կենցաղային, արդյունաբերական և անձրևաջրերի հավաքմանը, մաքրմանը և հեռացմանը:

Դիրեկտիվը հատկապես պահանջում է.

- 2000-ից ավել բնակչությանը համարժեք ազլոմերացիաներից կեղտաջրերի հավաքում և մաքրում⁹
- 2000-ից ավել բնակչությանը համարժեք ազլոմերացիաներից բոլոր կեղտաջրերի երկրորդական մաքրում և զգայուն համարվող տարածքներում և դրանց ջրհավաք ավազաններում 10000-ից ավել բնակչությանը համարժեք ազլոմերացիաների կեղտաջրերի մաքրում առավել առաջադեմ մեթոդներով
- Նախնական թույլտվություն պահանջել քաղաքային կոյուղաջրերի համակարգ սննդի վերամշակման և բոլոր տեսակի արդյունաբերական կեղտաջրերի հեռացման համար
- Մաքրման կայանների աշխատանքի և ընդունվող ջրերի մոնիթորինգ
- Կոյուղաջրերի նստվածքի հեռացման և օգտագործման, մաքրված կեղտաջրերի կրկնակի օգտագործման հսկողություն, որտեղ հնարավոր է:

Այն հիմնված է չորս հիմնական սկզբունքների վրա. պլանավորում, կարգավորում, մոնիթորինգ, տեղեկատվություն և հաշվետվություն:

3.2.1 Քաղաքային կեղտաջրերի հավաքման և մաքրման վիճակի գնահատում

Միացումներ ջրահեռացման համակարգին՝ շատ սահմանափակ առաջնային մաքրմամբ, գոյություն ունեն միայն հիմնական քաղաքային տիպի կենտրոններում, երկրորդային մաքրում ընդհանրապես չի արվում: Ստորև նկարագրվում են կոյուղաջրերի հավաքման/հեռացման ծառայությունների բնութագրերը և քաղաքային տարածքների ծածկույթը:

Միայն Երևանն ունի լայն կոյուղաջրերի համակարգ, որի միացման աստիճանը մոտ 96% է: Կեղտաջրերը 8 կետերում հեռացվում են դեպի Հրազդան գետ առանց մաքրման կամ միայն նախնական մաքրումից հետո: Նախկինում կառուցված նախնական կամ երկրորդային մաքրման կայանները չեն գործում կամ շահագործումից դուրս են, սակայն առաջարկություն կա առաջին փուլում վերականգնել և հասցնել նախնական մաքրման մակարդակի:

Մյուս քաղաքներում ջրահեռացման համակարգը ծածկում է տարածքի մոտ 70-80%-ը: Չորս քաղաքային տարածքներում 12 հին մաքրման կայան կա, որոնցից ոչ մեկը չի գործում: Այս պահի դրությամբ պլանավորվում է կառուցել ընդամենը 3 մաքրման կայան, իսկ երկու քաղաքում (Սևանա լճի շուրջը) կվերականգնվեն կամ կընդլայնվեն կոլլեկտորային համակարգերը:

Կոյուղաջրերը, հիմնականում առանց մաքրման, թափվում են վերգետնյա ջրանցքները, այնտեղից էլ ջրթողներով՝ մակերևութային ջրեր: Այն քաղաքների և գյուղերի բնակչությունը, որոնք միացված չեն ջրահեռացման համակարգին, սովորաբար օգտվում է տեղում գտնվող սարքերից, որոնք բաղկացած են սեպտիկ ավազաններից

8. Council Directive 91/271/EEC concerning urban waste-water treatment, 21 May 1991.

9. "Agglomeration" is defined as an area where the population and/or economic activities are sufficiently concentrated for urban waste water to be collected and conducted to an urban waste water treatment plant or to a final discharge point. A population equivalent of 1 means the organic biodegradable load having a five-day biochemical oxygen demand (BOD5) of 60g of oxygen per day.

և տեղական այլ լուծումներից կամ հարմարություններից, ինչպես, օրինակ՝ հողափոր արտաքնոցները, որոնք մինչ օրս լայն տարածում ունեն գյուղական վայրերում:

Մանիտարական և շրջակա միջավայրի պայմանները, որոնք առաջանում են տեղում ստեղծված հարմարությունների և մակերևութային ջրերի մեջ թափվող չմաքրված կոյուղաջրերի ազդեցության տակ, տվյալների բացակայության պատճառով չեն կարող գնահատվել:

Ներկայումս սահմանափակ ծրագրեր կան կոյուղու համակարգի ընդլայնման համար: Կեղտաջրերի մաքրման և հեռացման բարձր ներդրումային ծախսերը նշանակում են, որ զարգացման այս մասին կանոնադրական միայն այն ժամանակ, երբ ջրային համակարգերում կիրականացվեն խոշոր ներդրումներ: Այս հարցը ներկայիս կամ առաջարկվող ծրագրերում որպես խոշոր խնդիր, հստակ չի դիտարկվում: Կարելի է դիտարկել գյուղերի կեղտաջրերի մաքրումը և հեռացումը, քանի որ համայնքները կամ տնային միացում ունեն կեղտաջրերի հավաքման ինչ-որ համակարգի հետ, կամ էլ հույսը դնում են տեղում կեղտաջրերի հեռացման վրա (զուգարանների կամ սեպտիկ ցիստեռնների միջոցով)¹⁰:

Չափանիշ	Ցածր համարժեքություն
Երևանում լայնորեն ապահովված է կեղտաջրերի հավաքումը և մաքրումը, ինչը սահմանափակ է Երևանից դուրս: Կոյուղաջրերը, հիմնականում առանց մաքրման, թափվում են վերգետնյա ջրային ուղիները, այնտեղից էլ ջրթողներով՝ մակերևութային ջրեր: Այն քաղաքների և գյուղերի բնակչությունը, որոնք միացված չեն ջրահեռացման համակարգին, սովորաբար օգտվում է տեղում գտնվող սարքերից, որոնք բաղկացած են սեպտիկ ավազաններից և տեղական այլ լուծումներից կամ հարմարություններից, ինչպես, օրինակ՝ հողափոր արտաքնոցները, որոնք մինչ օրս լայն տարածում ունեն գյուղական վայրերում: Ավելի արդյունավետ ծառայությունների տրամադրման համար հնարավոր է եղած կամ փոքր գյուղական հեռացման համակարգերը միացնել գոյություն ունեցող կոմունալ ծառայությանը: Բացի դրանից, տեղական համակարգերի արդյունավետությունը կարելի է բարելավել՝ ապահովելով սեպտիկ տարողությունների կանոնավոր դատարկման ծառայություն, դրանց բավարար աշխատանքի համար:	

3.2.2 Զգայուն տարածքների և ազլումբերացիաների բացահայտում

Չափանիշ	Ցածր համարժեքություն
ՀՄԱՄԿ-ն իրականացնում է ջրի որակի մոնիթորինգի ծրագրեր և www.armmonitoring.am կայքում տեղադրում է ամսական և տարեկան հաշվետվություններ: Զգայուն տարածքները, որոնք դասակարգվում են հինգ կարգի, ներկայացված են հաշվետվություններում (www.armmonitoring.am):	

3.2.3 Սկզբնական կարգավորման կամ լիազորման համակարգի ստեղծում

Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվի (UWWTD 91/271/EEC, 21.05.1991) հսկողության հիմնական մեթոդներից է (Հոդ.11) պահանջել նախնական թույլտվություն բոլոր քաղաքային կեղտաջրերը, ներառյալ՝ սննդի արդյունաբերության և արդյունաբերական բոլոր կեղտաջրերը, քաղաքային ջրահեռացման համակարգեր հեռացնելու վերաբերյալ: Անհրաժեշտ է, որպեսզի այս պահանջը օրենսդրությամբ ձևակերպվի, կառավարվի և կիրարկվի, աջակցություն ստանա արդյունավետ և համապատասխան վարչական և որոշումների կայացման ընթացակարգերի միջոցով:

2003թ. մարտի 7-ի ՀՀ կառավարության, ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը, ջրօգտագործման թույլտվության տրամադրման, ջրօգտագործման թույլտվության երկարաձգման կարգերը, ջրադրյուրի, հորատանցքի անձնագրերի և հիդրոերկրաբանական հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին թիվ 218 որոշումը պահանջում է ներկայացնել տվյալներ ոչ միայն ջրօգտագործման, այլև ջրահեռացման վերաբերյալ: Պահանջվում է ներկայացնել տվյալներ կեղտաջրերի որակի՝ ներառյալ ծավալը, անհատական նորմաներով պայմանավորված ջրահեռացման ռեժիմը, սահմանային թույլատրելի թողքը, և այլն:

Հիմք ընդունելով «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 17-րդ հոդվածների ա) կետերը և ղեկավարվելով «Բրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասով, ՀՀ բնապահպանության նախարարի 2008թ. դեկտեմբերի 16-ի թիվ 452-Ն հրամանով հաստատվեցին.

- 1) «Ջրօգտագործման մասին» Ձև N2-տա (Ջուր) (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված N 1-ի.
- 2) «Ջրօգտագործման մասին» Ձև N 2-տա (Ջուր) (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգը համաձայն հավելված N 2-ի:

Ջրօգտագործման թույլտվություն ունեցող բոլոր ջրօգտագործողները պետք է ՀՀ բնութնախ ներկայացնեն տարեկան հաշվետվություն օգտագործված ջրի քանակի և հեռացված ջրի որակի մասին:

10. WATER SECTOR NOTE, Report No.: 61317-AM, The World Bank, May 2011

Չափանիշ	Ցածր համարժեքություն
Քանի որ ներկայումս գոյություն չունի լիցենզավորման կամ թույլտվության համակարգ ցանկացած սեկտորի քաղաքային կեղտաջրերի վերաբերյալ, բացի թույլտվության ընդհանուր համակարգից, որը պահանջում է տեղեկություն ներկայացնել ջրահեռացման վերաբերյալ, նախատեսվում է ընդլայնել առկա համակարգը, որը կկարգավորի քաղաքային կեղտաջրերի ջրահեռացումը:	

3.2.4 Մոնիթորինգի ծրագրեր

Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվի Հոդված 15-ը անդամ պետություններից պահանջում է ստեղծել մոնիթորինգի ծրագրեր քաղաքային կեղտաջրերի համար, մասնավորապես հսկել (i) քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից հեռացվող ջրերը՝ համադրությունը դիրեկտիվի պահանջների հետ ստուգելու համար և (ii) մակերևութային ջրեր հեռացվող նստվածքների քանակը և բաղադրությունը: Բացի այդ, այն դեպքերում, երբ ջրահեռացումը կատարվում է պակաս զգայուն տեղերում և նստվածքը հեռացվում է մակերևութային ջրային ռեսուրս, անդամ պետությունները պարտավոր են հսկել և իրականացնել ցանկացած այլ համապատասխան ուսումնասիրություն, որպեսզի ստուգեն, թե ելքը կամ նստվածքը բացասաբար չեն ազդել շրջակա միջավայրի վրա:

Ջրի ազգային ծրագրի մասին ՀՀ օրենքի «Ջրային ռեսուրսների մոնիթորինգը» հոդված 21-ի համաձայն.

- Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների մոնիթորինգը իրականացվում է ըստ մոնիթորինգային ծրագրերի: Մոնիթորինգային ծրագրերը կազմվում են տեղեկատվական կարիքների եւ ռազմավարության հիման վրա՝ ելնելով ջրավազանային կառավարման պլանների մշակման եւ իրականացման համար անհրաժեշտ տվյալների պահանջներից
- Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգային ծրագրերն իրականացվում են ազգային և ջրավազանային մակարդակներում.
- Մոնիթորինգային ծրագիրը ներառում է՝
 1. ցուցանիշների համախմբի ընտրությունը.
 2. ջրային ռեսուրսի հետազոտվող հատվածի, նմուշառման, դիտարկման կամ ջրաչափական կետի ընտրությունը.
 3. հետազոտվող միջավայրի (ջուր, հատակային նստվածքներ, բիոտա և այլն) ընտրությունը.
 4. նմուշառումների և (կամ) չափումների պարբերականության որոշումը.
 5. միջազգային չափանիշներին ներդաշնակ լաբորատոր վերլուծության և չափման մեթոդների ընտրությունը.
 6. ստացված տվյալների որակի վերահսկման ու գնահատման համակարգի և դրա ներդրման պլանի մշակումը.
 7. տվյալների օպերատիվ և համապարփակ մշակման, տվյալներին համապատասխան նպատակային տեղեկատվության վերափոխման սխեմայի մշակումը.
 8. տեղեկատվության ներկայացման հիմնական ձևերի մշակումը և (կամ) ընտրությունը.
 9. տվյալները շահագրգիռ անձանց տրամադրելու կարգի և ժամանակի համաձայնեցումը.
 10. ծախսերի պլանավորումը և ֆինանսավորման աղբյուրների հստակեցումը.
 11. ծրագրի իրականացման ընթացքի և արդյունքների գնահատման չափորոշիչների որոշումը.
 12. ծրագրի իրականացման, գնահատման և թարմացման ժամանակացույցի մշակումն ու ընդունումը:

Եվրամիության աջակցությամբ իրականացված Քուռ գետի փուլ II նախագծով, Հայաստանի Աղստև և Դեբեդ գետերի համար առաջարկվեց մոնիթորինգային համակարգ, որն ընդգրկում էր կենսաբանական, հիդրոմորֆոլոգիական և ֆիզիկա-քիմիական մոնիթորինգ: Առաջարկված մոնիթորինգը հաջողությամբ փորձարկվեց Դեբեդի գետավազանում Քուռ գետի փուլ III նախագծով (2012թ.) և Եվրամիության Միջազգային գետավազանների շրջակա միջավայրի պահպանության նախագծով: Սակայն այն չէր ներառում ստորերկրյա ջրային ռեսուրսները: 2014 թ. Միջազգային գետավազանների շրջակա միջավայրի պահպանության նախագծով փորձարկվեց ՁԾԴ-ի համադրությունը մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգի համակարգին Հայաստանի Ախուրյան և Մեծամոր /Սևջուր/ գետավազաններում:

Չափանիշ	Մասնակի համարժեքություն
Ընդհանուր առմամբ ջրային ռեսուրսների մոնիթորինգի ծրագրի վերաբերյալ օրենսդրության դրույթը բավականին ընդարձակ է, սկզբունքորեն ներառում է քաղաքային կեղտաջրերի գնահատումը, բայց մանրամասն չէ: Չկա կոնկրետ պահանջ մաքրման կայաններից քաղաքային կեղտաջրերի հեռացումը վերահսկելու վերաբերյալ:	

3.3 Համադրումը Շրջակա միջավայրի որակի ստանդարտների դիրեկտիվին

ՁԵԴ-ի 16 Հոդվածը պահանջում է, որ Եվրահանձնաժողովը սահմանի այն նյութերի ցանկը, որոնք ջրային միջավայրի համար կամ դրա միջոցով էական ռիսկ ներկայացնող նյութերի շարքում առաջնային են և սահմանի ԵՄ շրջակա միջավայրի որակի ստանդարտներ (ՇՄՈՍ)՝ ջրում, նստվածքներում և/կամ էկոհամակարգում այդ նյութերի պարունակության համար: 2001թ.-ին ընդունվեց 33 առաջնահերթ նյութերի առաջին ցանկը (Որոշում 2455/2001), իսկ 2008թ. այդ նյութերի համար հաստատվեցին ՇՄՈՍ-ները (հրահանգ շրջակա միջավայրի որակի ստանդարտների (Շրջակա Միջավայրի Որակի Ստանդարտների Դիրեկտիվ (Դիրեկտիվ 2008/105/EC) կամ ՇՄՈՍ Դիրեկտիվ/ ՇՄՈՍԴ: վերջին անգամ փոփոխվել է Դիրեկտիվ 2013/39/ԵՄ-ով):

ՇՄՈՍ Դիրեկտիվը 33 առաջնահերթ նյութերի և 8 այլ աղտոտիչների համար սահմանում է առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները և/կամ տարեկան միջին կոնցենտրացիաները: (Դրանք դուրս են բերվել Եվրոպական մակարդակով և կիրառվում են բոլոր Անդամ Պետություններում և սահմանված են ՁԵԴ Հավելված X-ի նյութերի շարքում): Ավելին, ՁԵԴ-ը (Հավելված V, բաժին 1.2.6) «էական քանակություններով արտանետվող» Առանձին Աղտոտիչների ՇՄՈՍ-րի մշակման համար սահմանում է անդամ պետությունների կողմից կիրառման ենթակա սկզբունքները (Դրանք նույնպես հայտնի են որպես ՁԵԴ Հավելված VIII նյութեր):

Համաձայն ՁԵԴ Հավելված V-ի, կետ 1.4.3 և ՇՄՈՍԴ Հոդված 1-ի, ջրային ռեսուրսը ստանում է լավ քիմիական կարգավիճակ այն դեպքում, երբ այն բավարարում է ՇՄՈՍԴ-ի Հավելված I-ում բերված բոլոր առաջնահերթ նյութերի և այլ աղտոտիչների համար սահմանված ՇՄՈՍ-երին:

3.3.1 Շրջակա միջավայրի որակի ստանդարտների կիրառումը ջրային ռեսուրսների համար

ՁԵԴ/ՇՄՈՍԴ-ով սահմանվող հիմնական պարտավորությունը՝ շրջակա միջավայրի որակի ստանդարտների սահմանումը և կիրառումը մակերևութային ջրերի, նստվածքների և էկոհամակարգի համար, հիմնված է «առաջնահերթ» աղտոտող նյութերի որոշման վրա (ՇՄՈՍԴ, Հոդ. 3): Քանի որ առաջնային նյութերը որոշվում են Եվրոպական մակարդակով և կիրառվում են բոլոր անդամ պետություններում, ԵՄ օրենսդրության համադրությունը խիստ ասած ենթադրում է, որ ՇՄՈՍ-եր կմշակվեն սահմանված նույնատիպ նյութերի համար: Գործնականում, սակայն (առնվազն նախնական փուլում), Հարավ Կովկասյան երկրները պետք է որոշեն և սահմանեն իրենց հատուկ առաջնահերթ աղտոտող նյութերը:

Հայաստանի ջրային օրենսդրությունը պարունակում է տարբեր դրույթներ շրջակա միջավայրի մոնիթորինգի վերաբերյալ: Մասնավորապես, Ջրային օրենսգրքի հոդված 66 (Ջրի որակի ստանդարտների վերաբերյալ) պահանջում է, որ շահագրգիռ պետական կառավարման մարմինները մշակեն ջրի որակի ստանդարտների նախագծերը, որոնք պետք է ներառվեն Ջրի ազգային ծրագրում և դրանք պետք է հավաստեն սահմանված դասակարգման համակարգը:

Ջրի որակի ստանդարտները կարող են տարբերվել՝ առանձին տեղանքների յուրահատկություններին համապատասխան: Համաձայն օրենսդրությամբ սահմանված կանոններին ջրի որակի ստանդարտները կարող են սահմանվել յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքում: Կարող են նույնպես սահմանվել ջրօգտագործումից բխող ստանդարտներ, այդ թվում՝ գյուղատնտեսական, արդյունաբերական և տնային տնտեսությունների կողմից ջրօգտագործման ստանդարտներ: Ջրի ստանդարտները պետք է նկարագրեն ջրային ռեսուրսների դեգրադացման, հյուծման և աղտոտման կանխարգելման պահանջները, ինչպես նաև նվազագույն էկոլոգիական հոսքի սահմանման պահանջները:

Օրենսդրությամբ ստանդարտներին տրվում է նաև իրավական ուժ: Հոդված 67-ը (Համադրությունը ստանդարտներին) սահմանում է, որ հաստատված ջրի ստանդարտների խախտման դեպքում ջրօգտագործումն ապօրինի է և պետք է ենթարկվի օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության:

Ջրի որակի կառավարումն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» թիվ 75-Ն որոշման: Տեղանքների առանձնահատկություններից ելնելով բոլոր վեց ջրավազանային կառավարման տարածքների համար սահմանվում են մակերևութային ջրերի որակի վրա ազդող հնարավոր աղտոտիչների թույլատրելի սահմանաքանակները: Բոլոր գետավազանների համար ջրի որակի նորմերը սահմանվում են հաշվի առնելով ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվի պահանջները, ինչպես նաև երկրի հիդրոմորֆոլոգիական, հիդրոերկրաբանական, հիդրոֆիզիկական, էկոլոգիական և այլ առանձնահատկությունները (Հավելվածներ N3-ից N25-ը):

Չափանիշ	Մոտիվացվածություն
Օրենսդրությունը նախատեսում է ջրի որակի ստանդարտների պահանջը և սահմանում է, որ հաստատված բոլոր ստանդարտներին համադրությունը պարտադիր է: Ավելին, ջրի որակի նորմերը սահմանված են բոլոր գետավազանների համար:	

3.3.2 Մակերևութային ջրերում «առաջնային» (աղտոտող) նյութերի և դրանց պարունակության սահմանաքանակների որոշումը

ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» թիվ 75-Ն որոշումը սահմանում է ջրօգտագործման նպատակային նշանակության կամ ջրային ռեսուրսների որակի կարգերի փոխադարձ կապերի համակարգ, որը բերված է ստորև.

Նշանակություն/ ֆունկցիա	Կարգը, ըստ որակի նշանակու- թյան	I կարգ, գերազանց	II կարգ,	III category Moderate	IV category Poor	V category Bad
Ազգային ջրային պաշար		✓	✓	✓	✓	✓
Ջրահոսքերի պահպանություն		✓	✓	-	-	-
Էկոհամակարգերի գործունեություն, ձկների բուծում/ պահպանում	Սաղմոնային ձկներ	✓	✓	-	-	-
	Կարպային ձկներ	✓	✓	✓	-	-
Ոռոգում*		✓	✓	✓	✓	-
Արդյունաբերական ջրօգտագործում		✓	✓	✓	✓	✓
Էներգիայի արտադրություն		✓	✓	✓	✓	✓
✓ կիրառվում է, - չի կիրառվում, * ոռոգման նպատակով կիրառվում է, եթե рН-ի արժեքը չի գերազանցում 8.5, իսկ էլեկտրահաղորդականության արժեքը փոքր է 1000 մկՍիմ/սմ:						

ԵՄ ՋԵԴ-ով սահմանված առաջնահերթ նյութերը ներառված են որակի ստանդարտների ցանկում որակի այլ տարրերի հետ մեկտեղ, ինչպիսիք են ջերմային և թթվածնային պայմանները, կենսաբանական, հիդրոմորֆոլոգիական, քիմիական և ֆիզիկա-քիմիական պայմանները, առանձնահատուկ սինթետիկ և ոչ-սինթետիկ աղտոտիչները և այլն:

3-25 հավելվածները սահմանում են որակի էկոլոգիական նորմերը 14 Գետավազանային տարածքների գետերի ջրերի ու գետերի առանձին հատվածների համար, ինչպես բերված է ստորև.

Որակի ցուցանիշներ	Էկոլոգիական որակի դաս					Միավոր
	I	II	III	IV	V	

Չափանիշ	Մոտիվացվածություն
Հայաստանում գոյություն ունի աղտոտող նյութերի դասակարգման, մոնիթորինգի և սահմանափակման համակարգ: Այն ընդգրկում է որակի այնպիսի տարրերը, ինչպիսիք են ջերմությունը, թթվածնային պայմանները, կենսաբանական, հիդրո-մորֆոլոգիական, քիմիական և ֆիզիկա-քիմիական, առանձնահատուկ սինթետիկ և ոչ-սինթետիկ աղտոտիչները և այլն: ԵՄ ՋԵԴ-ի կողմից բացահայտված առաջնային աղտոտիչները ևս ընդգրկված են որակի ստանդարտի ցանկում:	

3.3.3 Գույքագրում և վերանայում

ՋԵԴ-ից ելնելով վերլուծությունների և մոնիթորինգի իրականացման արդյունքում հավաքագրված տվյալների և այլ հասանելի տվյալների հիման վրա Անդամ Պետությունները յուրաքանչյուր գետավազանային տարածքի կամ դրա առանձին հատվածների համար պետք է ստեղծեն հաշվառման համակարգ (ռեեստր), այդ թվում, հնարավորության դեպքում՝ առաջնահերթ նյութերի և աղտոտիչների արտանետումների, արտահոսքերի

և կորուստների քարտեզներ, որոնք համապատասխանաբար ներառում են դրանց կոնցենտրացիաները նստվածքներում և էկոհամակարգում: Ռեեստրները պետք է թարմացվեն ՁՇԴ-ում բնութագրիչների վերլուծությունների փոփոխություններին գույքընթաց: Իսկ անդամ պետությունները պետք է հաշվետվություն տան ՁՇԴ նպատակների նվաճման ուղղությամբ առաջընթացի վերաբերյալ կապված ՇՄՈՄԴ-ում սահմանված ստանդարտների հետ:

Մոնիթորինգին առնչվող տարբեր միջոցառումներ են իրականացվում: Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոնը (ՇՄՆՄԿ) իրականացնում է մակերևութային ջրերի մոնիթորինգ 131 նմուշառման կետերից ծածկելով երկրի 50 խոշոր և միջին գետերը, 6 ջրամբարները և Սևանա լիճը: Տարեկան կտրվածքով վերցվում է մակերևութային ջրերի 1000-1200 նմուշ (յուրաքանչյուր կետից տարեկան վերցվում է 7-12 նմուշ): Յուրաքանչյուր նմուշ փորձաքննության է ենթարկվում ըստ 65 ցուցանիշների, ներառյալ հիդրո-քիմիական հիմնական ցուցանիշները, ծանր մետաղները, քլորօրգանական քիմիկատները և այլն:

ՇՄՆՄԿ իրականացնում է ջրի որակի մոնիթորինգի ծրագրեր և հրապարակում է Ամսական ու Տարեկան հաշվետվություններ իր կայքում: Ամսական հաշվետվությունում ներկայացվում են մթնոլորտային օդի, տեղումների և մակերևութային ջրերի մոնիթորինգի արդյունքները:

Խորհրդակցելով Ջրի ազգային խորհրդի հետ՝ Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը տարին առնվազն երկու անգամ իրականացնում է ստանդարտների մանրակրկիտ ստուգում (վերանայում), ներառյալ՝ սոցիալական և բնապահպանական ազդեցությունները, առաջարկում է դրանցում փոփոխություններ և այդ տեղեկատվությունը ներկայացնում է կառավարություն որպես Ջրի ազգային ծրագրի մաս: Ջրերի ստանդարտների գրանցման կարգը սահմանվում է օրենքով:

Չափանիշ	Ցածր համարժեքություն
Չնայած նրան, որ տարբեր մոնիտորինգային գործողություններ են տեղի ունենում Հայաստանում, որը կարող է սկզբունքորեն հավաքագրել շատ անհրաժեշտ տվյալներ, չկա գույքագրման և վերանայման լիարժեք և գործող համակարգ: Անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել յուրաքանչյուր գետավազանում բոլոր նյութերի և աղտոտիչների գույքագրման անընդհատ գործընթաց տվյալները հավաքելու, ապա վերանայելու, թարմացնելու և հաշվառելու համար, այդ թվում՝ առկայության դեպքում արտանետումների, արտահոսքերի և կորուստների քարտեզներ, նստվածքներում պարունակվող կոնցենտրացիաներով և բիոտան:	

3.4 Համադրումը Նիտրատների դիրեկտիվին

3.4.1 Աղտոտված ջրերի որոշումը և նիտրատներից խոցելի գոտիների սահմանումը

Նիտրատների դիրեկտիվի համաձայն նախատեսվում է երկու հիմնարար գործողություն՝ որոշել աղտոտված կամ ռիսկային ջրերը և սահմանել նիտրատներից խոցելի գոտիները (Հոդված 3):

1. Աղտոտված կամ ռիսկային ջրերի որոշումը, ինչպիսիք են՝

- Մակերևութային քաղցրահամ ջրերը, մասնավորապես՝ խմելու ջրի ջրաղի համար նախատեսված ջրերը, որոնք պարունակում են կամ կարող են պարունակել (եթե որևէ կանխարգելիչ միջոցառումներ չձեռնարկվեն) 50մգ/լ-ից ավելի մեծ նիտրատների կոնցենտրացիա
- Ստորգետնյա ջրեր, որոնք պարունակում են կամ կարող են պարունակել (եթե որևէ կանխարգելիչ միջոցառումներ չձեռնարկվեն) 50մգ/լ-ից ավելի մեծ նիտրատների կոնցենտրացիա
- Քաղցրահամ ջրային մարմիններ, գետաբերաններ, ափամերձ ջրեր և ծովային ջրեր, որոնք էվտրոֆիկացվում են (ջրի մեջ սննդարար նյութերի պարունակության աճ, որը բերում է բուսականության բազմացմանը, ինչը ջրում առաջացնում է թթվածնային քաղծ ու սպանում է կենդանական աշխարհը) կամ կարող են էվտրոֆիկացվել (եթե որևէ կանխարգելիչ միջոցառումներ չձեռնարկվեն):

2. «Նիտրատներից խոցելի գոտիների» (ՆԽԳ) սահմանումը՝

- Հողի գոտիներ, որոնք լվացվում են աղտոտված ջրերի կամ աղտոտման վտանգի տակ գտնվող ջրերի մեջ և նպաստում են նիտրատներով աղտոտմանը: Անդամ պետությունները կարող են նաև որոշել միջոցառումները կիրառել ոչ թե առանձին որոշված ՆԽԳ-ների, այլ ողջ տարածքի համար:

Շատ քիչ տեղեկություններ կան ներկայիս գյուղատնտեսական գործընթացների և դրանց հետևանքով մակերևութային ջրերի մեջ պարարտանյութերի ու թունաքիմիկատների հեռացման վերաբերյալ: Մասնավորապես, պարարտանյութերի ու թունաքիմիկատների ազդեցության վերաբերյալ համակարգված տվյալները հիմնականում բացակայում են: Գոյություն չունի ՆԽԳ-ների սահմանման համակարգ:

Չափանիշ	Ցածր համարժեքություն
Աղտոտված կամ աղտոտման վտանգի տակ գտնվող ջրերի որոշման և նիտրատների խոցելի գոտիների սահմանման ջանքերը բացակայում են:	

3.4.2 Միջոցառումների պլանի և նիտրատներից խոցելի գոտիների համար գյուղատնտեսական լավ գործելակարգերի սահմանում

Չնայած Հայաստանում գյուղատնտեսական գործունեության հետ կապված ՆԽԳ-եր չկան, կառավարությունը պլանավորում է իրականացնել ոռոգման լավագույն գործելակարգերի (կաթիլային ոռոգման համակարգերի տեղադրում և այլն) կիրառմանն ուղղված ծրագրեր, որոնք կնպաստեն ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև ջրերի/հողերի նիտրատներով աղտոտման նվազեցմանը: Ավելին, ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1692-Ն որոշմամբ հաստատվել է հանքային պարարտանյութերի տեխնիկական կանոնակարգը, որից ելնելով հաստատվել են նաև հանքային պարարտանյութերի արտադրման և իրացման, ինչպես նաև դրանց մեջ թունավոր տարրերի պարունակության թույլատրելի մակարդակները սահմանող սանիտարական կանոնները և նորմերը: Դրանցով սահմանվել են հանքային պարարտանյութերին, այդ թվում՝ սելիտրային ներկայացվող շրջակա միջավայրի պահպանության պահանջները:

Չափանիշ	Մասնակի համարժեքություն
Չնայած Հայաստանում գյուղատնտեսական գործունեության հետ կապված ՆԽԳ-եր չկան, կառավարությունը պլանավորում է իրականացնել ոռոգման լավագույն գործելակարգերի կիրառմանն ուղղված ծրագրեր և գյուղատնտեսության մեջ նիտրատների օգտագործման համար կիրառել որոշակի նվազագույն ստանդարտներ:	

3.4.3 Մոնիթորինգի ծրագրի սահմանում

Խոցելի գոտիների առանձնացման և դրանց վերանայման նպատակներով անդամ պետությունները պետք է իրականացնեն մոնիթորինգի ծրագրեր, այդ թվում՝ քաղցրահամ ջրերում նիտրատների կոնցենտրացիայի մոնիթորինգ և քաղցրահամ մակերևութային ջրերի, գետաբերանների և մերձափնյա ջրերի էվտրոֆիկ վիճակի դիտարկում: Մոնիթորինգի ուսումնասիրությունները պետք է վերանայվեն առնվազն չորս տարին մեկ անգամ և պետք է օգտագործեն չափումների (փորձարկումների) Դիրեկտիվում (Հավելված IV) հղված մեթոդները:

Ջրի որակի տեսանկյունից նիտրատների մոնիթորինգի իրականացումը պահանջվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» թիվ 75-Ն որոշմամբ: Մոնիթորինգի ծրագիրը, այդ թվում՝ քաղցրահամ ջրերում նիտրատի կոնցենտրացիայի մոնիթորինգը իրականացվում է ՇՄՆՄԿ կողմից (ինչպես վերը նշվել էր):

Չափանիշ	Մասնակի համարժեքություն
Չնայած նիտրատների մոնիթորինգը չի կազմում որևէ հատուկ ծրագրի մաս, որը կապված է ՆԽԳ-երի սահմանման և կառավարման հետ, այդուհանդերձ նիտրատների մակարդակները մոնիթորինգի են ենթարկվում առնվազն ընդհանուր մոնիթորինգի ծրագրի շրջանակներում:	

3.5 Համադրումը Ջրհեղեղների դիրեկտիվին

3.5.1 Ջրհեղեղների նախնական գնահատում

Սույն գործունեությունը վերապահված է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը, որն այս առնչությամբ մեծապես հենվում է Հայպետհիդրոմետ ծառայության վրա: Վերջինս կանխատեսումների իրականացման յուրահատուկ գործառնություններ ունի: Չնայած այդպիսի գնահատումները խիստ կարևոր են ջրային ռեսուրսների կառավարման համար՝ թե կարճաժամկետում (ջրհեղեղների և երաշտների դեպքում), թե երկարաժամկետում (օրինակ, սեզոնային գյուղատնտեսական պլանավորման համար), այդուհանդերձ քիչ բան է արվել ջրհեղեղների գնահատման համակարգի ստեղծման համար:

Չափանիշ	Ցածր համարժեքություն
Չնայած ջրհեղեղների գնահատման կարիքը առկա է և Նախարարությունը պատասխանատու է դրանց կազմակերպման համար, քիչ բան է արվել ջրհեղեղների գնահատման համակարգը ձևավորելու համար:	

3.5.2 Ջրհեղեղների վտանգների և ջրհեղեղների ռիսկերի քարտեզների պատրաստում և ջրհեղեղների ռիսկերի կառավարման պլանների սահմանում

Չնայած տարբեր ուսումնասիրություններ և գնահատումներ են իրականացվել, հիմնականում տարբեր ծրագրերի միջոցով, գործնականում գոյություն չունի ջրհեղեղների վտանգների, ջրհեղեղների ռիսկերի քարտեզների պատրաստման կամ ջրհեղեղների ռիսկերի կառավարման պլանների սահմանման կանոնավոր կամ համակարգված ընթացակարգ: Մասնավորապես, կարելի է նշել հետևյալ հրապարակումները.

- Հայաստանի ազգային ատլաս, հրապարակվել է 2007 թվականին: Այն ներառում է գետերի զարնանային հեղեղումների քարտեզները (հեղեղումներ, պղտորում, ջրհեղեղներ և ջրհեղեղների գետավազաններ)
- Երկրի իրավիճակի դիտարկման վերջնական հաշվետվություն, ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի «Ազգային աղետներին պատրաստվածության և ռիսկի նվազեցման կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում, որը եզրահանգում է, որ Հայաստանը խոցելի է ջրհեղեղների որպես բնական աղետի, առումով
- 2007 թվականին ջրհեղեղների ուսումնասիրություններ՝ «GIS տվյալների բազաների բարելավում և վերակառուցում, ՀՀ բնապահպանության նախարարության Զրային ռեսուրսների կառավարման գործակալության համար տվյալների բազաների և կառավարման ծրագրերի մշակում»: Ուսումնասիրությունների միջոցով քարտեզագրվեցին փաստացի ջրհեղեղային և հեղեղված տարածքները և ոչ թե բնական ինդիկատորների միջոցով որոշված ջրհեղեղների ռիսկերի գնահատումները: Դրանք ցույց են տալիս վարարող գետերի անվանումներ, ջրհեղեղների ամսաթվերը, ջրհեղեղված տարածքները (ջրով ծածկված գոտիները) և պատճառված վնասները:
- 2005 թվականին իրականացվեցին ջրամբարների հիդրոլոգիական կառույցների վտանգների ուսումնասիրություններ և հետազոտություններ: Մասնավորապես, ՀՀ բնապահպանության նախարարության Զրային ռեսուրսների կառավարման գործակալությունը 2005 թվականից ի վեր օգտագործում է մշտապես թարմացվող Ջրի պետական կադաստրի GIS տվյալները: Ավելին, ջրամբարների պատվարների փլուզման վտանգները ուսումնասիրվել են Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ, որի արդյունքում գնահատվել և քարտեզագրվել է այն տարածքը, որը կարող է ջրհեղեղվել ջրամբարի լրիվ փլուզման դեպքում: Ընդհանուր ռիսկերի քարտեզ չի ստեղծվել: Այդուհանդերձ, հաշվի առնելով դրանց չափը և տնտեսական կարևորությունը, 23 ջրամբարներ ներառվել են հատուկ կարևորության ջրային համակարգերի ցանկում:

Կան բազմաթիվ ընդհանուր աշխարհագրական քարտեզներ, որոնք ուղղակիորեն կապված չեն աղետների հետ: Այդուհանդերձ, այդպիսի քարտեզները անհրաժեշտ պահանջ են և լավ հիմք են ամբողջական GIS ունենալու համար, ինչպիսիք են ռելիեֆը, գետային ցանցը, ջրային օբյեկտները, անտառածածկույթը, տարբեր կլիմայական քարտեզները և այլն: Բոլոր վերը նշված քարտեզները առկա են թվային ֆորմատով և հետևաբար կարող են ձևափոխվել և ներառվել GIS-ում:

Զափանիչ	Ցածր համարժեքություն
Չկան հատուկ իրավական պահանջներ ջրհեղեղների վտանգների, ջրհեղեղների ռիսկերի քարտեզների կամ ջրհեղեղների ռիսկերի կառավարման պլաններ նախապատրաստելու համար: Ավելին, չնայած տարբեր ուսումնասիրություններ և գնահատումներ են իրականացվել, հիմնականում տարբեր ծրագրերի միջոցով, գործնականում գոյություն չունի ջրհեղեղների վտանգների, ջրհեղեղների ռիսկերի քարտեզների պատրաստման կամ ջրհեղեղների ռիսկերի կառավարման պլանների սահմանման կանոնավոր կամ համակարգված ընթացակարգ:	

3.6 Համադրումը Թոշյունների և բնական միջավայրի դիրեկտիվին

3.6.1 Կենդանատեսակների և բնական միջավայրի պահպանվող տարածքների սահմանում

Բնական միջավայրի դիրեկտիվով սահմանված հիմնարար պարտավորությունը պահպանության հատուկ տարածքների փոխկապակցված էկոլոգիական ցանցի ստեղծումն է, որը պետք է կազմված լինի բնական միջավայրին հատուկ կենդանատեսակների վայրերից և այն կենդանատեսակների բնական միջավայրերից, որոնք ազգային մակարդակով սահմանվել են որպես պաշտպանության կարիք ունեցողներ: Բնական միջավայրի տեսակներն ու վտանգված տեսակների բնական միջավայրերը պետք է պահպանվեն, կամ համապատասխանաբար վերականգնվեն ու իրենց բնական տիրույթում ձեռք բերեն բարձր պահպանման կարգավիճակ: Որպեսզի այդպիսի պաշտպանությունը կազմակերպվի, Անդամ պետությունները պետք է առանձնացնեն վայրեր՝ հատուկ պահպանվող տարածքների համար: Դիրեկտիվը մանրամասն չափանիշներ է սահմանում այդպիսի տարածքների ընտրության և սահմանման համար (ԲՄԴ, Հավելված III)։

Վերջին տասնամյակի ընթացքում Հայաստանում մի քանի միջոցառումներ են իրականացվել, որոնք նպատակ ունեն բարելավելու կենսաբազմազանության բաղադրիչների վիճակը և որոնք արդեն դրական արդյունք են ապահովել: Կենսառեսուրսների կառավարման օրենսդրությունը և ինստիտուցիոնալ կառուցվածքը էապես բարելավվել է: Հայաստանը միացել է մի քանի բնապահպանական կոնվենցիաների՝ Բեռնի Կոնվենցիան, Անհատացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին կոնվենցիան (CITES), և այլն:

Հայաստանը կենսաբազմազանության պահպանության և պաշտպանության վերաբերյալ երեք հիմնական օրենք¹¹ ունի՝ «**Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին**» (2006), «**Բուսական աշխարհի մասին**» (1999), «**Կենդանական աշխարհի մասին**» (2000) ՀՀ օրենքները: Դրանք կարգավորում են կենդանատեսակների

11. Առնչվող մի քանի օրենքներ էլ կան: Օրինակ, ՀՀ օրենքը «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» (ՀՕ-176, 09.04.2007) կարգավորում է ՀՀ տարածքում որսի և որսորդական տնտեսության ոլորտի հասարակական հարաբերությունները՝ ապահովելով որսի կենդանիների պահպանության, պաշտպանության, վերարտադրության ու կայուն օգտագործման, որսահանդակների պահպանության ու բարելավման, որսի և որսորդական տնտեսության վարման իրավական հիմունքները, որսի օգտատիրոջ օրինական իրավունքների ձեռքբերման և կարգավորման պետական քաղաքականությունը:

և բնական միջավայրի պաշտպանությունը (Հայաստանի Կարմիր գրքից էլնելով), ինչպես նաև պահպանվող տարածքները: Հայաստանը 1993 թվականի հուլիսի 6-ին միացել է «Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես ջրլող թռչունների բնադրավայրերի մասին» Կոնվենցիային (Ռամասարի Կոնվենցիա): Միջազգային նշանակության խոնավ տարածքների ցանկում սահմանվել են երկու վայրեր՝ Սևանա լիճը իր ջրավազանով և Արփի լիճը իր հարակից ճահիճներով:

Կենդանատեսակների պահպանության վերաբերյալ հիմնական դրույթները բերվում են կենդանական ու բուսական աշխարհի մասին օրենքների (յուրաքանչյուրի հոդված 14-ը) Կարմի Գրքի վերաբերյալ դրույթներով: Կենդանիների Կարմիր գիրքը սահմանվում է որպես՝

միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացող կենդանական տեսակների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին: Կենդանիների Կարմիր գիրքը վարվում է հազվագյուտ և անհետացող կենդանական տեսակների և համակեցությունների հաշվառման, պահպանության, վերարտադրության, օգտագործման և գիտականորեն հիմնավորված հատուկ միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև դրանց մասին բնակչությանը իրազեկելու նպատակով:

Նմանապես, բույսերի Կարմիր գիրքը՝

վարվում է հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող բուսական տեսակների և համակեցությունների հաշվառման, պահպանության, վերարտադրության և օգտագործման գիտականորեն հիմնավորված հատուկ միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև դրա մասին բնակչությանը իրազեկ պահելու նպատակով:

Բույսերի կարմիր գրքում գրանցման համար հիմք են դառնում բույսերի տեսակների քանակի և տարածման սահմանների կրճատման, գոյության պայմանների վատթարացման և անհետացման վտանգի վերաբերյալ տվյալները:

Կարմիր գիրքը կազմվում է՝ հիմք ընդունելով կենդանական և բուսական աշխարհի պետական հաշվառման արդյունքները: Կարմիր գրքում կենդանիների և բույսերի տեսակները գրանցելու և դուրս գրելու վերաբերյալ վերջնական եզրակացությունը տալիս է Կարմիր գրքի հանձնաժողովը:

Բնության հատուկ պահպանվող տարածքների հետ կապված երկու որոշում է ընդունվել, որպեսզի ապահովվի հիմնական օրենքի իրականացումը՝ ՀՀ բնապահպանության նախարարի 27.10.2008թ. թիվ 364-Ա հրամանով հաստատվել է «Բնության հատուկ պահպանվող տարածքների համար կառավարման պլանների մշակման մեթոդական ուղեցույցը» և ՀՀ կառավարության 22.01.2009թ. N 72-Ն որոշմամբ սահմանվել է «Բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կարգը», որով սահմանվում են տարբեր կատեգորիաների պահպանվող տարածքների ստեղծման ու սահմանման չափորոշիչները, համաձայն Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) ուղեցույցի:

Չափանիշ	Մոտ համարժեքություն
Պահպանվող տարածքների համակարգն առկա է և սահմանվում է մի շարք օրենսդրական ակտերով, սակայն պահպանության ընդհանուր համակարգը ամբողջությամբ չի արտացոլում ԵՄ օրենսդրությունը: Մասնավորապես, չկան մանրամասն ընթացակարգեր պահպանվող տարածքների, կենդանատեսակների ու բնական միջավայրի գնահատման և սահմանման համար:	

3.6.2 Քաղցրահամ ջրերի վայրերում պահպանվող տարածքների ռեեստրի ստեղծում

ՁԾԴ Հոդված 6-ը պահանջում է, որ թռչունների և բնական միջավայրի դիրեկտիվների համաձայն քաղցրահամ ջրերի սահմանված վայրերում պահպանվող տարածքների համար պահպանվի և վարվի համապատասխան ռեեստր: Մա վարչական միջոցառում է, որը նախատեսված է բնապահպանական օրենսդրության և ջրային օրենսդրության միջև պատշաճ կապի և քաղցրահամ ջրերի սահմանված վայրերի անընդհատ վերանայման ապահովման համար:

Չնայած կենդանական ու բուսական աշխարհի պահպանության մասին ՀՀ օրենսդրությունը պահանջում է պետական հաշվառման¹² համակարգի վարում, և չնայած որ Բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում գտնվող գետերի հատվածները պահպանվում և օգտագործվում են օրենքի հիմնական պահանջներին համապատասխան, այդուհանդերձ, այդ վայրերի պաշտոնական հաշվառման մեխանիզմ գրեթե չկա, ինչպես նաև չկա պաշտոնական մեխանիզմ, որով կապահովվի բնապահպանական օրենսդրության և ջրային օրենսդրության փոխկապակցվածությունը:

¹² «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածը սահմանում է՝ Բուսական աշխարհի պետական հաշվառումը և կադաստրի վարումը նպատակ ունեն բացահայտելու բուսական տեսակների ու համակեցությունների, դրանց աճելավայրերի քանակական և որակական փոփոխությունները: Բուսական աշխարհի պետական հաշվառումն իրականացվում է պարբերաբար՝ ոչ ուշ, քան տասը տարին մեկ անգամ:

Չափանիշ	Ցածր համարժեքություն
Չնայած օրենսդրությամբ պահանջվում է ստեղծել պահպանվող կենդանական ու բուսական աշխարհի պետական հաշվառում, նման հաշվառում գրեթե չի վարվում մինչ այժմ և, ամեն դեպքում, քաղցրահամ ջրերի պահպանվող տարածքների ռեեստր գոյություն չունի:	

3.6.3 Կենդանատեսակների և բնական միջավայրի մշտադիտարկման իրականացում

Կենդանական ու բուսական աշխարհի մասին օրենքների 12-րդ հոդվածները ընդհանուր դրույթներ են պարունակում մոնիթորինգի և մշտադիտարկման վերաբերյալ: Կենդանական աշխարհի պետական մոնիթորինգի վերաբերյալ հոդված 12-ը սահմանում է՝

Կենդանական աշխարհի պետական մոնիթորինգը նպաստում է կենդանիների բազմազանության պահպանության և կայուն օգտագործման նորմերի սահմանմանը:

Կենդանական աշխարհի պետական մոնիթորինգն իրականացվում է կենդանական աշխարհի օբյեկտների տարածվածության, քանակի, ներկա վիճակի, ինչպես նաև դրանց ապրելավայրերի, բնադրավայրերի, միգրացիայի ուղիների և էկոհամակարգերի որակի, ամբողջականության գնահատման, բացասական երևույթների ժամանակին հայտնաբերման, կանխարգելման և վերացման նպատակով:

Մինչդեռ բուսական աշխարհի մասին օրենքի 12 հոդվածը սահմանում է՝

Բուսական աշխարհի պետական մոնիթորինգն իրականացվում է բուսական աշխարհի պահպանության և շարունակական օգտագործման կազմակերպման նպատակով: Մոնիթորինգ է կազմակերպվում նաև բույսերի աճելավայրերի և էկոհամակարգերի վիճակի վերաբերյալ:

ՀՀ բնապահպանության նախարարության Կենսառեսուրսների կառավարման գործակալությունը պետք է ապահովի բնական էկոհամակարգերի, այդ թվում՝ անտառների, լանդշաֆտի կենսաբազմազանության, կենդանական ու բուսական աշխարհի, բնական ժառանգության գիտական հետազոտությունը, պահպանությունը և կայուն օգտագործումը: Միաժամանակ, Բնապահպանության նախարարության Բնապահպանական պետական տեսչությունը վերահսկողության և հսկիչ մոնիթորինգի լիազորություններ ունի: Ինչ վերաբերում է քաղցրահամ ջրերի կենսաբազմազանությանը, ապա այն իրականացվում է երկու բաժինների կողմից՝ Կենսաբազմազանության, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի կառավարման բաժին և Անտառների վերահսկողության բաժին:

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է նաև «Բնության հատուկ պահպանվող տարածքների մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը» (30.08.2007, N1044-Ն): ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով (14.02.2008, N62) հաստատվել են «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերում կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգի ներդրման և GIS կիրառման ապահովման ծրագրի իրականացումը ապահովող միջոցառումները»: Ներկայումս մշակվել և քննարկման փուլում է գտնվում «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Չափանիշ	Մասնակի համարժեքություն
Պաշտպանված կենդանատեսակների ու բնական միջավայրերի մոնիթորինգի և անհրաժեշտության դեպքում իրավակիրարկման միջոցառումների ձեռնարկման համակարգեր գոյություն ունեն, սակայն այդ դրույթների իրականացման համար մանրամասն պահանջներ չեն սահմանվել և գործնականում դրանց իրականացումը կանոնավոր բնույթ չի կրում:	

3.7 Համադրումն այլ օրենսդրության հետ

Սույն ուսումնասիրությունում դիտարկվող այլ գործիքները ներառում են շրջակա միջավայրի ազդեցության գնահատմանը, ռազմավարական էկոլոգիական գնահատմանը և տեղեկատվության մատչելիությանը, էկոլոգիական խնդիրներում հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության ԵՄ կանոններին:

ԵՄ ՇՄԱԳ Դիրեկտիվը սահմանում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացակարգեր՝ շրջակա միջավայրի վրա հավանական ազդեցություն ունեցող ծրագրերի համար, որոնք շատ նման են ՄԱԳ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի ՇՄԱԳ Կոնվենցիայով սահմանված ընթացակարգերին: ՇՄԱԳ ընթացակարգը կարող է ամփոփ ներկայացվել հետևյալ կերպ՝ մշակողը կարող է պահանջել պատասխանատու մարմնից տեղեկացնել, թե ինչ պետք է ներառված լինի իր կողմից ներկայացվելիք ՇՄԱԳ-ի տեղեկատվության մեջ (ոլորտի որոշման փուլը): մշակողը պետք է տրամադրի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ տեղեկատվությունը (ՇՄԱԳ հաշվետվություն – Հավելված IV): բնապահպանական մարմինները և հանրությունը (ներազդվող Անդամ Պետություններ) պետք է ապահովվեն տեղեկատվությամբ և խորհրդատվությամբ:

պատասխանատու մարմինը որոշում է կայացնում՝ հաշվի առնելով քննարկումների արդյունքները: Հանրությունը տեղեկացում է վերջնական որոշման մասին և կարող է այն բողոքարկել դատարանում, մի բան, որ հաճախ է պատահում Անդամ պետություններում:

Ռազմավարական էկոլոգիական գնահատման դիրեկտիվը կիրառվում է հանրային պլանների և ծրագրերի (օրինակ, հողօգտագործում, տրանսպորտ, էներգետիկա, թափոններ, գյուղատնտեսություն և այլն) լայն շրջանակի համար: Պլանների և ծրագրերի որոշ տեսակներ պետք է համապատասխանեն ՌԷԳ պարտադիր պահանջներին, մինչդեռ մյուսներն անցնում են պարզ դիտարկման գործընթաց՝ որոշելու համար, թե արդյոք դրանք կարող են դիտարկվել որպես «զգալի էկոլոգիական ազդեցություններ»: Դիտարկման ընթացակարգը հիմնված է Դիրեկտիվի Հավելված II-ում սահմանված չափանիշների վրա: ՌԷԳ ընթացակարգը ամփոփ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝ պատրաստվում է էկոլոգիական հաշվետվություն, որում սահմանվում են շրջակա միջավայրի վրա հնարավոր զգալի ազդեցությունները և նախատեսված պլանի կամ ծրագրի խելամիտ այլընտրանքները: Հանրությունը և բնապահպանական մարմինները ապահովվում են պլան կամ ծրագրի նախագծի և պատրաստված էկոլոգիական հաշվետվության վերաբերյալ տեղեկատվությամբ և խորհրդատվությամբ:

Հանրային մասնակցության և տեղեկատվության մատչելիության վերաբերյալ որոշակի պահանջներ ներառված են ՋՇԴ-ում և սույն հաշվետվության մեջ քննարկված ԵՄ այլ գործիքներում, ինչպես օրինակ Բնական միջավայրերի դիրեկտիվը և ՇՄԱԳ ու ՌԷԳ դիրեկտիվները: Ի լրումն, այդուհանդերձ, գոյություն ունի համընդգրկուն ԵՄ օրենսդրություն՝ բնապահպանական տեղեկատվության մատչելիության և որոշումների կայացմանը հանրային մասնակցության վերաբերյալ (որը ներդրվել է Տեղեկատվության Մատչելիության, Որոշումների Կայացմանը Հանրային Մասնակցության և Բնապահպանական Խնդիրներում Արդարադատության Մատչելիության վերաբերյալ ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի կոնվենցիայի իրականացման համար): Այդ գործիքներն ապահովում են այնպիսի պարտականություններ և իրավունքներ, որոնք գերազանցում են ՋՇԴ-ում և այլ Դիրեկտիվներում սահմանվածները, բայց որոնք այդուհանդերձ ձևավորում են ջրի և շրջակա միջավայրի կառավարման համար ղեկավարման շրջանակի կարևոր մասը: Առնչվող երկու գործիքներն են՝

- Դիրեկտիվ 2003/4/EC՝ բնապահպանական տեղեկատվության հանրային մատչելիության վերաբերյալ, որով անդամ պետություններից պահանջվում է շրջակա միջավայրին առնչվող որոշակի տեղեկություններ մատչելի դարձնել հանրությանը և որոշակի իրավունքներ է տալիս քաղաքացիներին՝ բնապահպանական հարցերով տեղեկատվությունը պահանջելու համար; և
- Դիրեկտիվ 2003/35/EC, որն ապահովում է հանրության մասնակցությունը՝ կապված շրջակա միջավայրին առնչվող որոշ պլանների և ծրագրերի դադարեցման հետ, որը տարբեր պահանջներ է սահմանում բնապահպանական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիներին պատշաճ ծանուցման ապահովման համար:

3.7.1 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

Արդեն բավականին ժամանակ է, որ Հայաստանն ունի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին օրենսդրություն, չնայած որ օրենքը վերջերս վերանայվեց և 2014 թվականին ընդունվեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ նոր օրենքը (ՇՄԱԳՓ օրենք):

Նոր օրենքը ՇՄԱԳ-ի իրականացման համեմատաբար առավել խորը շրջանակ է սահմանում: Ընդհանուր առմամբ, ՇՄԱԳ-ի (և փորձաքննության) ընթացակարգը մեծապես արտացոլում է ՇՄԱԳ-ի վերաբերյալ ԵՄ Դիրեկտիվի և ՇՄԱԳ ազգային ընթացակարգերի մասին Կոնվենցիայի հիմնական պահանջները (օրինակ, վերը նկարագրված փուլերի մեծամասնությունն առկա է): Այդուհանդերձ, օրենքը պահանջում է որոշակի պարզաբանումներ և լրացումներ, որպեսզի ավելի շատ համապատասխանեցվի այդ գործիքներին և, մասնավորապես, հանրային ծանուցման և մասնակցության ընթացակարգերը մեծապես բացակայում են: Ավելին, գործնականում ՇՄԱԳ ընթացակարգերի իրականացումն իրենից ներկայացնում է հակասական և ոչ միշտ արդյունավետ գործընթաց: Այդ առումով, կարևոր է, որ օրենսդրությամբ կամ գերատեսչական ակտերով սահմանվի ՇՄԱԳ-ի իրականացման մանրամասն ընթացակարգ, որը կերաշխավորի ՇՄԱԳ-ի ընթացակարգերի որպես կանոն արդյունավետ իրականացումը:

Հարկ է նշել, որ համաձայն նոր օրենքի մի քանի ընթացակարգեր և մեթոդաբանություններ պետք է հաստատվեն ՀՀ կառավարության որոշումներով, ինչպիսիք են՝ փորձաքննության ընթացակարգը, ազդեցության գնահատման մեթոդաբանությունը, շրջակա միջավայրի հնարավոր տնտեսական կորուստների գնահատման մեթոդաբանությունը, տնտեսական փաստի հատուցման ընթացակարգը, հանրային ծանուցման և լուսնների ընթացակարգը, և փորձագիտական եզրակացության մերժման ընթացակարգը: Քանի որ դրանք դեռևս չեն մշակվել, ՇՄԱԳ ընթացակարգերի համընդգրկուն գնահատումը ներկայումս հնարավոր չէ իրականացնել: Այնուամենայնիվ, հիմնական գործոնը կլինի այդ ընթացակարգերի արդյունավետ մշակման երաշխավորումը, որպեսզի դրանք համապատասխանեն ՇՄԱԳ-ի ԵՄ և Կոնվենցիայի մոդելներին:

Չափանիշ	Մասնակի համարժեքություն
ՇՄԱԳՓ օրենքը (հիմնականում) ապահովում է այնպիսի շրջանակ, որի միջոցով Հայաստանում կարող են մշակվել ՇՄԱԳ արդյունավետ (ՇՄԱԳ-ի վերաբերյալ ԵՄ դիրեկտիվի և Կոնվենցիայի պահանջների համապատասխան) համակարգեր: Այդուհանդերձ, առավել մանրամասն ընթացակարգեր պետք է մշակվեն, մասնավորապես՝ տեղեկատվությունը մատչելի դարձնելու, ՇՄԱԳ հաշվետվությունը հրապարակելու, ՇՄԱԳ գործընթացում հանրության մասնակցությունն ապահովելու և որոշումների վերանայման ու հրապարակման հարցերում կառավարության դերը և պարտականությունները սահմանելու համար:	

3.7.2 Ռազմավարական էկոլոգիական գնահատում

Ռազմավարական գնահատման վերաբերյալ դրույթները ներառված են 2014 թվականի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում: Մինչ այժմ ՌԷԳ-եր Հայաստանում պաշտոնապես չեն իրականացվել: ՇՄԱԳՓ օրենքը թեև սահմանում է ՌԷԳ ընթացակարգը, այդուհանդերձ առկա են շատ բացեր, որոնք դեռ պետք է որոշվեն, ինչպես նաև սահմանված դրույթները ամբողջությամբ չեն համապատասխանում ԵՄ դիրեկտիվում և ՌԷԳ Արձանագրությունում սահմանված պահանջներին (մասնավորապես, օրենքի շատ դրույթներում հստակ տարաջատում չկա ՇՄԱԳ-ի և ՌԷԳ-ի միջև):

ՌԷԳ ընթացակարգերի ամբողջական մշակման ու ապահովման համար կպահանջվի հետագա օրենսդրական կանոնակարգում, միաժամանակ մշակելով ՌԷԳ-ի իրականացման համար անհրաժեշտ բոլոր գերատեսչական ակտերը և ձևավորելով համապատասխան կարողությունները (թե՛ պետական, թե՛ հասարակական ոլորտներում)՝ աջակցելով ՌԷԳ ընթացակարգերի գործնական կիրառմանը: Որոշակի կարողությունների ձևավորման միջոցառումներ սկսվել են իրականացվել: Միաժամանակ, Բնապահպանության նախարարությունն ընտրել է Դիլիջան քաղաքի հատակագիծը՝ որպես ՌԷԳ պիլոտային ծրագրի օրինակ, սակայն 2014 թվականի գարնանը կառավարության փոփոխության պատճառով ծրագրի պետական ֆինանսավորումը կասեցվեց և պիլոտային ծրագիրը հետաձգվեց:

Չափանիշ	Ցածր համարժեքություն
Հայաստանը ձեռնարկել է ՌԷԳ-ի իրականացման ուղղությամբ կարևոր առաջին քայլերը, և ՇՄԱԳՓ օրենքում ապահովվել է իրավական շրջանակի սահմանում: Այդուհանդերձ, կարգավորումների կամ ենթաօրենսդրական ակտերի իրականացումը պահանջում են առավել մանրամասն ընթացակարգերի և գերատեսչական ակտերի սահմանում կառավարության կողմից՝ ՌԷԳ ընթացակարգերի իրականացման համար: Այդ քայլերը պետք է օժանդակվեն կարողությունների ձևավորման ծրագրերով: Երկարաժամկետում և հաշվի առնելով ՌԷԳ-երի իրականացման նախնական փորձը, պետք է դիտարկվի ՌԷԳ-ի վերաբերյալ դրույթների վերանայման և դրանք առանձին օրենքով կամ նույն օրենքի առանձին բաժնով ներկայացումը:	

3.7.3 Հանրության մասնակցությունը և տեղեկատվության մատչելիությունը

Բնապահպանական որոշումների կայացմանը հանրության մասնակցության և էկոլոգիական տեղեկատվության մատչելիության կանոնները հիմնականում սահմանված են 2014 թվականի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով և Արևիսի Կոնվենցիայի իրականացման համար ձեռնարկված այլ միջոցներով: Վերջինս ներառում է 15 Արևիս Կենտրոնների պահպանումը (հիմնադրվել են ԵԱՀԿ-ի օժանդակությամբ), որոնք զգալի առաջընթաց են ապահովել էկոլոգիական խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման, որոշումների կայացմանը հանրության մասնակցության ապահովման և ՀԿ-ների, հանրային ու պետական պաշտոնյաների միջև երկխոսության խթանման գործում:

Ի լրումն, տեղեկատվության տրամադրման և հանրության իրազեկման կանոնները սահմանվում են տարբեր այլ օրենքներով: Ջրային օրենսգրքի հոդված 20-ը (հանրային մասնակցության վերաբերյալ) պահանջում է, որ պետական կառավարման մարմինների կողմից «հասարակայնության ծանուցման» են ենթակա

- Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների նախագիծը
- Ջրի ազգային ծրագրի նախագիծը
- Ջրավազանային կառավարման պլանների նախագծերը
- Ջրօգտագործման քննարկվող թույլտվությունները
- Ջրերի ստանդարտների նախագծերը
- Ջրերի սակագնային ռազմավարության նախագիծը

Օրենսգրքի հոդված 1-ով «հասարակայնության ծանուցում» սահմանվում է հետևյալ կերպ՝

«առաջարկվող գործունեության ազդեցության վերաբերյալ շահագրգիռ կողմերի տեղեկացում, որը տպագրվում է առնվազն 1000 տպաքանակ ունեցող տպագիր միջոցներում: Ծանուցումը պարունակում է առաջարկվող գործունեության կամ հարցի վերաբերյալ որոշման ներկայացումը և դրանց հավանական ազդեցությունների համառոտ նկարագիրը, այն վայրը, որտեղ կարելի է ծանոթանալ առաջարկվող գործունեությանը կամ

որոշմանը, առաջարկվող գործունեության կամ որոշման վերաբերյալ գրավոր դիտողությունները, այն վայրը, որտեղ կարող են հանձնվել դիտողությունները, դրանց ներկայացման իրատեսական ժամկետները, ինչպես նաև դիտողությունների հասարակական լսման ժամկետները և վայրը»

Ավելին, «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածը (կապված ջրավազանային կառավարման հետ) սահմանում է՝

15(4). Ջրավազանային կառավարման պլանները կազմելու գործընթացում հասարակության մասնակցությունը ապահովվում է հասարակական լսումներ և քննարկումներ կազմակերպելու, զանգվածային լրատվության միջոցներով այդ մասին տեղեկություններ հաղորդելով:

Հանրային քննարկումների առանձնահատկությունները սահմանվում են ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 7-ի «Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերին հասարակայնության ծանուցման և հրապարակայնության կարգը հաստատելու մասին» թիվ 217-Ն որոշմամբ և դրա 2005 թվականի մարտի 3-ի համապատասխան փոփոխությամբ: Ներկայիս թույլտվությունների ուղեցույցով պահանջվում է հասարակական ծանուցում և քննարկումներ իրականացնել դիտարկման նախնական գործընթացում և վերջնական որոշումից հետո:

Ի վերջո, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 2003 թվականի սեպտեմբերի 23-ին) պարունակում է տարբեր ընդհանուր դրույթներ տեղեկատվության մատչելիության և հանրային իրազեկման ապահովման վերաբերյալ (տես, օրինակ՝ հոդվածներ 12 և 13)։

Չնայած որոշ էկոլոգիական խնդիրներով ապահովվում է տեղեկատվության մատչելիությունը (հիմնականում ՇՄԱԳ ընթացակարգեր, որոնք գնալով ավելի շատ են ծանուցվում) և չնայած, որ բնապահպանական տեղեկատվության մատչելիությունը փանշանակ սահմանվում է Հայաստանում տարբեր իրավական ակտերով, օրենսդրությունն ամբողջապես չի սահմանում այնպիսի առանձնահատկություններ, ինչպես օրինակ թե երբ, ինչպիսի և ինչպես պետք է ապահովվի տեղեկատվության մատչելիությունը (և այդ առումով չի համադրվում ԵՄ օրենսդրության հետ) և չկան տեղեկատվության մատչելիության և հանրային մասնակցության վերաբերյալ համաձայնեցված վարչական ընթացակարգեր:

Մասնավորապես, գոյություն չունեն ընթացակարգեր, որոնք կսահմանեն էկոլոգիական տեղեկատվության ձեռք բերման քաղաքացիների իրավունքները: Առկա են միայն կառավարման մարմինների համար նախատեսված սահմանափակ իրավական պարտականություններ՝ հանրությանը էկոլոգիական տեղեկատվության տրամադրման վերաբերյալ և գործնականում չկան իրավական պահանջներ ՇՄԱԳ-ից դուրս բնապահպանական հարցերով խորհրդակցության և որոշումների կայացման վերաբերյալ:

Չափանիշ	Մասնակի համարժեքություն
	Չնայած որոշ էական քայլեր են կատարվել Հայաստանում (հատկապես Արհուս կենտրոնների հիմնումը և որոշակի առաջընթաց կա տեղեկատվության մատչելիության և հանրային մասնակցության ոլորտներում, մասնավորապես ՇՄԱԳ-ի ոլորտում), տեղեկատվության տրամադրման և հանրային մասնակցության, ինչպես նաև այդ իրավունքները երաշխավորող ընթացակարգերի սահմանում օրենքով, ժամում են համեմատաբար ցածր մակարդակի վրա: Հատուկ օրենսդրություն և գերատեսչական ակտեր պետք է մշակվեն, որոնցով պետք է սահմանվեն տեղեկատվություն պահանջելու քաղաքացիների իրավունքները և ընթացակարգեր կառավարության համար՝ այդ պահանջներին արձագանքելու վերաբերյալ, ինչպես նաև բնապահպանական քաղաքականության վերաբերյալ հանրային քննարկումների և պլանավորման որոշումների իրականացման կարգը (երբ և ինչպես) սահմանող համաձայնեցված ուղեցուցային ընթացակարգեր:

ՄԱՍ 4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1 Մեկնաբանություններ և եզրակացություններ

Ընդհանուր առմամբ պարզ է, որ Հայաստանը վերջին տաս տարիների ընթացքում առաջընթաց է գրանցել բնապահպանական և ջրային օրենսդրության բարեփոխման ոլորտում (ի թիվս այլոց) քաղցրահամ ջրային էկոհամակարգերի ավելի լավ պաշտպանության համար: Այդուհանդերձ, չնայած զգալի առաջընթացին և Ջրային օրենսգրքի, Ջրի ազգային քաղաքականության և Ջրի ազգային ծրագրի սահուն իրականացումն ապահովելու համար շուրջ 120 ենթաօրենսդրական ակտերի մշակմանը, ինչպես նաև բազմաթիվ միջազգային բնապահպանական կոնվենցիաներին միանալը, մի շարք իրավական ակտերի միջև առկա են որոշակի անհամապատասխանություններ:

Ավելին, օրենսդրության տեսականի և գործնական իրականացման միջև առկա է անջրպետ: Հետագա հզորացում է անհրաժեշտ իրավական շրջանակի տեսականի իրականացման համար: Մասնավորապես, ՋՌՀԿ համար նոր հիմնադրված հաստատություններից շատերը, օրինակ՝ Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը (ՋՌԿԳ) և Ջրավազանային կառավարման մարմինները (ՋԿՄ) պահանջում են զգալի տեխնիկական և ռեսուրսային աջակցություն: Սա այժմ նույնիսկ ավելի կարևոր է ջրային ոլորտում ի հայտ եկող խնդիրների տեսանկյունից: Դա ներառում է երկրի ջրի (թե որակի, թե քանակի) մոնիտորինգի ցանցի շարունակական վատթարացում, անդրսահմանային խնդիրների վերաբերյալ աճող մտահոգությունները, ջրային թույլտվությունների համակարգում շարունակվող թույլ իրավակիրարկումը (հիմնական կարգավորիչ գործառնությունը), ոչ կայուն ջրօգտագործումը կարևորագույն Արարատի մարզում և ջրային ռեսուրսների թույլ պլանավորումը (ջրավազանային տեսանկյունից):

Թեև ԱՄՆ ՄԶԳ կողմից առաջարկված վերանայված ԳԿՊ մոդելը կառուցվածքի բարելավման ուղղությամբ ճիշտ քայլ էր, ընդհանուր պլանավորման շրջանակում անհրաժեշտ է դիտարկել լրացուցիչ ճշգրտումներ: Այսպես, անհրաժեշտ է երաշխավորել, որ արդյունավետ ջրօգտագործման համար իրավական շրջանակը արժարժում է տարբեր օգտագործողների միջև մրցակցության խնդիրները, չորային եղանակներին մատչելի ջրի առաջարկի ու պահանջարկի հավասարակշռումը, խոնավ շրջաններում ջրհեղեղների արդյունավետ կառավարումը, կլիմայի փոփոխության դիմակայումը և հարմարվողականությունը, ինչպես նաև պաշտպանությունը և պահպանությունը: Ամենակարևորը, ԳԿՊ-ը պետք է հստակ պատկերացում տան, թե ինչպես են ջրային ոլորտի (բոլոր ենթաոլորտների միջև) պլանավորման և ներդրումների տարբեր ընտրանքները կապվում Հայաստանի տնտեսության այլ ոլորտների հետ, ինչպիսիք են էներգետիկան, գյուղատնտեսությունը և հանքարդյունաբերությունը: Այդ պլանավորման ջանքերը ՀՀ կառավարության համար հնարավորություն են ստեղծում ուսումնասիրել ջրային ռեսուրսների տեղաբաշխման սցենարները՝ ներգրավված բոլոր վարչությունների միջոցով:

Ստորև բերված շարադրանքում ամփոփվում է Հայաստանում առկա ներկայիս վիճակը՝ կապված սույն ուսումնասիրությունում վերլուծության ենթարկված հիմնական չափորոշիչների հետ, ինչն ուղեկցվում է որոշ հիմնական եզրակացություններով և առաջարկություններով:

4.1.1 Համադրումը Ջրի շրջանակային դիրեկտիվին

Իրավասու մարմնի սահմանում	Մոտ համարժեքություն
Միջազգային գետերի, լճերի և ափամերձ ջրերի համար վարչական կանոնակարգման սահմանում	Մոտ համարժեքություն
Գետավազանային տարածքների սահմանում	Մոտ համարժեքություն
Գետավազանային տարածքների բնութագրերի վերլուծություն	Մասնակի համարժեքություն
Ջրի որակի մոնիթորինգի համար ծրագրերի սահմանում	Մասնակի համարժեքություն
Գետավազանային պլանների նախապատրաստում	Մասնակի համարժեքություն
Միջոցառումների ծրագրի նախապատրաստում	Ցածր համարժեքություն

Ըստ էության, ազգային օրենսդրության նախագծերը արտացոլում են ՋՇԴ ընդհանուր ինստիտուցիոնալ շրջանակը: Մասնավորապես, սահմանվում է իրավասու մարմինը, որը ապահովված է համընդգրկուն ինստիտուցիոնալ շրջանակով: Թերևս, ինստիտուցիոնալ շրջանակը չափազանց բարդ է, քանի որ առկա են մի շարք մարմիններ, որոնք երբեմն ունենում են համընկնող գործառնություններ, բայց և դժվար է ասել, թե այն «շատ ծանր է», քանի որ հաստատությունները միտում ունեն լինել կենտրոնացված և անմիջապես գետավազանային մակարդակով չեն գործում:

Ինչ վերաբերում է գետավազանային պլանավորմանը, չնայած Հայաստանն այդ ուղղությամբ առաջընթաց է արձանագրում, մինչ օրս այն մեծապես կախված է եղել իրականացվող ծրագրերից: Անհրաժեշտ է պաշտոնապես սահմանել գետավազանային կառավարումը և պլանավորումը:

4.1.2 ՀՀամադրումը Քաղաքային կեղտաջրերի մաքրման դիրեկտիվին

ՔԿՁ հավաքման և մաքրման իրավիճակի գնահատում	Ցածր համարժեքություն
Զգայուն տարածքների և ագլոմերացիաների որոշումը	Ցածր համարժեքություն
Նախորդող կանոնակարգման կամ լիազորման համակարգի սահմանում	Ցածր համարժեքություն
Մոնիթորինգի ծրագրերը	Մասնակի համարժեքություն

Ներկայիս իրավական շրջանակի պայմաններում թերևս քիչ համարժեքություն կա ԵՄ օրենսդրության հետ: Մասնավորապես, չկա ՔԿՁ հավաքման և մաքրման համակարգի մանրամասն գնահատում, իսկ օրենսդրության ներկայումս դրույթները չեն պարունակում զգայուն տարածքների կամ ագլոմերատների որոշման համար: Իրավական և վարչական շրջանակի համապատասխանեցման ուղղված հիմնական միջոցառումները ներառում են՝ քաղաքային կեղտաջրերի հավաքման և մաքրման վիճակի ամբողջական գնահատման իրականացում, այդ գնահատումներից տվյալների դուրս բերման, վերլուծության և փոխանակման համակարգերի պաշտոնական սահմանում այնպես, որպեսզի դրանք հնարավոր լինի կիրառել գետավազանային կառավարման պլանավորման համար, և զգայուն տարածքների և դրանց կառավարման ու մոնիթորինգի ընթացակարգերի որոշում: Ի լրումն, լիզենզավորման միջոցով ներկայիս հսկողության ակնկալվող ընդլայնումը՝ քաղաքային կեղտաջրերի արտանետումների մասով, կարևոր քայլ կլինի աղտոտման վերահսկման համար:

4.1.3 Համադրումը Շրջակա միջավայրի որակի ստանդարտների դիրեկտիվին

Շրջակա միջավայրի որակի ստանդարտների կիրառումը ջրային ռեսուրսների համար	Մոտ համարժեքություն
“Առաջնային” (աղտոտող) նյութերի և կոնցենտրացիաների սահմանաքանակների որոշումը	Մոտ համարժեքություն
Գույքագրում և վերանայում	Ցածր համարժեքություն

Օրենսդրությունը նախատեսում է ջրի որակի ստանդարտների անհրաժեշտությունը և պահանջում ցանկացած չափանիշներին համադրության պարտադիր լինելը: Ավելին, ջրի որակի նորմերը սահմանված են բոլոր գետերի ավազանների համար: Այն ներառում է որակի տարրերը, ինչպիսիք են ջերմաստիճանային պայմանները, թթվածնային, կենսաբանական, հիդրոմորֆոլոգիական, քիմիական և ֆիզիկա-քիմիական, հատուկ սինթետիկ եւ ոչ սինթետիկ աղտոտիչները և այլն: ԵՄ ՁԵԴ-ով սահմանված առաջնային նյութերը նույնպես ընդգրկված են որակի չափանիշների ցանկում: Չնայած նրան, որ Հայաստանում իրականացվում են տարբեր մոնիթորինգային գործողություններ, որոնք կարող են տալ անհրաժեշտ տվյալներ, չկա տվյալների հաշվառման և վերանայման լիարժեք և գործուն համակարգ: Անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել յուրաքանչյուր գետավազանում բոլոր նյութերի և աղտոտիչների համար մոնիթորինգի անընդհատ գործընթաց՝ տվյալները հավաքելու, ապա վերանայելու, թարմացնելու և հաշվառելու համար, այդ թվում՝ առկայության դեպքում արտանետումների, արտահոսքերի և կորուստների քարտեզներ, նստվածքներում պարունակվող կոնցենտրացիաներով և բիոտան:

4.1.4 Համադրումը Նիտրատների դիրեկտիվին

Աղտոտված ջրերի որոշումը և նիտրատներից խոցելի գոտիների սահմանումը	Ցածր համարժեքություն
Միջոցառումների ծրագրի և ՆԽԳ-երի համար գյուղատնտեսական լավ փորձի ձևավորում	Մասնակի համարժեքություն
Մոնիթորինգի ծրագիրը	Մասնակի համարժեքություն

Գոյություն չունի աղտոտված կամ նիտրատներով աղտոտման վտանգի տակ գտնվող ջրերի որոշման համակարգ և, հետևաբար, չկա նիտրատներից խոցելի գոտիների որոշման համակարգ (նիտրատներից խոցելի գոտիների սահմանում հնարավոր չէ): Չնայած Հայաստանում գյուղատնտեսական գործունեության հետ կապված ՆԽԳ-ներ չկան, Կառավարությունը պլանավորում է իրականացնելլավագույն ոռոգման փորձի կիրառման ուղղված ծրագրերը և կիրառել որոշակի նվազագույն ստանդարտներ գյուղատնտեսության մեջ նիտրատների օգտագործման համար, իսկ նիտրատները մոնիթորինգի են ենթարկվում ընդհանուր մոնիթորինգի շրջանակներում:

4.1.5 Համադրումը Զրհեղեղների դիրեկտիվին

Զրհեղեղների նախնական գնահատման իրականացում	Ցածր համարժեքություն
Զրհեղեղների վտանգների քարտեզների պատրաստում, ջրհեղեղների ռիսկերի և այդ ռիսկերի կառավարման պլանների նախապատրաստում	Ցածր համարժեքություն

Թեև անհրաժեշտ է իրականացնել ջրհեղեղների գնահատում, և թեև նախարարությունը պարտասխանատու է այդ գնահատումների իրականացման համար, քիչ բան է արվել դրանց կազմակերպման համար: Ջրհեղեղների վտանգների և ռիսկերի քարտեզների կամ ջրհեղեղների ռիսկերի կառավարման պլանների պատրաստման վերաբերյալ հատուկ իրավական պահանջներ չկան: Ավելին, գործնականում այդպիսի քարտեզների ու պլանների պատրաստման կանոնակարգված կամ համակարգված ընթացակարգեր չկան, չնայած որ տարբեր ուսումնասիրություններ և գնահատումներ են կատարվել հիմնականում տարբեր (դոնոր) ծրագրերի օժանդակությամբ շնորհիվ:

4.1.6 Համադրումը Թոչյունների և բնական միջավայրի դիրեկտիվին

Կենդանատեսակների և բնական միջավայրերի պահպանվող տարածքների սահմանում	Մոտ համարժեքություն
Քաղցրահամ ջրերի վայրերում պահպանվող տարածքների ռեեստրի ստեղծում	Ցածր համարժեքություն
Կենդանատեսակների և բնական միջավայրերի մշտադիտարկման իրականացում	Մասնակի համարժեքություն

Պահպանվող տարածքների համակարգն առկա է և սահմանվում է մի շարք օրենսդրական ակտերով, սակայն պահպանության ընդհանուր համակարգը ամբողջությամբ չի արտացոլում ԵՄ օրենսդրությունը: Մասնավորապես, չկան մանրամասն ընթացակարգեր պահպանվող տարածքների, կենդանատեսակների ու բնական միջավայրի գնահատման և սահմանման համար: Չնայած օրենսդրությամբ պահանջվում է ստեղծել պահպանվող կենդանական ու բուսական աշխարհի պետական հաշվառում, նման հաշվառում գրեթե չի վարվում մինչ այժմ և, ամեն դեպքում, քաղցրահամ ջրերի պահպանվող տարածքների ռեեստր գոյություն չունի: Պաշտպանված կենդանատեսակների ու բնական միջավայրերի մոնիտորինգի և անհրաժեշտության դեպքում իրավակիրարկման միջոցառումների ձեռնարկման համակարգեր գոյություն ունեն, սակայն այդ դրույթների իրականացման համար մանրամասն պահանջներ չեն սահմանվել, և գործնականում դրանց իրականացումը կանոնավոր բնույթ չի կրում:

4.1.7 Համադրումն այլ օրենսդրությանը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում	Մոտ համարժեքություն
Ռազմավարական էկոլոգիական գնահատում	Մասնակի համարժեքություն
Հանրության մասնակցություն և տեղեկատվության մատչելիություն	Մասնակի համարժեքություն

ՇՄԱԳՓ օրենքը (հիմնականում) ապահովում է այնպիսի շրջանակ, որի միջոցով Հայաստանում կարող են մշակվել ՇՄԱԳ արդյունավետ (ՇՄԱԳ-ի վերաբերյալ ԵՄ դիրեկտիվի և Կոնվենցիայի պահանջների համապատասխան) համակարգեր: Այդուհանդերձ, առավել առավել մանրամասն ընթացակարգեր պետք է մշակվեն, մասնավորապես տեղեկատվությունը մատչելի դարձնելու, էկոլոգիական հաշվետվությունը հրապարակելու, ՇՄԱԳ գործընթացում հանրային մասնակցությունն ապահովելու և որոշումների վերանայման ու հրապարակման հարցերում կառավարության դերը և պարտականությունները սահմանելու համար:

4.2 Առաջարկություններ

Առաջարկություն 1 | Ամրապնդել գետավազանային կառավարման պլանավորումը, այդ թվում ձևակերպելով իրավական հիմքերը

Չնայած դոնոր կազմակերպությունների կողմից տարբեր նախաձեռնություններին ցուցաբերված օժանդակությունը, Հայաստանի ջրային ոլորտը դեռևս կանգնած է շատ մարտահրավերների առջև: ԳԿ պլանավորման առումով: Այդ ուղղությամբ վճռորոշ առաջարկությունը վերաբերում է ԳԿ պլանավորման իրավական հիմքերի պաշտոնական ձևակերպմանը: Ներկայումս, պլանները մշակվում են ոչ պաշտոնական ձևաչափով՝ ծրագրային միջոցառումների շրջանակներում, սակայն ԳԿ-երի մշակման, մշակման համար միջոցների հատկացման և դրանց հաստատման, պլանների ձևի ու բովանդակության, դրանց իրավական ուժի վերաբերյալ պահանջները պետք է սահմանված լինեն օրենսդրությամբ: Այդ պլանների հաստատումը կառավարության կողմից անհրաժեշտ է ապահովելու համար, որ կառավարման բոլոր օղակներն ունեն պլանավորման կառուցողական տեսլական և ապագա ներդրումների գերակայությունների վերաբերյալ հստակ պատկերացում:

Ի լրումն, առաջարկվում է նաև հետևյալը՝

- Մոդելավորման և պլանավորման աշխատանքների իրականացման համար հմտությունների և տվյալների ձևավորում, որոնք ներկայումս գետավազանային կառավարման մարմիններում (ԳԿՄ) պատշաճ մակարդակի վրա չեն:
- Անհրաժեշտ է զարգացնել միջորոշորտային պլանավորման կարիքների ավելի լայն շրջանակ, որը հաշվի

կառնի քաղաքային, գյուղատնտեսական, էներգետիկ և բնապահպանական կապերը, իսկ պատասխանատու բազմաթիվ կառույցները բավարար չեն:

- ՇՇԴ-ում նախատեսված գնահատումները պետք է իրականացվեն, որպեսզի ավելի լավ պատկերացում ձևավորվի քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի և դրանց վրա մարդկան գործունեության ազդեցությունների վիճակի վերաբերյալ: Մասնավորապես, անհրաժեշտ է վերլուծել և պատկերացում կազմել, թե որք կլինի գետավազանում տարբեր ջրօգտագործողների համար լավագույն տեղաբաշխումը (թե տնտեսական, թե արդյունավետության առումով):
- Պետական բյուջեի ֆինանսավորման բացակայությունը կարող է ի չիք դարձնել ընթացիկ պլանավորման ջանքերը և ԳԿՄ-ի լիարժեք մասնակցությունը գետավազանային պլանավորմանը: Ջրերի լավ էկոլոգիական կարգավիճակն ապահովելու համար քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի պահպանության գերակայությունը և այլ ասպեկտները հաստատելու համար, ինչպես նաև պատշաճ ֆինանսավորման համար քաղաքական աջակցություն ձեռք բերելու նպատակով ճիգեր պետք է գործադրվեն:

Առաջարկություն 2 | Ջրի քանակի և որակի մոնիթորինգի բարելավում

Ընդհանուր առմամբ, մակերևութային և ստորգետնյա ջրերի քանակի ու որակի մոնիթորինգի միջոցառումների համակարգման ու ներդաշնակեցման բարելավումը վճռորոշ կարևորություն ունի: Ջրի քանակի ու որակի վերաբերյալ վստահելի, ժամանակին, լավ որակի ու հանրորեն մատչելի տվյալների ձեռքբերումը ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման ու պլանավորման գործուն համակարգի նախագուշակն է: Ջրի որակի ու քանակի մոնիթորինգի բարելավման համար անհրաժեշտ է՝

- Արաքս անդրասիանային գետի և երկրի լճերի ու ջրամբարների համար անհրաժեշտ է սահմանել մակերևութային ջրերի որակի նորմերը: Ի լրումն, կարիք կա մշակել միջազգայնորեն ընդունելի ջրի որակի ստանդարտներ ստորգետնյա ջրային ռեսուրսների համար:
- Անհրաժեշտ է գնահատել մոնիթորինգի ենթակառուցվածքի նորացված ներդրումային կարիքները (այդ թվում՝ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման)՝ տվյալների հավաքման, ստուգման և կառավարման նորագույն տեխնոլոգիաների ու մոտեցումների ներդրման հնարավորությունների դիտարկմամբ: Շատ դեպքերում, սարքավորումները ևս կարող են արդիականացվել՝ առավել լավ ավտոմատացմամբ և իրական ժամանակահատվածի մոնիթորինգով:
- Մոնիթորինգի համար պատասխանատու տարբեր ստորաբաժանումների միջև համակարգման ու ներդաշնակեցման բարելավումներն անհրաժեշտ են, որպեսզի բացառվեն կրկնությունները և հավաքագրված տեղեկատվությունը առավել լայն հասանելի լինի: Դա կարող է ներառել համախմբված մոնիթորինգային մոտեցումների կիրառումը, ինչպես օրինակ ջրի որակի և քանակի համատեղ կայանները:
- Որպես ավելի մեծ ինտեգրման նախապայման, անհրաժեշտ է մշակել մոնիթորինգի ռազմավարություն և ազգային ծրագիր, որը կներառի մոնիթորինգի ծառայությունների տարածքային միավորների տեխնիկական հզորությունների բարելավումը, կարիքների գնահատումը, կառուցվածքային բարելավումները և տեխնիկական արդիականացումը, ինչպես նաև էլեկտրոնային տվյալների փոխանակման համակարգի ստեղծումը:

Առաջարկություն 3 | Քաղաքային և գյուղական կեղտաջրերի կառավարման բարելավում

Չնայած քաղցրահամ ջրային էկոհամակարգ կեղտաջրերի արտահոսքի ազդեցությունը հստակ չի գնահատվել, պարզ է որ անհրաժեշտ է բարելավել կեղտաջրերի հավաքումը և մաքրումը: Հիմնական առաջարկություններն են՝

- Կեղտաջրերի մաքրման կայանների վերականգնման և արդիականացման համար մեծ ներդրումների անհրաժեշտության հաստատում
- Կեղտաջրերի ջրատարների կառուցում այն փողոցներում, որոնք չունեն ջրահեռացում, կեղտաջրերի հավաքման համար վճարման պատրաստակամություն ունեցող տնային տնտեսությունների միացում ջրահեռացման ցանցին.
- Հասարակ և հեշտ շահագործվող կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում (թե համայնքի բնակիչները կցանկանային վճարել ջրի համար ավելի մեծ գումար՝ էկոլոգիական պայմանների բարելավման դեպքում): Լավ տարբերակ կարող է այստեղ լինել կենսաբանական մաքրման ջրավազանների օգտագործումը:

Առաջարկություն 4 | Շրջակա միջավայրի որակի տվյալների գույքագրման կանոնավոր գործընթացի մշակում

Չնայած նրան, որ օրենսդրությամբ տարբեր մոնիթորինգային գործողություններ են նախատեսված ջրում աղտոտող նյութերի մշտադիտարկման և սահմանափակումների համար, չկա գույքագրման և վերանայման լիարժեք և գործող համակարգ: Անհրաժեշտ է ունենալ պարբերաբար թարմացվող հաշվառում, որը թույլ

կտա արդյունավետ որոշումներ կայացնել քաղաքականության մշակման, պլանավորման և լիցենզավորման ժամանակ: Անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել յուրաքանչյուր գետավազանում բոլոր նյութերի և աղտոտիչների համար մոնիթորինգի անընդհատ գործընթաց՝ տվյալները հավաքելու, ապա վերանայելու, թարմացնելու և հաշվառելու համար, այդ թվում՝ առկայության դեպքում արտանետումների, արտահոսքերի և կորուստների քարտեզներ, նստվածքներում պարունակվող կոնցենտրացիաներով և բիոտան:

Առաջարկություն 5 | Վարարումների և աղետների ռիսկի գնահատման և կառավարման (ԱՌԳԿ) խթանում

Ջրհեղեղների ռիսկերի և դրանց հետևանքների մեղմացման պլանները պետք է առավել բարձր գերակայություն ունենան Աղետների ռիսկերի գնահատման և կառավարման ազգային ծրագրում: Աղետների ՌԿ արդյունավետ մեխանիզմները Հայաստանում պետք է իրականացվեն չորս ուղղություններով՝ օրենսդրության բարելավում, անհրաժեշտ տվյալների բազայի ստեղծում և հետագա վարում, աղետների հետևանքների որոշման մեթոդների ընտրություն և ԱՌԿ մոդելավորում:

Առաջարկություն 6 | Լիցենզավորման և վերահսկման կատարելագործում

Քանի որ թույլտվությունների տրամադրման գործընթացը ՋՌՀԿ հիմնական կանոնակարգող գործիքն է, անհրաժեշտ է բարելավել Ջրային թույլտվությունների համակարգը: Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը (ՋՌԿԳ) թույլտվությունների տրամադրման համար պատասխանատու մարմինն է: Ակնկալվում է, որ այդ գործառնությունը պետք է վերապահվի ջրավազանային կառավարման մարմիններին (ՋԿՄ)՝ դրանց կարողությունների զարգացմանը զուգընթաց: Ջրային թույլտվությունների պահանջներին համապատասխանության ապահովումը ներկայումս անբավարար մակարդակի վրա է՝ նախնառաջ ռեսուրսների բացակայության և գործակալության կարողությունների պատճառով:

Համապատասխանության ապահովումը ներառում է մոնիթորինգի գործառնությունը և իրավակիրարկման միջոցառումների իրականացման գործառնությունը: Այդ դերերն ու պատասխանատվությունները տարանջատված են ներկայիս իրավական շրջանակով: ՋՌԿԳ և ԲՊՏ տեսչական և իրավակիրարկման գործառնությունների միջև անհրաժեշտ է ապահովել ավելի մեծ համագործակցություն (ցանկալի է օրենսդրորեն սահմանել)՝ գործառնությունների կրկնությունն ու համընկնումը բացառելու և մոնիթորինգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Թույլտվությունների տրամադրման գործընթացի առավել պարզ հատվածը պետք է կազմված լինի համապատասխանության պատմությունից: Համապատասխանության խթանումը (և առավել վստահելի ինքնավերահսկումը) թույլ հիմքերի վրա է դրված: Զրոգտագործման և կեղտաջրերի արտահոսքի չափերի դասակարգումը, այդ թվում՝ այնպիսի սահմանաչափի սահմանումը, որի համար ջրոգտագործման թույլտվություն (ԶԹ) չի պահանջվում, կօգնի բարձրացնել գործակալության արդյունավետությունը:

Առաջարկություն 7 | Արդյունաբերության ոլորտում ուժեղ աշխատանքային գործընկերային հարաբերությունների մշակում

- Անկախ որևէ օրենսդրական, կարգավորման, տեխնիկական կամ կառավարման փոփոխություններ, որոնք կարող են ներկայացվել, գործնական մակարդակում կարևոր է, որ պետական մարմինները բարելավեն իրենց հարաբերությունները արդյունաբերության ներկայացուցիչների հետ և որ արդյունաբերությունը ավելի լավ հասկանա, որ անհրաժեշտ է պահպանել շրջակա միջավայրը և այն տրամաբանությունը (այդ թվում՝ սեփական օգուտները), որ պետք է իրականացնել բնապահպանական միջոցառումները: Ընդհանուր առմամբ, դրան կարելի է հասնել համապատասխան պատասխանատու նախարարություններում (Էներգետիկայի և բնական պաշարների, Էկոնոմիկայի և Բնապահպանության) բարելավելով համագործակցությունը և կադրերի հետ աշխատանքը: Սակայն այստեղ կան ևս հատուկ քայլեր, որ պետք է կատարվեն, օրինակ՝ բարելավել մոնիթորինգի իրականացման ընթացակարգերը, իրավակիրարկումը և տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և բացահայտումը, միասին աշխատելով մշակել ոլորտային ուղեցույցներ, կիրառել Շրջակա միջավայրի կառավարման համակարգեր (ՇՄԿՀ) և լավագույն փորձը: Նման փորձը կարող է ուղղված լինել հիմնական աղտոտող աղբյուրների և/կամ ոլորտների վրա, օրինակ՝ ձևավորել արդյունաբերական թափոնների, հարմարությունների և պաշարման վայրերի սահուն Էկոլոգիական կառավարում, ստեղծել արդյունաբերական թափոնների/ հանքարդյունաբերության պոչանքների վայրի ու պաշարման հարմարությունների հաշվառում, և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Water Resources Management in Armenia, National Report
2. Fourth National Report to the Convention on Biological Diversity Republic of Armenia, 2009
3. Guidance Document n°31, Ecological flows in the implementation of the Water Framework Directive, February 2015
4. Europe's environment — An Assessment of Assessments. Water and Related Ecosystems
5. ԱՂԵՏՆԵՐԻՌԻՍԿԵՐԻԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ. Ուսումնասիրողական ձեռնարկ, Հայաստան, Երևան, 2011
6. Mining in Armenia, ZOİ REPORT 3/2012
7. “Debed Pilot River Basin Management Plan – Armenia” (2011), prepared in the framework of the “Trans- Boundary River Management Phase II for the Kura River –Armenia, Georgia, Azerbaijan” EU Project (2007/1341398).
8. Republic of Armenia. Water Sector Note. Report No.: 61317-AM, Sustainable Development Department Europe and Central Asia Region, The World Bank, May 2011
9. USAID Clean Energy and Water Program. Needs and Opportunities Assessment Report for Selection of Demonstration Projects, August 2012
10. USAID Clean Energy and Water Program. Assessment Study of Ground Water Resources of Ararat Valley: Progress and Next Steps, October, 2012
11. USAID Clean Energy and Water Program. Conceptual Framework for River Basin Management Planning Process, June, 2012
12. Armenia: Enhancing Environmental and Social Sustainability of Mining in Armenia; IBRD/WB, June 2014
13. «Рациональное использование вторичного сырья и отходов в птицеводческой отрасли Республики Армения», Международная конференция «Практические решения по рациональному использованию сырья и вторичных продуктов в птицеводческом комплексе» - Степанян Сергей Галустович – председатель Союза птицеводов Армении; 17 марта 2015 г.
14. Development of Environmental Flow Assessment Methodology for the RA Rivers: Using the example of Argichi River Basin, May 2015
15. Study on Institutional and Legislative frameworks of Disaster Management in Armenia. UNDP, Armenia, 2009.
16. Final Report on Country Situation Review in the Context of National Disaster Risk Assessment and Management in Armenia
17. Guidelines for Groundwater monitoring in the Pilot Rivers of Caucasus Countries (Armenia, Azerbaijan and Georgia), EPIRB Contract No 2011/279-666, May 2014
18. The EU Directive on the management of waste from extractive industries. J Rizo , European Commission DG ENVI- RONMENT Brussels, June 2014
19. Toward Integrated Water Resources Management in Armenia, Winston Yu, Rita E. Cestti, and Ju Young Lee, 2015 International Bank for Reconstruction and Development
20. RIVER BASIN MANAGEMENT PLAN FOR AKHURYAN BASIN MANAGEMENT AREA (AKHURYAN AND MET- SAMOR RIVER BASINS) WATER BODY AT RISK REPORT, September 2014
21. Քաջարյան ք. Էկոլոգիական իրավիճակի հետազոտում, ՀՀ գիտությունների Ազգային Ակադեմիա, Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն, Երևան 2005
22. Հանքարդյունաբերության պոչամբարների և Կապանի պղնձի կոմբինատի գործունեության ազդեցության գնահատումը Կապան քաղաքի շրջակա միջավայրի վրա (Սյունիքի մարզ), ՀՀ գիտությունների Ազգային Ակադեմիա, Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն, Երևան 2007
23. www.parliament.am
24. www.arlis.am
25. <http://netedu.xauat.edu.cn/jpkc/netedu/jpkc2009/szylybyh/content/wlzy/2/Armenia.pdf>
26. file:///C:/Users/UserH/Downloads/2_water.pdf
27. <http://www.unece.org/fileadmin/DAM/env/europe/monitoring/Armenia/en/Part%20I%20-%20Ch.3.pdf>
28. http://www.gwp.org/Global/GWP-CACENA_Files/en/pdf/armenia.pdf
29. <https://openknowledge.worldbank.org/handle/10986/20459>
30. <http://armwater.am/en/home.html>
31. http://www.kura-aras.org/EU-Armenian_Language_files/Water_Quality_Assessment_Guideline_Document_Draft%20Final_ARMENIAN.pdf

WWF կովկասյան
ծրագրերի գրասենյակ
11, Մ. Ալեքսիձե փողոց,
0193, Թբիլիսի, Վրաստան
Հեռ: (+995 32) 2237500
www.panda.org/caucasus

WWF Հայաստան
11/1 Պռոշյան փողոց,
0019, Երևան, Հայաստան
Հեռ: (+374 10) 54 61 56
www.panda.org/armenia

WWF Գերմանիա
Ռեյնհարդ փողոց, 18
10117 Բեռլին
Հեռ.: 030 311777-700
<http://www.wwf.de>

+100

WWF is active in over 100 countries, on 5 continents

+5000

WWF has over 5000 staff worldwide



+5M

WWF has over 5 million supporters

1961

WWF was founded in 1961



Why we are here

To stop the degradation of the planet's natural environment and to build a future in which humans live in harmony and nature.